

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**  
**YEREVAN STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**  
**ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**  
**ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА**  
**ФИЛОЛОГИЯ**  
**JOURNAL OF YEREVAN UNIVERSITY**  
**PHILOLOGY**

**ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ**  
**«Արեղյանական ընթերցումներ» հանրապետական**  
**4-րդ գիտաժողովի նյութեր (22 նոյեմբերի, 2023 թ.)**

**СПЕЦИАЛЬНЫЙ ВЫПУСК**  
**Материалы 4-й республиканской конференции**  
**«Абегяновские чтения» (22 ноября 2023 г.)**

**SPECIAL EDITION**  
**Materials of the 4th Republican conference**  
**«Abegyan readings» (November 22, 2023)**



**[ YEREVAN STATE  
UNIVERSITY ]  
PUBLISHING HOUSE**

«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Երավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի  
Журнал "Вестник Ереванского университета. Филология" выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета"  
Three issues of "Journal of Yerevan University. Philology" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009  
<https://journals.y-su.am/>

**Խմբագրական խորհուրդ.**

**Редакционная коллегия:**

**Editorial Board:**

**Գլխավոր խմբագիր՝**

**Главный редактор:**

**Editor-in-chief:**

**Ավետիսյան Լևոն** (բ.գ.թ., դոց.,  
*L.avetisyan@ysu.am*)

**Аветисян Левон** (к.фил.н., доц.)

**Avetisyan Levon** (Ph.D. in Philology,  
Associate Professor)

**Ավետիսյան Յուրի** (բ.գ.դ.,

*yuriavetisyan@ysu.am*)

**Аветисян Юрий** (д.фил.н., проф.)

**Avetisyan Yuri** (Sc. D. in Philology,  
Professor)

**Գասպարյան Սեդա** (բ.գ.դ., պրոֆ., ԳԱԱ  
*թղթակից անդամ, sedagasparyan@ysu.am*)

**Гаспарян Седя** (д.фил.н., проф., член.кор.  
НАН РА)

**Gasparyan Seda** (Sc. D. in Philology,  
Professor, NAS RA Corresponding Member)

**Վաստիսյան Վիկտոր** (բ.գ.դ., պրոֆ.,  
*viktorkatvalyan@mail.ru*)

**Катвалян Виктор** (д.фил.н., проф.)

**Katvalyan Victor** (Sc. D. in Philology,  
Professor)

**Շախապետյան Շուշան** (բ.գ.թ., ԱՄՆ,  
*shushankarapetian@gmail.com*)

**Карапегян Шушан** (к.фил.н., США)

**Karapetyan Shushan** (Ph.D. in Philology, USA)

**Հովակիմյան Արմեն** (պատմապի. խմբագրի  
*տեղակալ, բ.գ.թ., a.hovakimyan@ysu.am*)

**Овакимян Армен** (зам. ответ. редактора,  
к.фил.н.)

**Hovakimyan Armen** (Deputy Managing  
Editor, Ph.D. in Philology)

**Սարգսյան Վարդան** (պ.գ.թ., ԱՄՆ,  
*varny1@yahoo.com*)

**Маттеосян Вардан** (к.ист.н., США)

**Matteosyan Vardan** (Ph.D. in History, USA)

**Մարտիրոսյան Հրաչ** (բ.գ.թ., Նիդերլանդներ,  
*hrchmartirosyan@gmail.com*)

**Мартirosян Грач** (к.фил.н., Нидерланды)

**Martirosyan Hrach** (Ph.D. in Philology,  
Netherlands)

**Մուրադյան Գայանե** (բ.գ.դ., պրոֆ.,  
*g.murad@ysu.am*)

**Мурадян Гаяне** (д.фил.н., проф.)

**Muradyan Gayane** (Sc. D. in Philology,  
Professor)

**Ոսկանյան Վարդան** (բ.գ.դ., պրոֆ.,  
*vardan.voskanian@ysu.am*)

**Восканян Вардан** (д.фил.н., проф.)

**Voskanyan Vardan** (Sc. D. in Philology,  
Professor)

**Հոպոչյան Հակոբ** (պ.գ.դ., Միջին,  
*hagopcholakian@hotmail.com*)

**Чолакян Агоп** (д.ист.н., Сирия)

**Cholakyan Hakob** (Sc. D. in History, Syria)

**Պետրոսյան Դավիթ** (բ.գ.դ., պրոֆ.,  
*davidpetrosyan@ysu.am*)

**Петросян Давид** (д.фил.н., проф.)

**Petrosyan David** (Sc. D. in Philology,  
Professor)

**Բալանթարյան Ժենյա** (բ.գ.դ.,  
*պրոֆ., j.kalantaryan@ysu.am*)

**Калантарян Жения** (д.фил.н., проф.)

**Kalantaryan Zhenia** (Sc. D. in Philology,  
Professor)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ \* СОДЕРЖАНИЕ \* CONTENTS

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ  
ЯЗЫКОЗНАНИЕ  
LINGUISTICS

<i>Հովհաննես Հովհաննիսյան</i> – Ողջույնի խոսք .....	5
<i>Оганнес Оганнисян</i> – Приветственное слово	
<i>Hovhannes Hovhannisyán</i> – Welcome speech	
<i>Սննա Արաջյան</i> – Մանուկ Աբեղյանի «Ռուս-հայերեն իրավաբանական անձեռն բառարանը» .....	6
<i>Анна Абаджян</i> – «Русско-армянский карманный юридический словарь» Манука Абегиана	
<i>Анна Абажан</i> – Manuk Abeghyan's "Russian-Armenian Legal Manual Dictionary"	
<i>Զարիկ Աղաջանյան</i> – Անհատի լեզուն արեղյանական լեզվականության մասն գուգահեռներում .....	16
<i>Зарик Агаджанян</i> – Язык личности в параллелях языковой стандартизации Абегиана	
<i>Zarik Aghajanyan</i> – The Language of the Individual in the Parallels of Abeghyan's Language Standardization	
<i>Սարգիս Ավետյան</i> – Արևելահայերենի բայի եղանակների արեղյանական մեկնաբանությունը՝ դիտարկված արդի լեզվաբանության տեսանկյունից .....	34
<i>Саргис Аветян</i> – Трактовка Абегианом наклонений глагола в восточно-армянском языке, рассмотренная с точки зрения современной лингвистики	
<i>Sargis Avetyan</i> – Abeghyan's Interpretation of Verb Moods in Eastern Armenian, Considered from the Viewpoint of Modern Linguistics	
<i>Նարինե Դիլբարյան</i> – Գրաբարի ուսուցման մեթոդական հիմքերը Ս. Աբեղյանի դասագրքերում .....	45
<i>Нарине Дилбарян</i> – Методические основы преподавания древнеармянского языка в учебниках М. Абегиана	
<i>Narine Dilbaryan</i> – Methodical Principles of Teaching Ancient Armenian Language in Textbooks of M. Abeghyan	

- Հայկանուշ Մեսրոպյան* – Կոմիտաս վարդապետի և Մանուկ Աբեղյանի գրած խաղիկներում գործածված բուսանունների իմաստային-գործառական առանձնահատկությունները..... 54
- Айкануш Месропян* – Функционально-семантическая характеристика названий растений, используемых в народном песеннике Комитаса Вардапета и Манука Абегиана
- Haykanush Mesropyan* – Functional-Semantic Characteristics of Plant Names Used in the Folk Songbook of Komitas Vardapet and Manuk Abeghyan

**ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱԴՎՈՒՄ**  
**ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЕ**  
**DISCUSSION AND DEBATE**

- Բազրատ Ներսիսյան* – Մանուկ Աբեղյանը գրական արևելահայերենի քերականության տեսարան..... 67
- Баграг Нерсисян* – Манук Абегиан - теоретик грамматики восточно-армянского литературного языка
- Bagrat Nersisyan* – Manuk Abeghyan, a Theorist of the Grammar of the Eastern Armenian Literary Language

**«ԱԲԵՂՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»**  
**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ 4-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ (2023 թ., 22 նոյեմբերի)**  
**ՈՂՋՈՒՑՆԻ ԽՈՍՔ**

Հարգելի՛ բարեկամներ:

Ողջունում եմ ականավոր հայագետ, լեզվաբան, բանագետ, գրականագետ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Մանուկ Աբեղյանին նվիրված հանրապետական չորրորդ գիտաժողովի և «Հուշարձան Մանուկ Աբեղյանին» գրքի շնորհանդեսի մասնակիցներին:

Խորաթափանց քննական մտքով, երկայթյա տրամաբանական դատողությունների հզոր ուժով, բազմաբեղուն աշխատասիրությամբ օժտված գիտնականը, իր ուսումնասիրությունների նյութը դարձնելով հայոց լեզուն, առավելապես գրական հայերենը, հայ հին ու միջին դարերի մատենագրությունը, հայ ժողովրդական բանահյուսությունը, ստեղծել է մեծարժեք աշխատություններ, որոնք ընդմիջտ մտել են հայագիտության ոսկե ֆոնդը:

Մ. Աբեղյանը, իրավամբ, հայ գիտական քերականության հիմնադիրն է: Նրա լեզվաբանական աշխատությունները մնայուն ու կոթողային գործեր են: Մեծատաղանդ հայագետը նաև հմուտ բառարանագիր է ու գրաբարագետ, արևելահայերենի արդի ուղղագրության հիմնադիր: Նույնքան արժեքավոր են նրա գրականագիտական հետազոտությունները: Հայագիտության վիթխարի կադին, ինչպես անվանել է նրան ակադեմիկոս Արամ Ղանալանյանը, անուրանալի ավանդ ունի հայ ժողովրդական բանահյուսության, հայկական տաղաչափության ուսումնասիրության բնագավառներում ևս:

Մեզ համար առանձնահատուկ է մեծ հայագետի դերը նաև որպես համալսարանական:

Մ. Աբեղյանը Երևանի պետական համալսարանի, ինչպես և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադիր գիտնականներից մեկն է: Երկար տարիներ զբաղվելով մանկավարժական բեղմնավոր գործունեությամբ՝ նա կրթել է բանասերների բազում սերունդներ: Նրա բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի վիթխարի դերն ու վաստակը նաև համալսարանական գիտության զարգացման բնագավառում:

Ա. Աբաջյանի կազմած «Հուշարձան Մանուկ Աբեղյանին» ժողովածուի լույսընծայման փաստն ինքնին գնահատանքի, արժևորման ու մեծարանքի յուրատեսակ մի առհավատյա է՝ ուղղված մեծ գիտնականին:

Դատելով գիտաժողովի ծրագրից, դրանում արժարժվող խնդիրների կարևորությունից և արդիականությունից՝ լիահույս եմ, որ քննարկումները կլինեն արդյունավետ և շահեկան: Բոլորիդ մաղթում եմ ստեղծագործական բեղմնավոր աշխատանք...

**Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
**ԵՊՀ ռեկտոր**

## ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ «ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆԸ»

ԱՆՆԱ ԱԲԱՋՅԱՆ\* 

Երևանի պետական համալսարան

«Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարանը» ռուսերենին առնչվող առաջին մասնագիտական բառարանն է՝ հավաքական մտավոր աշխատանքի եզակի օրինակ: Նախքան սույն բառարանի ստեղծվելը չկար իրավաբանական որևէ բառարան: Գրաբարն էլ աղքատ էր իրավաբանական տերմիններից, որից կարողանային օգտվել հեղինակները, ուստի անհրաժեշտություն էր առաջացել ստեղծելու նոր բառեր:

Բառարանի շուրջ 1324 բառական միավորից (մեր հաշվումներով՝ Ա.Ա.) ավելի քան 360-ը կա՛մ նոր տերմիններ են՝ նորաբանություններ, կա՛մ նորաձևություններ (գործածական բառերի կրճատումներ, ձևափոխություններ), կա՛մ էլ հնաբանություններ:

Բառարանի կարևորագույն արժանիքներից են.

ա) Հեղինակներն աշխատել են ռուսերեն յուրաքանչյուր տերմինի դիմաց անպայման դնել հայերեն այնպիսի բառ, որը ճշգրտորեն կարտահայտի ռուսերեն տերմինի իմաստը:

բ) Բառարանը կազմողները հնարավորինս խուսափել են ռուսերեն մի քանի տերմին հայերեն միևնույն բառով թարգմանելուց:

«Ռուս- հայերեն իրավաբանական առձեռն բառարանը» (1919) բռնեց ժամանակի քննությունը՝ մեծապես նպաստելով հայ իրավաբանական մտքի զարգացմանը: Բազմաթիվ բառեր մտան շրջանառության մեջ, ինչպես՝ *иск-հայց*, *истец-հայցվոր*, *аренда-վարձակալություն*, *аванс-կանխավճար*, *арест личный-կալանք*, *арест имущества-արգելանք*, *квитанция-անդորրագիր*, *контора-գրասենյակ*, *копия-պատճեն*, *депозит-ավանդ* և այլն:

\* **Աննա Աբաջյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ

**Анна Абаджян** – доктор филологических наук, профессор, заведующая кафедрой истории армянского языка и общего языкознания ЕГУ

**Anna Abajyan** – Sc. D. in Philology, Professor, Head of Chair of History of the Armenian Language and General Linguistics YSU

Էլ. փոստ՝ [abajyan.anna@ysu.am](mailto:abajyan.anna@ysu.am) ORCID: <https://orcid.org/0000-0003-3728-0862>

*Սույն աշխատանքի որոշ դրույթներ տեղ են գտել մեր՝ «Մանուկ Աբեղյանը բառարանագիր» հոդվածում (տե՛ս Լեզու և լեզվաբանություն, 2019, №1, էջ 22-30):*



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 06.02.2024

Գրախոսվել է՝ 14.02.2024

Հաստատվել է՝ 14.02.2024

© The Author(s) 2024

**Keywords:** *իրավաբանական բառարան, դատարան, գրաբար, բառաստեղծում, նորակազմություն, թարգմանություն, հայցվոր, կալանավոր, ապահարզան, ռեցիդիվ, ալիբի*

Հայտնի է, որ գրական լեզվի մշակման, կատարելագործման, բառապաշարի հարստացման գործում չափազանց կարևոր է ինչպես լեզվի քերականական կառուցվածքի ուսումնասիրությունը, այնպես էլ նոր բառարանների ստեղծումը:

Ականավոր հայագետ Մ. Աբեղյանը, հայոց լեզվին նվիրված իր դասական հիմնարար ուսումնասիրություններից զատ, ծանրակշիռ վաստակ ունի նաև բառարանագրության ասպարեզում: Այս ոլորտում Մ. Աբեղյանի առաջին փորձը եղել է «Աշխարհաբար առանձին բառերի համար բացատրական բառարանը»՝ կազմված 1882 թ.<sup>1</sup>:

Մ. Աբեղյանի (կամ նրա հեղինակակցությամբ) կազմած բառարանները՝ «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան» (1919 թ., Տ. Հովհաննիսյանի, Ս. Մալխասյանի հեղինակակցությամբ), «Ռուս-հայերեն ռազմական բառարան» (1925 թ., կազմի վրա՝ 1927 թ.), «Երկաթուղային տերմինների բառարան» (Հ. Աճառյանի և Գ. Ղափանցյանի հեղինակակցությամբ), «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարան» (1930-ական թթ., Լ. Հովհաննիսյանի և Ա. Տեր-Պողոսյանի հեղինակակցությամբ), «Գրաֆիկ արվեստների և քանդակագործության տերմինների բառարան» (Գ. Լևոնյանի և Դ. Դեմիրճյանի հեղինակակցությամբ. ձեռագիրը պահվում է ԳԱ արվեստի ինստիտուտում) գիտական ծանրակշիռ ավանդ են հայ բառարանագրության, ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման, տերմինաբանության զարգացման ասպարեզում և մեծապես նպաստել են հայ գիտության զարգացմանը: Լինելով հայերենի բոլոր դրսևորումների փայլուն մասնագետ, բազմադարյա հայ մշակույթի լավագույն գիտակ՝ Մ. Աբեղյանը, իրավամբ, ստեղծագործական մոտեցում է հանդես բերել օտար բառերի թարգմանության հարցերում՝ մեր հարուստ մատենագրությունից կենդանացնելով բազմաթիվ մեռած բառեր կամ էլ արարելով նորերը՝ կատարելապես տիրապետելով հայերենի բառակազմության օրինաչափություններին:

1918 թվականից սկսած՝ պետական գրական լեզվի մշակման խնդիրը դարձել էր ժամանակի հրամայական, և ահա 1918-1930-ական թվականները Մ. Աբեղյանի գիտական գործունեության մեջ նշանավորվում են լեզվաշինարարական արդյունավետ աշխատանքներով, որոնք մեծապես նպաստեցին մեր լեզվի մշակմանն ու կանոնավորմանը:

Աբեղյան բառարանագրի բուռն գործունեությունը սկսվում է 1919 թվականից, երբ նա եռանդուն մասնակցում էր հայ գրական լեզվի տերմինաբանական կոմիտեի աշխատանքներին: Ինչպես նշում է Հ. Ամայանը, նոր շրջանի՝ 19-րդ դարի առաջին կեսին ծաղկում ապրող հայ բառարանագրությունը կոչված էր

<sup>1</sup> Տե՛ս ԳԱԹ, Մ. Աբեղյանի ֆոնդ, № 490:

բավարարելու բուռն թափով զարգացող հայագիտության պահանջները, մինչդեռ հրապարակի վրա մասնագիտական, տերմինաբանական բառարանները հազվադեպ էին<sup>2</sup>, մի բան, որի կարիքը խիստ հրատապ ու անխուսափելի էր: Եղած մասնագիտական բառարաններից կարող ենք հիշատակել Ալիշանի «Հայբուսակը», Քաջունու «Բառգիրք արուեստից եւ գեղեցիկ դպրութեան» եռահատոր աշխատությունը, Էփրիկյանի «Պատկերազարդ բնաշխարհիկը», Տաղավարյանի «Ֆրանսերենից հայերեն ախտանվանց բառացուցակը»: Ռուսերենին առնչվող առաջին մասնագիտական բառարանը հենց մեր խնդրո առարկա «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան» է: Թերևս ավելորդ չէ հիշատակել, ինչպես Գ. Գասպարյանն է գրում իր «Հայ բառարանագրության պատմության» մեջ, ազգությամբ հայ Ստեփան Չելինսկիի՝ 1889 թ. Թիֆլիսում հրատարակած «Объяснительный словарь татарских, грузинских и армянских слов вошедших в материал для изучения экономического быта государственных крестьян Закавказского края» 2000 բառահոդված ունեցող աշխատանքը, որից միայն 350-ն էր հայերենին վերաբերում<sup>3</sup>:

Սարգիս Հարությունյանը Մ. Աբեղյանի կյանքին ու գործին նվիրված աշխատության մեջ գրում է. «Պետականությունից զուրկ երկրում սեփական ազգային լեզվով գիտությունը, քաղաքականությունն ու արվեստը զարգացնելու անհնարի-նությունը, բնականաբար, հասարակականորեն չէր առաջադրում գիտության, քաղաքականության ու մշակույթի տարբեր բնագավառների մասնագիտական տերմինաբանության մշակման կարիք: 20-րդ դարի 2-րդ տասնամյակից սկսած՝ հայ ազգային-քաղաքական և մշակութային կյանքի վերաճման հետ առաջ է գալիս նաև մասնագիտական բառարաններ ունենալու բուռն պահանջ: Երբ 1918 թվականից ի վեր Հայաստանում պետական պաշտոնավարությունը սկսում է կատարվել հայերենով, օրակարգի հրատապ խնդիրներից է դառնում մասնագիտական տերմինաբանության մշակումը պաշտոնավարության այնպիսի բնագավառների համար, որպիսիք դատարաններն ու ռազմական գործն էին»<sup>4</sup>:

Եվ այսպես՝ 1918 թ. Թիֆլիսի հայ փաստաբանների միությունը («Հայփաստ»), հաշվի առնելով Հայաստանի դատարանների մոտալուս ազգայնացումը, նախաձեռնում է կազմել ռուս-հայերեն իրավաբանական տերմինների բառարան, որն առաջին քայլը պիտի լիներ կարևորագույն օրենսգրքերի հայերեն թարգմանության գործում, նպաստեր հայերենին անվարժ արևելահայ պաշտոնյաների ու փաստաբանների աշխատանքին: Բառարանն ընդգրկելու էր դատավարության մեջ հաճախակի կիրառվող բառեր, քաղաքացիական, քրեական, առևտրական և մուրհակային իրավունքին, քաղաքացիական, քրեական դատավարության վերաբերյալ տերմիններ:

<sup>2</sup> Տե՛ս **Հ. Ամայան**, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Եր., 1966, էջ 54:

<sup>3</sup> Տե՛ս **Գ. Գասպարյան**, Հայ բառարանագրության պատմություն, Եր., 1968, էջ 418:

<sup>4</sup> **Մ. Հարությունյան**, Մանուկ Աբեղյան. կյանքը և գործը, Եր., 1970, էջ 623:



Գործն արագացնելու համար «Հայփաստ»-ի բյուրոն ռուսերեն բառամթերքի ընտրությունը հանձնարարեց իր հինգ երդվյալ հավատարմատարներին՝ կազմելու բառարանը, որի տերմինների քանակը չպետք է գերազանցեր 1400-ը (ծախսերի և ժամանակի առումով):

Խմբագրական մասնաժողովում աշխատելու են հրավիրվում ժամանակի հայտնի հայագետներ Մ. Աբեղյանն ու Ս. Մալխասյանը: Չորս ամսվա ընթացքում մասնաժողովը հրավիրում է 35 նիստ՝ յուրաքանչյուրը չորս ժամ տևողությամբ:

Բառարանն ունի 18-էջանոց առաջաբան, որտեղ հեղինակները մանրամասն նկարագրում են, թե ինչպես են ընթացել բառարանի ստեղծման աշխատանքները՝ հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ անկախ Հայաստանում բառարան կազմելու իրենց առաջին փորձը օգտակար կարող է լինել մյուսների համար: Այսպես՝ նախևառաջ հանձնաժողովը լսել է Տիգրան Հովհաննիսյանի ամփոփ գեկույցը իրավաբանական յուրաքանչյուր տերմինի իմաստի մասին, որին հաջորդել են Արշակ Կուսիկյանի մանրամասն բացատրությունները: Այնուհետև հայագետները լսել են Տ. Հովհաննիսյանի բացատրությունները, թե ինչ աղբյուրներից է քաղել այս կամ այն տերմինի հայերեն համարժեքը, ինչպես է թարգմանված այդ տերմինի ֆրանսերենը՝ Նուպարյանի, Լուսինյանի, Քաջունու, Նորայրի և Տեմիրճիպաշյանի ֆրանս-հայերեն և գերմաներենը՝ Կոլլավի բառարաններում և այլն, և այլն<sup>5</sup>:

Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարանը հավաքական, միացյալ մտավոր աշխատանքի եզակի օրինակ էր, ստեղծագործական երևույթ հայ իրականության մեջ: Նշենք, որ նախքան սույն բառարանի ստեղծվելը չկար իրավաբանական որևէ բառարան: Իրավունքի իմաստային դաշտին պատկանող գրաբարյան բառերը բավարար չէին արտահայտելու 20-րդ դարի իրավաբանական համակարգի բազմազան հասկացությունները: Անհրաժեշտություն էր առաջացել ստեղծելու նոր բառեր: Եվ ահա, իրավաբանական տերմինաբանության կերտման կարևոր և պատասխանատու գործը ստանձնում են Մ. Աբեղյանը և Ս. Մալխասյանը: Շատ հաճախ դժվար է անգամ պարզել, թե ով որ տերմինի հեղինակն է, քանի որ բազում բառեր կազմվել են ընդհանուր ուժերով և հենց նիստերի ընթացքում: Մեկն առաջարկել է այն ուղին, որով պիտի ընթանալ, մյուսը գտել կամ կազմել է բառը, երրորդը՝ ձևափոխել կազմվածը, և արդյունքում առաջացել է նոր տերմինը: Բառարանի շուրջ 1400 բառական միավորից (մեր հաշվումներով ստույգ թիվը 1324 է), ինչպես հեղինակներն են նշում, ավելի քան 360-ը կա՛մ նոր տերմիններ են՝ նորաբանություններ, կա՛մ նորակազմություններ (գործածական բառերի կրճատումներ և առհասարակ ձևափոխություններ), կա՛մ էլ հնաբանություններ (հին բառերի վերականգնումներ հին կամ նոր առումով, անփոփոխ կամ փոփոխած ձևով): Սրանցից

<sup>5</sup> Տե՛ս Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան, Թիֆլիս, Հայփաստ հրատ., 1919, էջ 9:

մոտ հիսունը առաջարկել են Աբեղյանն ու Մալխասյանը, վաթսունը բուն իմաստով համատեղ աշխատանքի արդյունք են, իսկ մնացածի հեղինակը Տ. Հովհաննիսյանն է<sup>6</sup>: Ընդհանուր առմամբ բառընտրության, բառաստեղծման գործում մեծ դեր ունեցել է Մ. Աբեղյանը:

Կարևոր ենք համարում առանձնացնել այս բառարանի գլխավոր արժանիքները.

ա) Հեղինակներն աշխատել են ռուսերեն յուրաքանչյուր տերմինի դիմաց անպայման դնել հայերեն այնպիսի բառ, որը ճշգրտորեն կարտահայտի ռուսերեն տերմինի իմաստը: Այդպիսի բառ նախ փնտրել են խոսակցական լեզվում. եթե չեն գտել այնտեղ, դիմել են գրաբարի և բարբառների օգնությանը. «Հին հայերենից օգտուել ենք լիաբուն և ի միջի այլոց ի կեանս ենք վերակոչել այնպիսի քիչ գործածական ձևեր, ինչպես՝ «վարություն», «իրաություն» և այլն (փոփոխած կամ անփոփոխ առումով)»<sup>7</sup>: Նշենք, որ վարություն-ը производство, իրաություն-ը юстиция բառի դիմաց են ընտրվել (այժմ՝ համապատասխանաբար *վարույթ* (4-րդ իմաստով, էջ 798) և արդարադատություն (985))<sup>8</sup>:

բ) Բառարանը կազմողները հնարավորինս խուսափել են ռուսերեն մի քանի տերմին հայերեն միևնույն բառով թարգմանելուց, համարժեքը չգտնելու դեպքում ստեղծել են նորը՝ մեծապես նպաստելով իրավաբանական հասկացությունների հստակեցմանն ու հարստացմանը:

Բառարանում ամեն մի տերմինի իմաստային յուրաքանչյուր առման դիմաց գրված է հայերեն մեկ բառ, հազվադեպ՝ երկուսը, որոնցից մեկը օտար ծագման է: Մա այն դեպքում է, երբ մասնագետները գերադասել են օտար բառը, թեև հայերենն էլ անընդունելի չեն համարել: Կամ ընդհակառակը, գերադասել են հայերեն բառը, սակայն չեն ցանկացել հանրության կողմից լայնորեն կիրառվող օտար բառը չներկայացնել բառարանում՝ վերջնական ընտրությունը թողնելով լեզվի զարգացմանը:

Բառերի ընտրության ժամանակ հեղինակները մեծ ուշադրություն են դարձրել նաև դրանց բարեհնչյունությանը, հակիրճությանը. «Նոր հայերենի պակասություններից մեկն էլ բառերից շատերի չափազանց երկարությունն է, ուստի մեր հոգսերից մեկն էլ եղել է բառերին կրճատ ձև տալը կամ նրանց կրճատ ձևերի վերականգնումը: Բառեր ընտրելիս, կրճատելիս կամ կազմելիս մենք առանձին ուշադրություն ենք դարձրել նաև նրանց գեղեցկության վրայ»<sup>9</sup>:

1919-ին լույս տեսած «Ռուս - հայերեն իրավաբանական առձեռն բառարանը» բռնեց ժամանակի քննությունը՝ մեծապես նպաստելով հայ իրավաբանական մտքի զարգացմանը: Բազմաթիվ բառեր մտան շրջանառության մեջ:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 9-10:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Մ. Գասպարյան, Մ. Կիրակոսյան, Հայերեն-ռուսերեն / ռուսերեն-հայերեն բառարան, Եր., 2011, էջ 524: Այսուհետ սույն բառարանից բերված հղումը կնշվի անմիջապես օրինակի կողքին, ինչպես՝ ԳԿ, էջ ...:

<sup>9</sup> Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան, էջ 13:

Նշենք դրանցից մի քանիսը.

1. иск-հայց
2. истец-հայցվոր
3. исковое прошение-հայցագիր
4. аренда-վարձակալություն
5. арендная плата-վարձագին
6. аванс-կանխավճար
7. арест личный-կալանք
8. арест имущества-արգելանք
9. арестант-կալանավոր
10. наследователь-ժառանգատու
11. недоимка-ապարք
12. сообщник-հանցակից
13. чуждать-օտարել
14. акциз-բաժ
15. акция-բաժնետիրոջ
16. атестат-վկայագիր
17. вклад-դրույք
18. выкуп-փրկանք
19. чужой-1. օտար, 2. օտարապատկան
20. возвращение чужой вещи-օտարապատկան իրի վերադարձում
21. депозит-ավանդ
22. дивидент-շահաբաժին
23. встречный иск-հակընդդեմ հայց
24. вторичное требование-կրկնապահանջ
25. залладная-գրավագիր
26. ликвидация-լուծարք
27. монополия-1. մենավաճառություն, 2. մենաշնորհ
28. мотив-1. շարժառիթ, 2. պատճառանք
29. непреодолимая сила (Force majeure)-անհաղթահարելի ուժ, գերագույն ուժ
30. канцелярия-դիվանատուն կն:

Ինչպես նշվեց վերը, բառարանում տեղ են գտել գրաբարյան որոշ բառեր, նախդրավոր կառույցներ, ինչպես՝

1. вступление во владение - մուտ ի տիրություն
2. вступление в дело - միջամտումն ի գործ
3. вступление в законную силу - մուտ յօրինական ոյժ
4. кража по нуждь - գողություն ի կարեաց<sup>10</sup>:

Բառերը ընտրելիս մեծ ուշադրություն է դարձվել դրանց հակիրճությանը,

<sup>10</sup> Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, Եր., 1981, էջ 818-819:

որը, իհարկե, ոչ բոլոր դեպքերում է եղել տեղին: Բերենք օրինակներ՝  
 доноситель - իմացուու, доверитель- հավատուու, грузополучитель - բեռնասու-  
 սաց, доверенность - հավատգիր, поверенный- հավատտար (հավատարմա-  
 տար), заем - փոխ, բայց՝ заем внутренний - ներքին փոխառություն,  
 представитель - ներկայիչ, представительство - ներկայություն, установление  
 факта - ֆակտի, իրողության հաստուան, судебное установление - դատական  
 հաստարան: Выпись բառը թարգմանված է արտագիր, выписка-ն՝ քաղվածք:

Բառարանում զետեղված որոշ նորակազմություններ չմտան շրջանառությո-  
 յան մեջ. կա՛մ ենթարկվեցին փոփոխությունների, կա՛մ էլ ուղղակի դուրս ըն-  
 կան լեզվից: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

1. срок-կետիկ
2. безсрочный-անկետիկ
3. бланк-սուկիկ
4. бланковая надпись-սուկ մակագիր
5. апелляция- առկոչ (այժմ՝ բողոքարկում)
6. вознаграждение за находку-գտնողչեք
7. вотчина-հայրունիք (կալված)
8. виндикация-իրախնորություն (իրապահանջում)
9. выдача по завещанию-տացք ըստ կտակի
10. вызов-եկակոչ (կանչ, մարտահրավեր, մարտակոչ)
11. дача-հողան
12. движимость-շարժունիք (շարժական գույք)
13. доверитель-հավատուու
14. доверенность-հավատգիր (լիազորագիր)
15. документ-փաստագիր
16. рассрочка-կետատություն
17. досмотр-նայեցք
18. мошенник-գրթակ (խարդախ)
19. мошенничество-գրթանք (խարդախություն)
20. заочное решение-միականի վճիռ (հեռակա վճիռ)
21. купля-продажа-գին և վաճառ
22. мена-փոխույթ (փոխանակում):

Բառարանի հեղինակները որոշ դեպքերում պահել են օտար տերմինը և դրա  
 կողքին որպես երկրորդ բառ առաջարկել հայերենը, օրինակ՝ дивидент - դիվի-  
 դենտ, շահաբաժին, документ - դոկումենտ, փաստագիր, земское учреждение -  
 զեմստվային, տեղավար հիմնարկ, капитал-կապիտալ, դրամագուլիս, клуб -  
 կլուբ, ակումբ, коллизия - կոլլիզիա, բախումն, ликвидация - լիկվիդացիա, լու-  
 ծարք, бланк - բլանկ, սուկիկ, бодмерея - բողմերե, նավագրավ, ассигновка - ա-  
 սիգնանք, հատկացում, алиби - ալիբի, այլուր, апеллятор - ապելատոր, առկոչա-  
 վոր, апелляционная инстанция - ապելացիոն ինստանցիա, առկոչային ատյան,

апелляция-ապելլացիա, аванс - ավանս, կանխավճար, авария-ավարիա, донվավթար (այժմ՝ վթար), талон - տալոն, կոճ, цедент - ցեդենտ, իրավատու, цессионарий - ցեսիոնար, իրավառու, цессия - ցեսիա, իրավատրություն, эксперт - էքսպերտ, փորձագետ, экспертиза-էքսպերտիզ, փորձգիտանք (այժմ՝ փորձագիտություն), рецидивист - ռեցիդիվիստ, կրկնավոր, рецидив - ռեցիդիվ, կրկնանք, документ-դոկումենտ, փաստագիր են:

Երբեմն էլ դրել են միայն օտարը, ինչպես՝ чек - չեկ, пай - փայ, стаж - ստաժ, санкция – սանկցիա, конкурс - կոնկուրս, наделъ – նադել (հատկացում), наделъная земля - նադելի հող, реверс - ռևերս և այլն:

Որոշ դեպքերում բառակապակցությունները թարգմանված են մեկ բառով, օրինակ՝

1. актовая книга - ակտագիրք
2. актовый сбор - ակտատուրք
3. биржевая игра - բորսախաղ
4. боковая линия - կողմնագիծ
5. духовное завещание - կտակ
6. судебный приговор - դատավճիռ
7. суточные деньги - օրադրամ
8. вознаграждение за находку - գտնողչեք
9. рядная плата - բանողչեք:

-**չեք** վերջածանցով հանդիպում է նաև задаток բառի հաջողված թարգմանությունը՝ բեհ –ի փոխարեն *հավատչեք*:

56 օտար բառ տրված է նույնությամբ՝ առանց թարգմանելու: Ամենայն հավանականությամբ, կա՛մ չեն գտնվել դրանց համարժեքները, կա՛մ էլ որոշ դեպքերում հեղինակները չեն ցանկացել տարածված միջազգային բառը թարգմանել: Դրանցից են՝ *ակտ, պլոնժ, արտել, արխիվ, արբիտրաժ, բոզաժ, բանկ-բոտ/ություն, բանկ, բոյկոտ, վակուժ, վերդիկտ, հիպոնոս, ստաժ, տարիժ, ֆար-րիկա, հոնորար, ինստանցիա, հիպոթեկա, կամերա, կարանտին, կոլլեգիալ, կոմիսիոներ, կոնվենցիա, կոնկուրս, կոնոսամենտ, կոնսիստորիա, կուրատոր, կուրս, կուրտաժ, մակլեր, մինիստր, նադել, ռեներս, սենստոր, սենատ, սերվիտուտ, օբլիգացիա, պրեզումցիա, պրոմես, սանկցիա, տերմինոլոգիա* են:

Նշենք, որ հետագայում որոշ բառեր մասնակի փոփոխության ենթարկվեցին, ինչպես՝

1. паспорт-անցագիր (այժմ՝ անձնագիր)
2. неприкосновенность-անձեռնմխություն (այժմ՝ անձեռնմխելիություն)<sup>11</sup>
3. алиби-այլուր (այժմ՝ այլուրեքություն)
4. квалификация-որակում (այժմ՝ որակավորում)
5. экспертиза-էքսպերտիզ, փորձագիտանք (այժմ՝ փորձաքննություն)
6. допрос-հարցուփորձ (հարցաքննություն):

<sup>11</sup> Տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Եր., 1976, էջ 69:

Առաջարկում ենք շրջանառության մեջ դնել բառարանում ամրագրված մի շարք բառեր և բառակապակցություններ, որպիսիք են՝

1. арендный договор – վարձադաշն (վարձակալության պայմանագրի փոխարեն)
2. брадовый (брачный) договор – ամուսնադաշն
3. взнос – մուծանք (1.վճար, 2.մուծում, վճարում, ԳԿ, էջ 466)
4. дубликат -կրկնակ
5. задаток – հավատչեք (բեհ)
6. противозаконный – հակօրեն (օրենքին հակառակ)
7. наниматель – վարձվոր (կենվոր, տնվոր-ի կողքին)
8. краденое имущество – գողոնի գույք
9. резолюция – համառոտք
10. опекаемый – խնամակալյա
11. подделка – կեղծարք (կեղծ իր, կեղծանմուշ, ԳԿ, էջ 755)
12. универсал – հանրակի
13. универсальное преемство – հանրակի հաջորդություն
14. факультативный – ըստկամյա
15. шайка – ժողովակ (հրոսակախումբ, ավազակախումբ, ԳԿ, էջ 969. նկատելի է իմաստափոխությունը՝ թիմ, խումբ, բայց բացասական երանգով):

Այսպիսով, 1919 թ. հունիսին լույս տեսած «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարանը», լինելով արևելահայերենում տերմինաբանական-մասնագիտական առաջին բառարանը, աննշան թերություններով հանդերձ, առատորեն օգտագործելով հայ գրական և ժողովրդախոսակցական լեզուների անբավ հարստությունները, դարձավ այն խարիսխը, որի վրա պիտի հիմնվեր ու զարգանար հայ իրավաբանության լեզուն:

Անվանի լեզվաբան, բառարանագետ Աշոտ Մուքիասյանը այսպես է բնութագրել Աբեղյան բառարանագրին. «Լինելով ժամանակակից հայոց լեզվի մեծ մասնագետ՝ պրոֆ. Մ. Աբեղյանը հայոց լեզվի բառակազմության ոգուն հարազատ բազմաթիվ նորանոր բառեր ու տերմիններ է կազմել՝ վեր հանելով հայերենի բառակազմության հարուստ հնարավորությունները և օրինակ է ծառայել հայերենի բոլոր մասնագետների և բառարանագիրների համար:

Դեռ 20-ական թթ. պրոֆ. Աբեղյանը հիմնովին հերքեց ժամանակակից հայերենի մասին տարածված այն առասպելը, ըստ որի հայոց լեզուն անընդունակ է իր սեփական միջոցներով ստեղծելու հասարակական-քաղաքական, գիտական և տեխնիկական տերմինաբանություն: Այդ... առասպելի հերքման փայլուն ապացույցներն են պրոֆ. Մ. Աբեղյանի կազմած և հայոց լեզվի մեջ մտած հազարավոր բառերն ու տերմինները...»<sup>12</sup>:

<sup>12</sup> Ա. Մուքիասյան, Ռուս-հայերեն բառարանագրությունը սովետական իշխանության տարիներին, թեկնածուականատենախոսություն, էջ 79 (անտիպ):

**АННА АБАДЖЯН** – «*Русско-армянский карманный юридический словарь*» *Манука Абежьяна*. – «Русско-армянский карманный юридический словарь» - первый профессиональный словарь, который является уникальным примером коллективного интеллектуального труда. До составления данного юридического словаря как такового не существовало. Древнеармянский язык был не богат юридическими терминами, поэтому составителям часто приходилось использовать неологизмы для обозначения тех или иных юридических понятий.

Более 360 из 1324 словарных единиц словаря (по нашим подсчетам – А.А.) являются либо новыми терминами - неологизмами, либо новообразованными словами (сокращениями используемых слов, модификациями), либо архаизмами.

К наиболее важным достоинствам словаря относятся следующие:

а) авторы постарались использовать перед каждым русским термином армянское слово, которое точно выражало бы значение русского термина.

б) составители словаря по возможности избегали перевода некоторых русских терминов одним и тем же армянским корнем.

«Русско-армянский карманный юридический словарь» (1919), составленный многие десятилетия назад, внес большой вклад в развитие армянской юридической мысли. В оборот вошло много слов, таких как: иск - հայց, истец - հայցվոր, аренда - վարձավարություն, аванс - կանխավճար, арест личный - կալանք, арест имущества - արգելանք, квитанция - անդրրիագիր, контора - գրասենյակ, копия - փաստնի, депозит- փանդ и др.

**Ключевые слова:** *юридический словарь, суд, словообразование, неологизм, перевод, истец, задержанный, неплательщик, развод, рецидив, алиби*

**ANNA ABAJYAN** – *Manuk Abeghyan's "Russian-Armenian Legal Manual Dictionary"*. – “Russian-Armenian Legal Manual Dictionary” is the first professional dictionary related to Russian, which is a unique example of a collective intellectual work. Prior to the creation of this dictionary, there was no dictionary. Grabar Old Armenian was poor in legal terms, which could be used by the authors, thus, it was necessary to create new words.

More than 360 of the 1324 word-units in the dictionary (according to our calculations - AA) are new terms: either neologisms or new formations (abbreviations of often-used words, modifications) or archaic words.

Among the most important virtues of the dictionary are:


a) The authors worked to put an Armenian word in front of each Russian term, which will accurately express the meaning of the Russian term.

b) The compilers of the dictionary, as much as is possible, avoided translating several Russian terms with the same Armenian word.

"Russian-Armenian Legal Manual Dictionary" (1919) could stand the test of time, greatly contributing to the development of Armenian legal thought. Many words came into use, such as: հայց-claim, հայցվոր-plaintiff, վարձավարություն-rent, կանխ/կանխավճար-advance payment, арест личный- կալանք-personal arrest, property arrest -injunction, квитанция-անդրրիագիր -receipt, контора-գրասենյակ-office, депозит - deposit-փանդ, etc.

**Key words:** *legal dictionary, court, Grabar, word-formation, innovation, translation, plaintiff, detainee, defaulter, relapse, alibi*

## ԱՆՀԱՏԻ ԼԵԶՈՒՆ ԱԲԵՂՅԱՆԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԶՈՒԳԱՇԵՌՆԵՐՈՒՄ

ԶԱՐԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ\*   
*Երևանի պետական համալսարան*

Հոդվածի նյութն է անհատի լեզվի քննությունը մեծանուն գիտնական Մ. Աբեղյանի լեզվաբանական աշխատություններում: Ըստ ամենայնի նկարագրված է անհատի դերը լեզվի ծագման, փոփոխության, զարգացման գործընթացում՝ հիմնադրելով դնելով աբեղյանական այն դրույթի վրա, որ լեզուն չի կարող բացառություն լինել բնության և հասարակության օրենքներից, այն չի կարող չփոփոխվել, և փոփոխություններ իրականացնողն անհատն է: Լեզվաբանը «անհատական լեզուներ» ասելով հասկանում է արատրակտ, վերացարկված լեզվի (հանրության լեզվի) կոնկրետ, իրական, շոշափելի արտահայտությունը, իսկ հանրության լեզուն համարում է որոշակի լեզուների ընդհանուրը: Միաժամանակ նա անհրաժեշտ ուշադրություն է դարձնում գրական լեզվի անհատների լեզուները միացնելու-միասնականացնելու գործառնություն:

Ուսումնասիրության նպատակն է ցույց տալ, որ լեզվականոնարկման գույքահեռականներում անհատի լեզվի քննական վերլուծություններում Աբեղյանի որդեգրած լեզվաբանական ուղղության գլխավոր արժանիքը հենց լեզվագործունեության (խոսողության) պատմական ըմբռնումն է, և «աբեղյանական հակասություն»-ը հիմնավորված չէ:

Նյութի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից համընդհանուր լեզվաբանության մի քանի հիմնախնդիրների լուծման առաջնահերթությամբ: Մ. Աբեղյանի անհատական լեզուների տեսությունն անմիջականորեն առնչվում է լեզվի ծագման, նախալեզվի գոյության և նրա վերականգնման, ցեղակից լեզուների առաջացման, ամեն հնչյունի գոյաբանական-ծագումնաբանական արժեքի վերհանման (բառային իմաստակրության առումով), այս կամ այն հնչյունների կապակցության հետ այս կամ այն առարկայի կամ գործողության մտապատկերի գույքորվածության հարցերին: Աբեղյանական տեսության վերջնարդյունքում անհատական լեզուները «առանձին-առանձին բարբառներ են տարրական ձևով» և անգամ նախալեզվի ծագումնաբանական հիմքում կարող են դրվել:

\* Զարիկ Աղաջանյան – ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

Зарик Агаджанян – доцент кафедры армянского языка ЕГУ

Zarik Aghajanyan – Associate Professor of the Armenian Language Department at YSU

Email: [aghajanyanzarik@ysu.am](mailto:aghajanyanzarik@ysu.am). ORCID: <https://orcid.org/0009-0002-6573-3777>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 19.01.2024

Գրախոսվել է՝ 06.02.2024

Հաստատվել է՝ 10.02.2024

© The Author(s) 2024



**Բանալի բառեր** – լեզվի կանոնարկում, անհատի լեզու, լեզվագործունեություն, խոսողություն, անհատի լեզվի փոփոխություն, լեզվի կանոնական համակարգի փոփոխություն, բարբառակիր անհատ, օտարալեզու անհատ, բանաստեղծ անհատ

Ցանկացած հանրության մեջ յուրաքանչյուր լեզվակիր անհատ առանձնանում է ի՛ր լեզվով ու ի՛ր բառապաշարով, մտածելու և միտքն առարկայացնելու, ասվածը վերծանելու ի՛ր կարողունակությամբ, ավանդապահության և ավանդախախտության ի՛ր օրենքներով: Եվ ո՛չ միայն: Լեզվակիր անհատը քաղաքակիրթ հանրության արժանի մասն է դառնում լեզվաժառանգորդության իր իրավունքով, լեզվաստեղծագործական իր կարողությամբ, լեզվական դաստիարակությամբ, վարքով, սովորությամբ ու ճաշակով, խոսքիմշակությային արժեհամակարգով: Նա խոսում է այնպես, ինչպես մյուսները, միաժամանակ ոչ այնպես, ինչպես մյուսները, և իր ձևով «վերաստեղծում է» լեզուն<sup>1</sup>:

**Լեզուն չի կարող բացառություն կազմել բնության և հասարակության օրենքներից, այն չի կարող չփոփոխվել, և փոփոխություններ իրականացնողն անհատն է,** բանաձևում է Մ. Աբեդյանը և լեզվի փոփոխության իր տեսության հիմքում դնում է անհատի լեզվի (անհատական լեզուների) փոփոխությունը. յուրաքանչյուր անհատ ունի իր ինքնուրույն լեզուն, որը բնական հետևանքն է իր խոսքային գործունեության: Հետևաբար ամեն մի անհատ այս կամ այն չափով կարող է փոփոխություն առաջացնել լեզվի մեջ, որը երբեմն հանգեցնում է լեզվի կանոնական համակարգի փոփոխության:

Մ. Աբեդյանը հետևորդն է երիտքերականների դպրոցի. լեզվի պատմական ընթացքը, լեզվի զարգացումը, նրա կրած փոփոխությունները նա ևս դիտել է որպես **լեզվաբանական անընդհատականություն**, լեզվի անընդհատ փոփոխության և օրինաչափ զարգացման սկզբունքին կցորդել է այն հիմնարար սկզբունքը, որ **իրականում գոյություն ունեն միայն անհատների լեզուներ**: Գիտնականը հանրության լեզվի զարգացման սկիզբը տեսնում է անհատների մուծած գիտակցված ու հաճախ չգիտակցված լեզվական փոփոխությունների մեջ: Նորակազմությունը, նոր ձևն ու բառաձևը, բառերի և անգամ հնչյունների նոր նշանակությունները սկսվում են մի անհատից, սկզբում անսովոր և նույնիսկ սխալ են համարվում, աստիճանաբար դառնում են կիրառության սովորական և «ուղիղ» ձև: Բազմաթիվ այսպիսի փոփոխությունների հետևանքը լինում է արդեն լեզվի ընդհանուր փոփոխությունը, որը, սակայն, տեղի է ունենում տասնամյակների, դարերի ընթացքում և անզգալի է:

Անհատի լեզվի արեդյանական դիտարկումներից առավելապես անհատականի և հասարակականի փոխկապվածության հարցն է քննակիզակետում դիտարկվել, և գիտադրյուրներում ձևակերպվել է «**արեդյանական մեծ հակասություն**»-ը. այն է՝ մի կողմից՝ **լեզուն անհատական երևույթ է, անհատի սեփականությունը և արդյունքը անհատի հոգեկան գործունեության**, մյուս կողմից՝

<sup>1</sup> Տե՛ս **Չ. Աղաջանյան**, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007, էջ 88-98:

լեզուն իր զարգացմամբ, իր անընդհատ փոփոխություններով ուղեկցում է ազգի պատմությանը:

Վերոհիշյալ խոցելի հակասությունը բարձրաձայնող լեզվաբաններից Է. Աղայանը, ով լեզուն սահմանում է որպես «առարկայացված գիտակցություն», այս հարթակում հակադրվում է **լեզվական երևույթներն անհատական հոգեբանական երևույթներով ուսումնասիրող ու բացատրող Մ. Աբեղյանին**: Նա գրում է. «Այն տեսակետը, որ կան միայն անհատական լեզուներ, հիմնովին սխալ է. կա հանրության համար ընդհանուր լեզու, որ իր ընդհանուր օրենքներով պարտադիր է նույն լեզվով խոսող բոլոր անհատների համար. այդ ընդհանուրը դրսևորվում է անհատների միջոցով, որոնք կարող են այս կամ այն չափով խոսել, սակայն այդ տարբերությունը չպետք է հասնի այն աստիճանին, որ խախտվի ընդհանուրի կողմից ընդունվածը: Հակառակ պարագայում կխզվի այդ մասնավորի և ընդհանուրի կապը, որով և գոյության նախապայմանից կզրկվի հենց այդ անհատականը: Այսպես և լեզվի բնորոշումն՝ իբրև հոգեբանական երևույթ, սխալ է»<sup>2</sup>: Ըստ Աղայանի՝ թեև խոսքի առանձնահատկություններից մի քանիսը կապվում են խոսողի անհատականության հետ, այն, իր անհատականությամբ հանդերձ, հասարակական երևույթ է<sup>3</sup>: «Լեզվաբանական բառարանի» հեղինակները ևս ժխտում են լեզուն անհատի հոգեֆիզիոլոգիական ներքին գործունեության արդյունք լինելու տեսությունը, ուրեմն և կասկածի տակ են առնում Աբեղյանի տեսության այս կողմը՝ հաստատելով լեզվի համաժողովրդական բնույթի գաղափարը<sup>4</sup>:

Թերահավատությամբ է ընդունվել նաև Մ. Աբեղյանի՝ լեզվի փոփոխության դաշտում **անհատական համաբանության և նպատակահարմարության** սկզբունքների առաջադրումը: Է. Աղայանը, որի կարծիքով համաբանությամբ առաջացած անհատական նորաձևությունները բնորոշ են երիտքերականների, այսպես կոչված, «ատոմիզմին», հռետորական այսպիսի հարցում է հնչեցնում՝ «...Բայց որի՞ համաբանությամբ, որի՞ կաղապարով առաջացան անձի և իրի՞ առումները, երբ հայերենի մեջ դրա համար ոչ մի կաղապար չունեինք. որի՞ օրինակով կազմվեցին **կզրեմ, կբերեմ** և դրանց նախավոր **կայ ու գրեմ, կայ ու բերեմ** ձևերը, որպես խոնարհման նոր համակարգ, երբ հին հայերենին այդպիսի համակարգը խորթ էր»<sup>5</sup>: Իսկ նպատակահարմարության մասին խոսելիս ընդգծում է՝ ոչ ոք չի կարող ասել, թե ինչո՞ւ **գրում եմ** ձևն ավելի նպատակահարմար է, քան **գրեմ** ձևը, ինչո՞ւ **հայրեր** ավելի նպատակահարմար է, քան

<sup>2</sup> Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), հ. 2, Եր., 1962, էջ 145:

<sup>3</sup> Վերջին ժամանակներում ընդունված է հոգեբանական, ֆիզիոլոգիական և բնախոսական տեսակետով խոսքի վերլուծությունը անվանել «անհատական խոսքի լեզվաբանություն» (կորել), որն իր հերթին բաժանվում է «հաղորդողի խոսքի լեզվաբանություն» և «ընկալողի խոսքի լեզվաբանություն» բաժինների (տե՛ս նաև՝ Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը, Եր., 1967, էջ 13-14):

<sup>4</sup> Տե՛ս Զ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազյույան, Լեզվաբանական բառարան, Եր., 1975, էջ 15:

<sup>5</sup> Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, էջ 146-147:

**հարք** և այլն, կամ ինչո՛ւ գրաբարյան **քեռ, տեառն** սեռականները, ասենք թե, նպատակահարմար չեն, որովհետև անկանոն ու բացառիկ ձևեր են, և այդ պատճառով էլ դուրս մնացին լեզվից, բայց ինչո՞ւ նրանք չփոխարինվեցին **քույրի, տերի** (կամ **տիրի**) ձևերով՝ ավելի կենսունակ **ի** հոլովումով, այլ ստացան **քրոջ, տիրոջ** ձևերը՝ «վարակվելով» **կնոջ** ձևից, որ նույնքան «աննպատակահարմար» էր, որքան որ **քեռ ու տեառն**:

Կարծում ենք՝ ժամանակն է լեզվաքննադատության տիրույթը վերանայել՝ աչքի տակ ունենալով հենց արեղյանական այս հակասությունը: Եթե նրա աշխատություններում առանձնացված չեն լեզվի հասարակական բնույթը հաստատող առանձին պարբերություններ, առանձին բաժիններ, դա չի նշանակում, թե լեզվաբանը այն ժխտում է կամ չի ընդունում: Գուցեև հակառակն է՝ կարող ենք մտածել, որ լեզվական իրականությունների ծագմանը բնախոսական-հոգեբանական մեկնաբանություններ տվող գիտնականը չի ցանկացել իր տեսությունը ծանրաբեռնել հատկապես իր ժամանակի համար այնքա՛ն սովորական և ընդունված գիտական բանաձևումի ավելորդ կրկնաբանություններով, բայց և այնպես կասկածի տակ չի առել ու առանց վերապահության ընդունել է լեզվի պատմահասարակական իրողություն լինելու հանգամանքը: Այս դեպքում գիտականորեն արդարացի չէ խոսվածքի գործունեության առաջացման ու լեզվի փոփոխության մեկնաբանություններում կշեռքի նժարը դեպի անհատի հոգեբանական ունակությունները թեքող լեզվաբանին մեղադրել լեզվի պատմահասարակական կողմը չգիտակցելու, լեզվի ներքին զարգացման օրինաչափություններն անտես առնելու մեջ: Անհատը, իր լեզվի տերը լինելով հանդերձ, նաև հասարակության անդամ է և իր իսկ ծննդյան օրից ավանդական ժառանգորդն է իր մայրենիի (ընտանիքի, դպրոցի միջոցով), ժառանգորդն է հնավանդ իր լեզվի բառ ու բանի, քերականության կաղապարային կմախքի, և նրա դերը լեզվի գործառնության կիրարկմամբ է սահմանափակվում՝ անհատական «զգեստավորմամբ և հանդերձավորմամբ», նրանցից յուրաքանչյուրի աշխարհայացքին, դատողական և հոգեբանական կերտվածքին համապատասխան:

Ընդունում ենք՝ անհատականի և հասարակականի փոխկապվածության հարցը Մ. Արեղյանի լեզվահետազոտական-լեզվաքննական գուգահեռներում ստվերային է մնում, սակայն այս կապը հասկանալու համար պետք է այն ներկայացնել այսպես կոչված կցորդային, լրացուցչության սկզբունքի հաշվառմամբ, այսինքն՝ նրա՝ անհատական լեզվի տեսությանը պետք է գուգակցել լեզվի հասարակական բնույթը մատնանշող դատողությունների քաղվածքը: Արդյո՞ք գիտական լեզվաբանությունից հեռու է արեղյանական այն դատողությունը, որ «անհատական լեզուներ» ասելով հասկանում է նաև արստրակտ, վերացարկված լեզվի (հանրության լեզվի) կոնկրետ, իրական, շոշափելի արտահայտությունը, իսկ հանրության լեզուն համարում է այդ լեզուների ընդհանուրը: Ըստ Մ. Հարությունյանի՝ Արեղյանի մոտ առկա է նաև լեզվի իմացական

ըմբռնումը և ոչ միայն հոգեբանականը, և իր խոսքը հաստատելու համար մեջբերում է Մ. Աբեղյանի «Մի քանի քերականական խնդիրների մասին» անտիպ աշխատությունից հետևյալ հատվածը. «...Կա՞, օբյեկտիվ գոյություն ունի՞ լեզու ընդհանրապես իբրև այդպիսին: Ոչ, դա արատրակցիա է... Կա՞, օբյեկտիվորեն գոյություն ունի՞ հայոց լեզուն, ռուսաց լեզուն և մյուսները, ընդհանրապես իբրև այդպիսիներ: Այդ էլ արատրակցիաներ են, միայն ավելի բովանդակալից, որովհետև ընդհանուր վերացական գաղափարի հետ՝ պարունակում են նաև մասնավորը՝ հայոց կամ ռուսաց լեզվի առանձնահատկությունները: Բայց այդ մասնավորն էլ հայոց լեզուն և այլն, միայն վերացական մոմենտ է, որ առանձին վերցրած չենք գտնիլ ոչ մի տեղ և իրական է, գոյություն ունի եզականի մեջ միայն և ոչ այլապես...: Ուրեմն ո՞րն է կոնկրետ լեզուն: - Դա եզական, անհատական լեզուն է, որ իր մեջ պարունակում է կամ որի մեջ գոյություն ունին և եզականն, անհատականը և մասնավորը – դասակարգայինը, և ավելի բարձր՝ հայկականը, և ավելի ևս բարձր՝ ընդհանուր լեզվականը»<sup>6</sup>:

Կարծում ենք՝ արբեղյանական և աղայանական մոտեցումները լեզվի ծագումնաբանական հիմնահարցի լուծման տարբեր լրացուցիչներ են, տարբեր գումարելիներ՝ ժամանակի տարբեր կետերի լեզվամտածողությանը համապատասխան: Լեզուն փոփոխվում-փոխվում է, բայց ժամանակի մի ծայրում Աբեղյանը (և արբեղյանականները), անտես չառնելով լեզվի զարգացման ներքին օրենքները, լեզվի փոփոխությունը գերազանցապես համարում է (են) անհատների հոգեբանական գործունեության արդյունք, մյուս ծայրում է. Աղայանը (և աղայանականները) դրանք պայմավորվում է (են) լեզվի մեջ գործող օրենքերով՝ հոգեբանական գործոնի մասնակի հաշվառմամբ:

Մեր ժամանակների մեծագույն գիտնականը՝ Գ. Ջահուկյանը, ընդհանրական բանաձևում է տալիս այս հակասությանը: Իր «Լեզվաբանության պատմության» առաջին հատորի 496-րդ էջում նշում է, որ ուրիշ կերպ էլ լինել չէր կարող, քանի որ Աբեղյանի որդեգրած «լեզվաբանական ուղղության գլխավոր արժանիքը հենց լեզվական պրոցեսի պատմական ըմբռնումն» է, լեզուն ու այն հետազոտող գիտությունը հասարակական գիտություն համարելը: Գ. Ջահուկյանը արժևորում է անհատի լեզուն՝ լեզվաբանական մի խիստ զգուշացումով՝ «հասարակության բոլոր անդամների իդաելական նույնությունը կհանգեցնէր լեզվական անշարժության, կբացառեր լեզվի փոփոխությունը, այսինքն՝ լեզուն կդադարեր ստեղծագործական կարողություն ունենալուց, խոսելը կզրկվեր լեզվական առաջադիմության այնպիսի կարևոր գործոնից, ինչպիսին «**խոսելու հաճույքն** է»: «Անհատական լեզու» տերմինակապակցության կողքին «անհատական լեզվական ունեցվածք» տերմինակապակցություն է գործածում և լեզվի փոփոխության արտաքին և ներքին պատճառների մասին խոսելիս գրում է. «Լեզվի

<sup>6</sup> Մ. Շարությունյան, Մանուկ Աբեղյան: Կյանքն ու գործը, Եր., 1970, էջ494:

տարածական, հասարակական և անհատական տարբերակները պատմական տարբեր պայմաններում ձեռք են բերում տարբեր արժեք և ազդում են լեզվի փոփոխության ընթացքի վրա: Այս կամ այն տարածքի, այս կամ հասարակական խմբավորման, **այս կամ այն անհատի՝ հասարակության մեջ ունեցած դերի և ազդեցության փոփոխության** համեմատ տեղի է ունենում լեզվական համապատասխան փոփոխություն: Անհատական լեզվական ունեցվածքները (անհատական «լեզուները») ևս իրենց ընդհանրությունների ու տարբերությունների ծավալին համապատասխան ստեղծում են լեզվական փոփոխությունների համապատասխան միտումներ, որոնք հանգեցնում են ընդհանուր լեզվական փոփոխությունների, լեզվական արտահայտության ընդհանուր եղանակների, լեզվական սովորությունների և նորմաների փոփոխության»<sup>7</sup>:

Հակասության համահարթման դիտանկյունից ներկայացնենք աբեղյանական տեսակետը անհատական լեզուների, դրանց տարբերակման հիմունքների, անհատի լեզվի և ընդհանրապես լեզվի փոփոխության մասին՝ չմոռանալով աբեղյանական հիմնաշեշտումը՝ **«կարելի է ասել, որ կան միայն անհատական լեզուներ»:**

Աբեղյանի լեզվաքննական գուգահեռներում տրված են նաև անհատների լեզուների տարբերությունների և փոփոխությունների, դրանց միջոցով հանրության լեզվի փոփոխությունների զանազան նախապայմաններ ու պատճառներ, որոնցից են.

1) աշխարհաճանաչողության խորությունը և զգայական աշխարհի վրա ունեցած ազդեցության չափը.

2) մտածողության տիրույթում գաղափարների (պատկերացումների) գերակշռությունը բառապաշարային (լեզվի իմացության) հնարավորությունների համեմատությամբ.

3) հնչյունների, բառերի ու բառաձևերի նյութական, ձևական, ավելին՝ բառերի կապակցության ձևերի նշանակությունների տարբերությունները, այդ նշանակությունների փոփոխությունները.

4) լեզվի մեջ ձևական մեծ խմբերի առկայությունը.

5) նոր լեզվի մեջ հին լեզվի կապակցության ձևերի ու բառաձևերի համաբանությամբ (անալոգիական) կազմությունները.

6) գործառական հիշողությունը (հակառակ ծայրում՝ մոռացության չափը).

7) լեզվական ազդեցությունը և ազդեցության չափը. մի կողմից՝ անհատի վրա շրջապատի ազդեցությունը, մյուս կողմից՝ շրջապատի վրա անհատի ազդեցությունը.

8) խոսողի և լսողի վիճակների նույնությունը (տարբերությունը).

9) նաև՝ Աբեղյանի խոսքով՝ «մեր պարապմունքը» (այսինքն՝ վարժվածությունը՝ հաճախակի կրկնությամբ և այլն).

<sup>7</sup> Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն (նախագրային շրջան), Եր., 1987, էջ 11:

10) ժամանակի գործոնը՝ համեմատաբար ավելի ուշ (կամ վաղուց) ըմբռնելու (իմանալու) առումով և այլն:

**Ա.** Ընդհանուր առմամբ Մ. Աբեղյանը լեզուն դիտում է անհատական գործադրության մեջ և քննում-բացատրում է այն իբրև անհատի մեջ կատարվող հոգեբանական երևույթների արդյունք, իբրև բազմաթիվ ու զանազան պատկերացումների զուգորդությունների մի ցանց: Ըստ նրա՝ խոսքը կամ նախադասությունը, որ բաղկացած է «հոգեբանական (դատողության) ենթակայից» և «հոգեբանական ստորոգյալից», հոգեբանական դատողության արտահայտությունն է բառերով, իսկ լեզուն այդ առանձին հոգեբանական դատողությունների ամբողջությունն է:

**Բ.** Տվյալ լեզվով խոսող հանրության անդամները, անգամ եթե միևնույն լեզվական միջավայրին են պատկանում, երբեք ճիշտ ու ճիշտ իրար նման չեն խոսում. տարբեր են առանձին բառերի, բառերի ձևական, հաճախ և կապակցության ձևերի նշանակությունները, տարբեր են և բառափոխության, նաև շարահյուսական ձևերով արտահայտված հարաբերությունները:

**Գ.** Անհատից անհատ տարբեր են զանազան զգայությունները, դրանց վերարտադրումը կամ նորոգումը, այսինքն՝ մտապատկերներն ու պատկերացումները: Սակայն, ըստ լեզվաբանի, յուրաքանչյուր անհատ դրսից չի կարող ստանալ «լեզվական զուգորդությունների բոլոր խմբերն իրենց բոլոր բազմազան տրամախաչումներով». ամեն մի անհատ շատ բառեր, նույնիսկ կապակցության շատ ձևեր իր կյանքի ընթացքում ուրիշներից չի լսել, չի սովորել, չգիտի և չի իմանում: «Բացի այդ՝ մի մարդ կարող է այս ու այն բառերն ու կապակցության ձևերը լսած չլինել ու չիմանալ, մի ուրիշ մարդ՝ ուրիշները: Չետևաբար և ամեն առանձին անհատի լեզու, քանի որ կերպավորվում ու զարգանում է նայելով իր կրած ազդեցություններին, ավելի կամ պակաս չափով տարբերվում է ուրիշների լեզվից»<sup>8</sup>:

**Դ.** Մ. Աբեղյանը կարևորում է անհատի մեջ պատկերացումների միացումը, որ հոգեբանության մեջ կոչվում է **պատկերացումների զուգորդություն**, հաճախ նաև՝ **գաղափարների զուգորդություն**: Ընդ որում, պատկերացումների զուգորդությունը պատահաբար չի լինում, այլ կատարվում է կամ նմանությամբ, կամ կցորդությամբ, որոնք հաճախ կարող են փոխնիփոխ հանդես գալ:

Անհատական լեզուների տարբերակման հիմունքներից մեկը լեզվական զուգորդությունների սերտ կամ թույլ լինելն է: Յուրաքանչյուր անհատ միշտ ավելի շատ բառեր ու լեզվական ձևեր է հասկանում, քան ինքը գործածում է խոսելիս: Թույլ զուգորդումների դեպքում, մի կողմից, բոլորովին առանձին հանգամանքներ են հարկավոր («առանձին պարագաներ»), որ դրանք նորից անհատի գիտակցության մեջ գան, և խոսելիս դրանք գործածի: Մյուս կողմից՝ կարող են և այնպիսիները լինել, որ երբեք չվերատադրվեն: Նա գրում է. «Ամեն

<sup>8</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 38: (Այսուհետև շարադրանքում կնշվի միայն էջը):

մարդ, ուրեմն, մի ազգի լեզվի բառերի ու կապակցության ձևերի ամբողջությունից այն է միայն գործածում խոսելիս ու գրելիս, ինչ որ ինքը ստացել է դրսից և ինչ որ իր մեջ սերտ զուգորդված է լեզվական նման ձևերի մեջ» (էջ 39):

**Ե.** Աբեղյանը անտես չի առնում անհատի լեզվի «վերարտադրողական» և «արտադրողական» գործառույթները՝ դրանց հիմքում դնելով բառային և խոսքային զուգորդությունները, որոնք հիմնվում են կա՛մ հնչյունների, կա՛մ նշանակության, կա՛մ միաժամանակ թե՛ հնչյունների և թե՛ նշանակության մասնակի նույնության կամ նմանության վրա: «Մենք խոսելիս ոչ միայն **վերարտադրում ենք**, այլև **արտադրում ենք** (ընդգծումը՝ Չ.Ա.), այսինքն՝ մենք ինքներս ստեղծում ենք բառեր ու բառերի կապակցություններ և ամբողջ խոսքեր, որ առաջ երբեք չենք լսել ուրիշներից: Իսկ որ մենք կարողանում ենք այդ անել, պատճառն այն է, որ ինչպես մեր պատկերացումներն արտաքին աշխարհի մասին, նույնպես և մեր լսած բառերն ու խոսքերը մեր մտքի մեջ առանձնացված չեն մնում, այլ զուգորդվում են միշտ իրար հետ և կազմում մեծ կամ փոքր խմբեր, որոնց նմանությամբ և խոսելիս ստեղծում ենք նոր բառեր ու խոսքեր: Բառերի զուգորդությունները հիմնվում են կա՛մ լոկ հնչյունների, կա՛մ լոկ նշանակության, կա՛մ միաժամանակ թե՛ հնչյունների և թե՛ նշանակության մասնակի նույնության կամ նմանության վրա: Լոկ հնչյունների նմանության վրա հիմնված զուգորդություններով կազմվում են հնչյունների հանգիստություն և հանգ ասածը (կերթան-գութան-թան), որ գործադրվում է բանաստեղծության մեջ իբրև մի դաշնակավոր զարդարանք. դա կարևորություն չունի խոսելու գործունեության համար: Կարևոր են բառերի մյուս երկու տեսակի զուգորդությունները, որոնցով միանում և խմբեր են կազմում բառերը և բառերի կապակցություններն իրենց նշանակության կամ հնչյունների նմանությամբ կամ նույնությամբ» (էջ 24-25):

**Զ.** Պատկերացումների և բառագործածության համամասնությունը ևս կարևոր գործոն է անհատի լեզվի տիրություն: Առարկայի պատկերացումը, առանձին գործողությունների ու հատկությունների պատկերացումները, վերջիններիս ընդհանրացված ընդհանուր պատկերացումները բարդ են՝ կազմված բազմաթիվ տարրերից: Միանգամայն իրավացի է Մ. Աբեղյանն իր հետևյալ դիտարկմամբ՝ **ճիշտ մտածողության համար առարկայի ընդհանուր գաղափարը պետք է իր մեջ ամփոփի առարկայի ընդհանուր հատկանիշների ամբողջությունը, որը պետք է նույնը լինի բոլոր մարդկանց համար, բայց այսպիսի գիտական ճշտություն չկա սովորական լեզվի մեջ:** Անհատի լեզուն տարբերակում է նաև այն բանով, որ նրանցից յուրաքանչյուրը, նույն բառը գործածելով, նույն պատկերացումը չի կապում բառի արտաքին կողմի՝ հնչյունների հետ: Անհատը իր պատկերացումների շղթայում ավելի կամ պակաս հարուստ բովանդակություն է կապում լեզվական այդ նույն իրակության հետ: Աբեղյանը գրում է. «Այդ պատճառով առանձին անհատների պատկերացումները նույնիսկ մի հատուկ

առարկայի մասին՝ տարբեր են լինում, նայելով թե այդ առարկայի պատկերացման ո՞ր կողմն ավելի ուժեղ է տպավորված անհատի մտքի մեջ: Հետևաբար և բառերի նշանակությունն առանձին անհատների համար նույնիսկ մի եզակյան առարկայի վերաբերմամբ՝ կատարելապես նույնը չէ, քանի որ երկու տարբեր անհատներ միևնույն առարկայի կատարելապես նույն պատկերացումը չեն կապում բառի արտաքին կողմի – հնչյունների հետ... Այստեղ միևնույն տեսակին պատկանող բոլոր առարկաների ընդհանուր պատկերացումը կազմվում է ոչ թե կատարյալ ճշտությամբ նրանց ընդհանուր էական հատկանիշների ընդհանրացումով, այլ նույն տեսակի մի քանի առարկաների, երբեմն նույնիսկ մի հատ առարկայի մի քանի այնպիսի հատկանիշներն առնելով, որոնք որևէ պատճառով ավելի սերտ են գուգորդված մեր մտքի մեջ կա՛մ այն պատճառով, որ ավելի ուժեղ են ազդած մեր լեզվի վրա, կա՛մ ավելի հաճախ են կրկնվել մեր մեջ մեր պարապմունքի պատճառով, կա՛մ մենք ավելի ուշ ենք ըմբռնել այդ հատկանիշները: Ուստի և երբ մենք խոսում ենք մի տեսակի առարկայի մասին ընդհանրապես, թեպետև նույն բառն ենք գործածում, ինչ որ ուրիշները, բայց դրա հետ կատարելապես նույն ընդհանուր պատկերացումը չենք կապում, ինչ որ ուրիշները» (էջ 40-41): Մ. Աբեղյանն իր միտքը բացատրում է «**ուղտ**» բառի նմուշ-օրինակով:

**Է.** Լեզվաբանության պարականոն սահմանումը՝ լեզվի փոփոխության և զարգացման մասին, աբեղյանական հիմնարար եզրակացություն է դառնում, թեպետև գիտնականի խոսքն առավելապես անհատի լեզվի փոփոխության մասին է:

Անհատի լեզվի փոփոխությամբ ընդհանուր լեզվի աստիճանական զարգացմանն անդրադառնալիս Մ. Աբեղյանը առանձնացնում է 3 գործոններ, որոնց հիմքում կրկին ու կրկին դրվում է անհատի լեզուն՝ **ա)** համաբանությունը, **բ)** լեզուների փոխազդեցությունը, **գ)** անհատական լեզվի փոփոխությունը: Վերջին դեպքում Մ. Աբեղյանը նշում է 2 նախապայման՝ **1.** նպատակահարմարությունը. անհատի բերած փոփոխությունը շուտ և հեշտությամբ կարող է ընդհանրանալ այնքանով, որքանով որ այն նպատակահարմար է խոսողների համար. ավել կամ պակաս նպատակահարմարությամբ է որոշվում նրանց պահպանությունը կամ կորուստը լեզվի մեջ. **2.** լեզվական նորիմաստություններ և նորաձևություններ հորինող անհատի ազդեցության աստիճանն ու չափը (մասշտաբը):

Լեզվի սովորական գործունեության ընթացքում անհատի լեզուն փոխվում է, այսինքն՝ անհատը **գիտակցաբար** կամ **անգիտակցաբար, կամա** թե **ակամա**, ինչպես ասում են, **վայրկյանի կարիքից դրդված**, փոփոխություն է մտցնում իր լեզվի մեջ: Անշուշտ, Մ. Աբեղյանը կարևորում է անհատների գիտակցաբար մտցրած փոփոխությունները. մասնագետ անհատները ոչ թե ստեղծագործում, այլ իրենց քերականություններով և բառարաններով շարունակաբար գլխավոր-



րապես ճշտում ու կանոնավորում են «կիրառական տատանում» ունեցող լեզվական իրակությունները, գիտությունների և արվեստների տերմինաբանություն են ստեղծում, բառապաշարի ու դարձվածքների համակարգում են կատարում: Կարևորում է և առանձին անհատների, հատկապես բանաստեղծների բառակերտական ու դարձվածակերտական «ստեղծագործությունը», որ ընդհանրանում են լեզվի մեջ: Այս տեսակ փոփոխությունը, սակայն, գիտնականը չնչին և աննշան է համարում լեզվի այն դանդաղ, ակամա և անգիտակից փոփոխության դիմաց, որին շարունակ ենթակա են լեզվի բոլոր իրակությունները: Նա գրում է. «Այս փոփոխության իսկական պատճառը ուրիշ բան չէ, բայց եթե լեզվի սովորական գործունեությունը, որով սովորում և գործածում ենք լեզուն: **Այստեղ արդեն չկա դիտավորված ներգործություն լեզվի վրա, որևէ ուրիշ նպատակ, բացի վայրկյանի կարիքից, որ է ցանկություններն ու մտքերը հասկանալի դարձնել ուրիշին** (ընդգծումը՝ Չ. Ա.): Լեզվի այս սովորական կիրառության, սովորական կենդանի խոսվածքի ժամանակ ահա ծագում են լեզվական նոր ձևերը, և ինչպես օրգանական բնության զարգացման մեջ, նույնպես և լեզվի զարգացման մեջ ծագած նոր լեզվական իրակությունների ավելի կամ պակաս նպատակահարմարությամբ որոշվում է նրանց պահպանությունը լեզվի մեջ կամ կորուստը: Ուստի լեզվի զարգացումն, այսինքն նրա կրած փոփոխություններն ըմբռնելու համար՝ պետք է ամենից առաջ տեսնել, թե ինչպես ենք սովորում խոսել, և ինչպես է ընթանում խոսվածքի գործունեությունն ընդհանրապես» (էջ 13):

Անհատի լեզվի ազդեցությունը լեզվի տարբեր մակարդակներում նույնական չէ: Նա ակտիվ է հնչական-արտասանական, շեշտադրական-առոգանական, բառական-բառակազմական, իմաստաբանական, կապակցական ձևերի լեզվաշերտերում: **Արմատաստեղծման գործում** անհատի դերը զրոյացվում է. այստեղ անհատն անելիք չունի, քանի որ լեզվի մեջ նոր արմատներ այլևս չեն ստեղծվում, բացի նմանաձայնության կամ բնաձայնության արմատներից: Հատկապես քերականության մեջ անհատի ստեղծագործումն ու կամքն արժեք չունեն. ինչպես ասում են՝ «Քերականությունն անգամ արքաներին է հրամայում»: Գիտնականը ընդգծում է՝ լեզվաբանական գրականության մեջ չկան քերականական իմաստների, քերականական ձևերի անհատական ծագման, հատկապես ձևաբանական նորմի՝ անհատի կամքով կատարված փոփոխություններ՝ չմոռանալով մեկ անգամ ևս շեշտել՝ **չնայած որ այս դեպքում էլ համակարգային փոփոխությունը սկսվում է մի ինչ-որ անհատից, նրա գիտակցված կամ չգիտակցված նորամուծություններից:**

Իսկ ինչպե՞ս է կատարվում փոփոխությունը, ինչպե՞ս է ընդհանրանում նորը... Աբեղյանը բացատրում է .

1) Մի դեպքում «նոր կազմությունը մի անհատից անցնելով ուրիշներին՝ ընդհանրանում է, երբ անզգալի է մնում թե՛ այդ կազմությունը գործածողի և

թե՛ լսողների համար: Եվ միշտ էլ անզգալի է մնում այդ և առանց արգելքի ընդունվում լսողներից, երբ խոսողն ու լսողները չեն սովորել, չգիտեն նոր կազմության համապատասխան հին ձևը, և երբ ստեղծվում է մի այնպիսի բառ, բառաձև կամ կապակցության ձև, որի համապատասխան արտահայտություն չկա լեզվի մեջ: Այդպիսի դեպքում նոր կազմությունները, լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող ձևական մեծ խմբերի վրա հիմնված, սխալ չեն համարվում և մնալով խոսողի կամ լսողի ու լսողների մտքի մեջ՝ կարող են նույնիսկ, եթե կարիք կա այդ արտահայտության համար, կրկնվել իբրև մի քանի անգամ արդեն գործածածի կամ լսածի վերատաղություն և մինչև անգամ ընդհանրանալ» (էջ 44):

2) Մյուս դեպքում «զգալի է» նոր կազմությունը. «Նոր կազմության ձևը մի անհատից սկսվելով՝ սկզբում ընդունվում է, հարկավ, մի շատ նեղ շրջանում, բայց հետզհետե շատերը լսելով այդ՝ յուրացնում են, նամանավանդ երբ սրանք էլ գտնվում են նույն լեզվական վիճակի մեջ: Նոր սերունդը, որի համար հին ու նոր չկա, - քանի որ նա ամեն ինչ նոր է սովորում, - միակերպ ընդունում է թե՛ հինը և թե՛ նորը և երկուսն էլ անխտիր գործածում: Երբ նոր սերնդից բազմաթիվ անհատների մեջ լեզվի զարգացումն այն ուղղությամբ է ընթանում, որ ավելի նոր ձևերն են գործածվում, այն ժամանակ հին ձևը հետզհետե մնում է միայն հին սերնդի մեջ, որի հետ և վերջապես մեռնում է՝ բոլորովին մոռացության տրվելով: Այսպիսով նոր կազմությունը, որ սկսվելով մի անհատից՝ սկզբում անսովոր և նույնիսկ սխալ է համարվում, դառնում է կիրառության սովորական և «ուղիղ» ձև, որով և լեզուն փոխվում է: Բազմաթիվ այսպիսի փոփոխությունների հետևանքը լինում է արդեն լեզվի ընդհանուր փոփոխությունը, որը, սակայն, տեղի է ունենում դարերի ընթացքում շատ դանդաղ և անզգալի» (էջ 46):

3) Նոր կազմության ձևերը, անհատից սկսվելով, կարող են ընդհանրանալ նաև այն ժամանակ, երբ լեզվի մեջ կան համապատասխան նշանակությամբ հին ձևեր, որոնք, սակայն, զուգորդության մեծ խմբերի մեջ չեն մտնում և ուրիշ ձևերի հետ սերտորեն կապված չեն և հաճախ չեն կրկնվում: Արեղյանը բերում է միայն նշանակությամբ զուգորդվող, հնչյուններով չզուգորդվող **«ուտեմ-կերա»** եղանակաժամանակային հակադրությունը՝ կանոնավոր «ուտեցի» ձևի կողքին, որը, սակայն, չի տարածվում (տե՛ս էջ 44): Այս դեպքում Արեղյանը անուղղակիորեն մատնանշում է լեզվում անկանոնությունների՝ կանոնական դառնալու ուղիներից մեկը՝ նշանակության և հնչյունների զուգորդության հիմքի վրա զուգորդական մեծ խմբերի մեջ մտնելը:

4) Բառի ոչ թե՛ իր սովորական, այլ մի նորիմաստ պատահական նշանակությամբ գործածելու հետևանքով (մեծ մասամբ՝ անգիտակցաբար): «Այսպիսի կիրառություններն ամենամեծ մասով վայրկենաբար գործածվելով՝ անցնում մոռացվում են: Բայց լինում է նաև, որ միննույն բառը միննույն պատահական նշանա-

կուրթյամբ գործածում ենք և երկրորդ ու երրորդ անգամ. այսպիսի դեպքերում պատահական նշանակությունը կրկնվելով գուգորդվում է բառի հնչյունական կողմի հետ, և այնուհետև ներգործում է նաև նախորդ գործածության հիշողությունը, և մենք շարունակում ենք բառը պատահական նշանակությամբ գործածել ոչ թե արտադրելով, այլ հինը վերարտադրելով: Եվ որովհետև անհատն ազդում է իր շրջապատողների լեզվական գուգորդությունների վրա, նրանք էլ, երբ հասկանում են մեկ ուրիշի պատահական նշանակությամբ գործածությունը, ընդունում են այդ, մանավանդ եթե իրենք էլ նույն վիճակի մեջ են գտնվում, այսինքն՝ կարիք են զգում իրենց պատկերացումն արտահայտելու և ուրիշ հարմար բառ չեն գտնում, քան իրենց լսածը: Բառերի այսպիսի նորինաստ պատահական գործածությունները սկզբում սովորաբար խորթ են թվում և շատ անգամ դրանք էլ կարճատև ապրելով մի փոքր շրջանում՝ մոռացվում են. բայց երբեմն հետզհետե տարածվելով՝ ընդհանրանում են և նույնիսկ սովորական դառնում» (էջ 47):

Մ. Աբեղյանը չի մոռանում և պատճառաբանում է նաև իմաստափոխության այն տեսակը, երբ բառերը պատահական նշանակությամբ են գործածվում, ժամանակակից տերմինաբանությամբ՝ **դիպլաձայնորեն: Բառամթերանոցում առանձին բառ չունենալու կամ այդ պահին չմտաբերելու, չհիշելու և նման** այսպիսի դեպքերում խոսողն իր պատկերացումները հաղորդում է ուրիշներին իր իմացած կամ նույն բայեին իր հիշած ըստ կարելվույն հարմար բառով՝ իր գաղափարի բովանդակության մի մասը, աչքի ընկնող մի հատկանիշ, էական կողմը արտահայտող կամ թե իր արտահայտելի գաղափարի հետ որևէ մոտ առնչություն ունեցող:

Աբեղյանը անհատի լեզվի ազդեցությամբ՝ լեզվի փոփոխություն առաջացնող ընդհանուր ձևերի կողքին նշում է նաև մասնակի ազդեցությունները, այսինքն՝ երբ նոր կազմությունը, ընդհանրանալով, պահում է հին ձևականության միայն մի կողմը, և բերում է հին լեզվի «ունիմ-կալայ» բայը, որի համար անալոգիական նոր կազմությամբ առաջ է եկել «ունեցա» ձևը, որ և գործածվում է «ունենալ» նշանակությամբ, իսկ հին կատարյալը՝ «կալայ», մնացել է և կա բարբառներում «բոնեցի» նշանակությամբ:

Աբեղյանը անտես չի առնում նաև անհատի լեզվում գուգաձևությունների, իր իսկ արտահայտությամբ՝ **«կրկին ձևերի»** առկայության խնդիրը: Եթե նոր ձևերը, երբ նրանց համապատասխան հին ձևերը չկան լեզվի մեջ, հեշտությամբ ընդունվում և տարածվում են, բայց երբ նոր ձևի համապատասխան հին ձևը կա, նոր ձևը, ինչպես և նոր արտասանությունը (որի համապատասխան հին արտասանություն միշտ կա), միանգամից չի ընդունվում և տարածվում: Սկզբում հինն ու նորը սովորաբար խառը գործածվում են նույնիսկ միևնույն անհատի «բերանին», կամ ոմանք պահում են հին ձևը, ուրիշները նորն են ընդունում: Բայց երբ այդպես տարբեր ձևերով խոսող մարդիկ անընդհատ հարաբերության մեջ են լինում, վերջիվերջո «մի հարթում» է տեղի ունենում, և հին ու նոր ձևերից մեկն ու մեկը, երկար մրցությունից հետո իշխում է, իսկ մյուսը մեռնում է: Աբեղյանը

բերում է «հուն» բառի նշանակության փոփոխությունը (տե՛ս էջ 45-46):

Իսկ ինչպե՞ս է լինում այդ «**մի հարթումը**» (միահարթումը): Ըստ լեզվաբանի՝ չպետք է կարծել, թե այսպիսի կրկին ձևերից նորը պետք է միշտ իշխի, այլ, ընդհակառակը, սովորաբար հինն է իշխում, իսկ նորը միաժամանակ մի փոքր շրջանում տարածվելուց հետո մեռնում է՝ տեղի տալով հինին, և սա աննկատ, անզգալի է մնում ընդհանրապես: Բայց եթե նոր կազմությունների «իշխումն ենք տեսնում», դա նշանակում է, որ նոր կազմություններում փոխվում է լեզվի կիրառությունը, և այդ փոփոխությունը զգալի է լինում մեզ համար: Այս դեպքում իր խոսքը հաստատելու համար Աբեղյանը կողք կողքի է դնում պատճառական բայերի հին ու նոր և նորագույն ձևերը (**զարմացուցի-զարմացրի-զարմացրեցի...**), կրավորական կրկին ձևերը (**մտցնվել-մտցվել, հեռացնվել-հեռացվել...**): Ավելին, Աբեղյան գիտնական-անհատը նշում է նաև զուգաձևություններից մի քանիսի ճակատագիրը՝ զարգացման միտումը. «Այսպես օրինակ՝ մեր հին գրական լեզվի և արևելյան բարբառների մեջ արդեն մոռացության է տրված հին «զարմացուցի» ձևը և իշխում է նոր «զարմացրի» ձևը: Բայց մեր խոսակցական լեզվի մեջ կա մի համեմատաբար ավելի ևս նոր կազմություն՝ «զարմացրեցի», որ հաճախ անխտիր գործ են ածում «զարմացրի» ձևի հետ միասին, չպետք է կարծել, թե անպատճառ այս նորագույն ձևը կիշխի, հավանորեն գրական լեզվի մեջ կշարունակի մնալ հին «զարմացրի» ձևը, որ ավելի կարճ է» (էջ 45): Կրավորականի զուգահեռ ձևերի համար նշում է, որ մի քառասուն տարի առաջ (իր ժամանակի համեմատությամբ) գործածում էին ավելի շատ դրանց առաջին ձևերը, իսկ այժմ ավելի աշխույժ են երկրորդ ձևերը, որոնք և հավանորեն պիտի իշխեն:

Մ. Աբեղյանը անուղղակի անդրադառնում է նաև անհատների **լեզվական ճաշակի** տարբերությանը՝ նշելով, որ հատկապես անհատների կողմից վերացական նշանակությամբ, մանավանդ զգացմունք և բարոյական հատկություններ ցույց տվող բառերի նշանակությունները ևս առանձնակի են:

Անհատի լեզվի ազդեցությամբ լեզվի փոփոխությունը Աբեղյանը աղերսակցում է գրագիտության, կրթվածության և քաղաքակրթվածության, խոսքիմշակութային արժեհամակարգի յուրացման սանդղակային ցուցիչներին: Եթե անհատը աղքատ է բառերի պաշարով, ուրեմն և ավելի տրամադիր է բառերը պատահական նշանակություններով գործածելու և ուրիշների գործածած պատահական նշանակությունները յուրացնելու: Եթե անհատը չի տիրապետում իր լեզվի կանոնական գործածությանը, լեզվի կանոնահամակարգի իմացության մեջ թերանում է, կիսատ-պռատություն դրսևորում, հետևաբար և աղճատում է լեզուն, մեղանչում լեզվի մաքրության, անաղարտության դեմ: Ակնարկներ կան անզամ գրագիտությամբ, մայրենիի իմացությամբ պայմանավորված դժվարությունների վերաբերյալ: Այսպես՝ Աբեղյանն ուղղագրության մեջ մտցված փոփոխությունների մասին խոսելիս մատնանշում է, որ հատկապես «գրագետ» անհատները դժվարությամբ են տանում դրանք, և պատճառաբանում է. նրանք, բացի բառերի հնչյունների լսողական և խոսքի գործարանի

մկանային շարժման պատկերացումներից, դրանց հետ զուգորդված ունեն նաև ամեն մի բառի տառերի գրության գորեղ տեսողական պատկերացումներ, այլև մկանային պատկերացումներ ձեռքի շարժումների, որ անհրաժեշտ են գրելիս (տե՛ս էջ 19):

Անհատի լեզվի հարստության մասին խոսելիս Մ. Աբեղյանը չափավորում է լեզվական հարստության չափը խորիմաստ բացատրությամբ. ինչքան էլ հարուստ լինի անհատի լեզուն, երբեք չի կարելի ասել, թե նա ամեն բան գիտի լեզվից, և եթե շատ բան գիտի, իր գիտեցածի մի մասն անպայման թույլ է: Ըստ որում՝ որպես լեզվի հարստության նախապայման՝ առանձնացնում է **կրկնության** դերը: Նոր բառերն ու դարձվածքները կամ բառերի նոր նշանակությունները, շարահյուսական նոր ձևերը, լեզվի մեջ եղած հին բառերն ու կապակցության ձևերը կրկնվելով են նորոգվում, զորանում ու ավելի գործուն դառնում: Եվ ընդհակառակը, շատ բան էլ, որ կրկնվելով չի նորոգվում մտքի մեջ, կա՛մ հետզհետե թուլանում է և դժվարությամբ է վերարտադրվում, կա՛մ բոլորովին մոռացվում է:

Ընդգծելով, որ մինչև մահն էլ մարդը երբեք չի դադարում լեզու սովորելուց (ինչպես ասվում է՝ «Մարդու կյանքն էլ մի մեծ Խոսք է»), լեզվի փոփոխության հարցում կարևորում է **տարիքային գործոնը (անչափահաս անհատ և չափահաս անհատ հակադրությամբ)**. այդ «ուսումը» մանկության ժամանակ ավելի արագ ու մեծ չափով է տեղի ունենում, քան չափահասության ժամանակ:

Անհատի լեզուն ի՞նչ հանգամանքներում է փոխվում: Աբեղյանը մե՛կ առ մե՛կ նշում է դրանք.

**ա)** անհատի լեզուն փոխվում է ուրիշ անհատների խոսքի ազդեցությամբ.

**բ)** միևնույն անհատի համար բառը նույնն է մնում, բառական պատկերացումները ընդարձակվում են նոր բան սովորելով.

**գ)** նույն բառի բառական պատկերացումները նեղանում են՝ հին իմացածը մոռանալով.

**դ)** ինքնաբերաբար: Խոսքի գործառության տիրույթում մարդը ոչ միայն վերարտադրում է իր սովորած-իմացած լեզվական իրակությունները, այլև համաբանության օրենքի ուժով արտադրում է այնպիսի ձևեր, որ ինքը չի սովորել, բայց լեզվի մեջ կան, և կամ որոնք ոչ միայն դրսից չեն մտել իր գիտակցության մեջ, այլև երբեք գոյություն չեն ունեցել: Մ. Աբեղյանը գրում է. «Այս անալոգիական ստեղծագործությունն ընթանում է 2 ուղղությամբ: 1. Առնում են լեզվի մեջ եղած բառերը, ինչպես «պաստառ» կամ նույնիսկ լեզվի մեջ նոր մտած մի օտարազգի բառ, ինչպես՝ «վաքս», «մագութ», և դրանցից կազմում են՝ «պաստառել», «վաքսել», «մագութել» և կանոնավորապես խոնարհում բոլոր ձևերով՝ լեզվի մեջ գոյություն ունեցող «թղթել», «եղել», «ձիթել» և նման բառերի անալոգիայով: ... 2. Հաճախ առաջ են գալիս և այնպիսի նոր անալոգիական կազմություններ, որոնց համապատասխան նշանակությամբ սովորական ձևեր կան լեզվի մեջ:

Այսպես, օրինակ՝ երեխաները և լեզուն նոր սովորողները, որոնց գիտակցության մեջ դեռ թույլ է «ուտեն-կերա» բառերի գուգորդությունը (որ միայն նշանակության վրա է հիմնված), նոր կազմում են «ուտեցի» ձևը: Գործածողն իհարկե չի նկատում, որ այս ձևը սովորական կիրառությանը համապատասխան չէ, քանի որ նա «ուտեն-ուտեցի» ձևը կազմում է «կտրեն-կտրեցի» մեծ խմբի անալոգիայով: Այդ սխալն, անշուշտ, երկար չի տևում, որովհետև «ուտեն-կերա» ձևը շատ գործածական լինելով՝ ուրիշներից շարունակ լսելով՝ յուրացնում են երեխաները» (էջ 42-43):

Անհատը սխալվում է. հնչյունների սովորական արտասանության համեմատությամբ սխալ կամ թերի արտաբերություն և շեշտադրում, բառի բովանդակության հավելում կամ պակասեցում, նոր ձևով հոլովում ու խոնարհում, շարահյուսական կապակցության նոր ձև, կանոնականի անկանոնականացում և հակառակը՝ անկանոնության կանոնիկացում և այլն: Եվ Մ. Աբեղյանը ուշադրություն է դարձնում նաև արտաքուստ ոչ այնքան կարևոր թվացող հետևյալ հարցին՝ ինչպե՞ս է սխալվում, շեղվում անհատը, և այդ սխալն ի՞նչ ուղղություններով է ձգվում, տարածվում, «կրկին ձևեր» առաջացնում, միտումների վերածվում, կամ՝ ճշտվում, ուղղվում և կամ՝ մերժվում, արգելակվում. այսինքն՝ անդրադառնում է անհատի սխալների «ճակատագրին»: Այսպես՝

**ա)** շատ անգամ անհատն ինքն է ուղղում իրեն՝ զգալով-նկատելով, որ դրանք համապատասխան չեն արդեն գոյություն ունեցող և իր սովորած հին ձևերին.

**բ)** անհատը չի նկատում իր սխալը, բայց նկատում են ուրիշները, և նա գլխի է ընկնում, որ սովորական ձևով չի խոսել.

**գ)** պատահում է թե՛ ինքը, թե՛ ուրիշները չեն նկատում սխալը, և այն արտաբերելուց հետո «անցնում-գնում է».

**դ)** բայց պատահում է նաև, որ այդպիսիները, աննկատելի մնալով թե՛ խոսողի և թե՛ լսողների համար, հարատևում են իբրև մի անհատի լեզվական սխալներ, որոնք կա՛մ անհատի հետ մեռնում են, կա՛մ երբեմն նաև անհատից անցնում են իր շրջապատին, նրանց մեջ էլ մնում են և նույնիսկ նրանցից անցնում հաջորդ սերնդին՝ լեզվի փոփոխության նոր սկզբնակետ դառնալով:

Մ. Աբեղյանը չի մոռանում նաև կանոնախախտող, սխալվող անհատին: Հիմնականում ովքե՞ր են այսպիսի անհատներ: Աբեղյանը պատասխանում է. մի կողմից՝ մանուկները-երեխաները. նրանք շատ բառեր չգիտեն, բառերի շատ նշանակություններ չգիտեն, չգիտեն տարբերություններ դնել բառերի պատահական ու սովորական նշանակությունների միջև, անսովորը սովորական են համարում, հեշտությամբ ընդհանրացնում են դրանք, հեշտությամբ յուրացնում են մեծերից լսած պատահական նշանակությունները, սխալ ձևերը, բայց աստիճանական ուսուցմամբ ուղղում են դրանք: Լեզվաբանը հետաքրքիր օրինակ է բերում՝ **շատ բաց գույնի թեյ** նշանակությամբ երեխան գործածում է **«թեյը ցերեկ է»** արտահայտությունը: Մյուս կողմից՝ չափահաս, բայց

կիսագրագետ և անուս, ինքնավերահսկողության թույլ գործակցով անհատների լեզվում են գերակշռում անճշտություններն ու անկանոնությունները, թերիմացությամբ պայմանավորված թերըմբռնումներն ու լեզվագործածության սխալները, «լեզվական վթարները», և այս դեպքում, երեխաների համեմատությամբ, անցնելիք ճանապարհը, այն էլ ցանկության դեպքում, շատ դժվար է...

**Անչափելի ժամանակի ցանկացած չափելի հատվածում յուրաքանչյուր հայ լեզվակիր** պետք է տիրապետի գրական հայերենին: Այս պայմանով Մ. Աբեղյանն անուղղակիորեն նշում է գրական լեզվի՝ անհատների լեզուները միացնելու-միասնականացնելու գործառույթը: Մյուս կողմից՝ գրական լեզուն կենդանի խոսակցական լեզու է, բնականաբար՝ ենթակա գիտակցական և անգիտակցական այն ազդեցություններին, որ բերում է խոսող, վերարտադրող և արտադրող անհատը, նաև՝ լսող-հաղորդակցվող-վերծանող անհատը՝ լինի գրական լեզվին (արևմտահայերենին, արևելահայերենին) կատարելապես տիրապետող թե՛ բարբառակիր անհատ, երկլեզվակիր թե՛ եռալեզվակիր... անհատ, գիտնական թե՛ բանաստեղծ անհատ, լինի գրագետ թե՛ կիսագրագետ-անգրագետ անհատ և այլն: Եվ սրանցից յուրաքանչյուրի լեզուն իր ծավալուն կամ ոչ ծավալուն կամ հպանցիկ ու ստվերային բնութագիրն ունի արեղյանական լեզվաքննության գուգահեռներում:

**Բարբառակիր անհատի լեզու:** Ամեն անհատ իր հետ բերում է հարազատ բարբառի «ոգին», իր բարբառի բույրն ու համը, իր բարբառով էլ՝ «ժողովրդականության դրոշմը»: Առավել հետաքրքրական է Աբեղյանի կողմից բարբառների և անհատների լեզվի միջև համեմատությունը. «...Խոսվածքի սովորական գործունեության հետևանքով կան միայն անհատական լեզուներ, որ կարելի է համարել առանձին-առանձին բարբառներ տարրական ձևով» (էջ 51): Ընդ որում՝ այս համեմատությունը ձգվում է մինչև ցեղակից լեզուներ՝ գնալով հասնելով նախալեզվի գոյության իրական փաստին, որի ծագումնաբանական հիմքում անուղղակիորեն կրկին անհատների լեզուն է դրվում:

**Օտարալեզու հայ անհատի և օտար լեզուներ իմացող անհատի լեզու:** Ամեն մի լեզվական հանրություն մեկուսացած չէ լեզվական այլ հանրություններից: Լեզվի փոփոխության գործոններից մեկը այլ լեզուների ազդեցությունն է, և նորից արեղյանական անխախտ տրամաբանական օրինաչափությամբ՝ մեծ փոփոխությունը սկսվում է անհատից, ա՛յն անհատից, ով խոսում է թե՛ իր ազգային լեզվով և թե՛ մի ուրիշ լեզվով (կամ լեզուներով), կամ ով չի խոսում, բայց հասկանում է մի ուրիշ լեզու: Մա սովորաբար անգիտակցաբար է լինում, սակայն լինում է նաև գիտակցաբար (հատկապես տերմինակազմության ժամանակ՝ գիտնական անհատների կողմից): Օտար լեզվի ազդեցությունը միայն փոխառյալ բառերի ու բառաձևերի, ձևությունների, կապակցության ձևերի ներմուծմամբ (հարկի կամ անհարկի) չի սահմանափակվում: Երբեմն անհատն իր

բնիկ բառին օտարամուտ նոր իմաստ է վերագրում և մայրենի բառը գործածում է մի նոր՝ հավելյալ նշանակությամբ: Օտար լեզուներից ճկունորեն և գիտակցաբար օգտվելու լեզվագործածական կարողությունը հարստացնում է անհատի լեզուն: Հակառակ ծայրում օտարաբան լեզվագործածությունը ազդում է հայ անհատի լեզվամտածողության վրա, երբեմն աղճատում է մայրենին: Ավելին՝ լեզվաշխարհի մի անխախտ օրենքն է կրկին բանաձևում Աբեդյանը. «**Երբ չափազանց մեծ է լինում մի լեզվի ազդեցությունը մի ուրիշ լեզվի վրա, վերջինս նույնիսկ կորստյան է մատնվում**»՝ եզրակացության իրավունքը մեզ թողնելով. **իր հայրենիքում ապրող հայ անհատի մայրենին հոգածության կարիքն ունի, և լեզվապաշտպանության և լեզվապահպանության այս կարիքը առանձնապես սրվում է, երբ հայ լեզվակիրը օտարի հայրենիքում է...**

Անհատի կողմից այլ լեզու գործածելու նախապայմանները տարբեր են: Աբեդյանը թվում է դրանցից մի քանիսը՝ **ա.** անհատը բարձր է գնահատում օտար լեզուն. **բ.** կրթված լինելու հատկանիշ է համարում, նաև «պարծանք է կարծում» ուրիշ լեզվով խոսելը. **գ.** իր ազգային լեզվում դրսեկ նոր գաղափարներին, մշակույթի նոր ձևերին, նոր արվեստներին, նոր առարկաներին համապատասխան բառեր, ազգային լեզվի համարժեքներ չլինելու պատճառով կամ թե դրանց լինելու դեպքում դրանց համարժեքային իմաստը կասկածի տակ առնելու. խոսողին թվում է, թե դրանք լիարժեքորեն չեն արտահայտում ա՛յն, ինչ օտար լեզվինը. **դ.** բոլոր կարիքին բավարարություն տալու համար օտար բառեր և կապակցության ձևեր է գործածում՝ ազգային լեզվի բառերն ու կապակցության ձևերը կա՛մ չիմանալու, կա՛մ չհիշելու՝ այդ պահին չմտաբերելու պատճառով:

**Բանաստեղծ անհատի լեզու:** Աբեդյանը չէր կարող չխոսել բանաստեղծ անհատի մասին: Բանաստեղծների ազդեցության շրջանակն ավելի ընդարձակ է, ուստի և նրանց գործածած պատահական և անկանոն նշանակությունները ավելի են տարածվում ու սովորական դառնում: Այս լեզվի առանձնահատկությունները նա առավելապես ցուցանում է գրականության զուգահեռականներում, հատկապես քնարական բանահյուսության ընդերքը պեղելիս առավել չափով ժողովրդական քնարերգուի, տաղասացի դերն է շեշտում: Այդ նրանք են, որ ազատորեն օգտվում են այլևայլ երգերի տներից ու տողերից, ինչպես մի հասարակաց պատրաստի մթերանոցից, բայց և իրենցն են ավելացնում և նոր մշակությամբ վերաստեղծում են փոփոխակներ՝ բառերի, բառաձևերի, կապակցության ձևերի և նրանց նշանակությունների փոփոխությամբ, նկարագրության ընդարձակմամբ, բառի ու հանգի, երբեմն նաև գաղափարների մեքենայական զուգորդությամբ, կրկնությամբ, նաև՝ բառերի աղճատումով, հետևառաջությամբ և փոխանակությամբ, առանց իմաստի փոփոխության՝ մեկերկու տողերի կամ տների պակասությամբ. այդ դեպքում առաջանում են ոչ միայն բովանդակային փոփոխակներ, այլև լեզվաոճական փոփոխակներ<sup>9</sup>:

<sup>9</sup> Տե՛ս Մ. Աբեդյան, Երկեր, հ. Բ (Հայ քնարական բանահյուսություն), Եր., 1967, էջ 102-108:



Ի ամփոփումս՝ Մ. Աբեղյանն ի նքն էլ ի ընդունի, ի ընդունի «բանի՛վ և գրչի՛վ» մեր լեզվի պատմության մեջ եղավ և կմնա իսկապես ստեղծագործող քերական Ան-հատ:

**ЗАРИК АГАДЖАНИЯН – Язык личности в параллелях языковой стандартизации Абегиана.** – М. Абегиан – приверженец школы личностной грамматики. По его мнению, законы языка подобны законам природы и общества. Они меняются, и именно человек осуществляет эти изменения. Каждый индивид, движимый требованием времени, в той или иной степени меняет язык, что может привести к изменению нормативной системы языка. Известный арменовед рассматривает язык отдельно взятого человека как конкретное выражение абстрактного языка. Теория отдельных языков М. Абегиана напрямую связана с проблемами современного общего языкознания, такими как происхождение языка, восстановление праязыка, возникновение родственных языков.

Великий лингвист связывает изменение языка с образованием человека, его знанием мира, языковым образованием, языковым вкусом, культурными ценностями.

М. Абегиан также является выдающейся личностью армянского народа, как лингвист, как ученый, как педагог и просветитель, а также литературный критик. Он по праву является «гигантом армянского языкознания».

**Ключевые слова:** норма, регулирование, нормализация, языковое правило, язык индивида, язык личности, изменение языка, изменение нормы


**ZARIK AGHAJANYAN – The Language of the Individual in the Parallels of Abeghyan’s Language Standardization.** – M. Abeghyan is a member of the *individual* grammar school. According to him, the rules of language are similar to the laws of nature and society. It changes, and the individual makes those changes. Every individual, motivated by the requirement of the time, changes the language, which can lead to the change of the normative system of the language. The famous specialist in the field of Armenian Studies considers the language of an individual person as a definite expression of an abstract language. M. Abeghyan’s theory of individual languages is directly related to the problems of modern general linguistics, such as the origin of language, the development of the proto-language, the emergence of related languages.

The great linguist connects the change of language with an individual’s education, his knowledge of the word, language education, language taste, cultural values.

M. Abeghyan is also an outstanding personality of the Armenian people, as a linguist, as a scientist, as a teacher and pedagogue, as a literary critic. He is rightly “The giant of Armenian linguistics”.

**Key words:** norm, regulation, standardization, linguistic rules, language of the individual, language change, norm change

ԱՐԵՎԵԼԱԶԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԱԲԵՂՅԱՆԱԿԱՆ  
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԻՏԱՐԿՎԱԾ ԱՐԴԻ  
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՄԱՆԿՅՈՒՆԻՑ

ՄԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ\*   
Երևանի պետական համալսարան

Փաստարկվում է, որ արդի արևելահայերենի այսպես կոչված ըղձական եղանակի և ենթադրական/պայմանական եղանակի ավանդական մեկնաբանությունը (որն առաջարկվել է Մ. Աբեղյանի կողմից) առարկություն է հարուցում ընդհանուր լեզվաբանության և լեզվաբանական տիպաբանության տեսանկյունից: Բանն այն է, որ արդի արևելահայերենի ըղձականը համատեղում է տիպաբանորեն հայտնի ստորադասականի և ըղձականի իմաստային գործառնությունների մեծ մասը, հետևաբար բառի բուն իմաստով ըղձական (optativus) չէ: Ավելի տեղին կլիներ այն բնորոշել որպես ստորադասաըղձական:

Ինչ վերաբերում է արդի արևելահայերենի *կ(ը)- ապառնիին* (որն ավանդաբար ոչ ճիշտ կերպով մեկնաբանվում է որպես ենթադրական/պայմանական եղանակ), իրականում այն չի տարբերվում այլ լեզուների սահմանական ապառնիից իմաստագործառնության տեսանկյունից: Ինչպես ցույց են տվել մի շարք հետազոտողներ, ապառնի ժամանակը երբեք մաքուր ժամանակային կարգ չէ. ապառնիությունն անհրաժեշտաբար ներառում է կանխատեսման տարր կամ դրան առնչակից որևէ եղանակային հասկացություն: Ըստ այդմ՝ արդի արևելահայերենի *կ(ը)- ապառնիին* նույնպես ներառում է ն՝ ժամանակային, և՛ եղանակային իմաստային բաղադրիչներ, որոնց հարաբերակցությունը կարող է տարբեր լինել՝ կոնկրետ համատեքստից և բայաձևի դեմքից կախված: Մակայն *կ(ը)- ապառնիին* համապատասխան անցյալի ձևերը արդի արևելահայերենում հիմնականում գործառում են որպես պայմանական եղանակ (conditionalis):

\* Մարգիս Ավետյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ

Саргис Аветян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания, ЕГУ

Sargis Avetyan – PhD, Associate Professor at the Chair of the Armenian Language History and General Linguistics, YSU

Էլ. փոստ՝ [sargisavetyan@ysu.am](mailto:sargisavetyan@ysu.am). ORCID: <https://orcid.org/0000-0001-9474-7129>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 09.01.2024

Գրախոսվել է՝ 06.02.2024

Հաստատվել է՝ 10.02.2024

© The Author(s) 2024

**Բանալի բառեր** – արդի արևելահայերեն, ըղձական եղանակ, ենթադրական/պայմանական եղանակ, ստորադասարդձական, կ(ը)- ապառնի, ապառնիություն, եղանակային հասկացություն

Դժվար է գերագնահատել Մ. Աբեղյանի դերը ինչպես արդի արևելահայերենի ամբողջ քերականական համակարգի, այնպես էլ բայի եղանակաժամանակային ձևերի գիտական խորը ուսումնասիրության և համակարգված նկարագրման հարցում: Ըստ Մ. Աբեղյանի՝ Մ. Պալասանյանը և նրա հետևողությամբ ուրիշները արդի արևելահայերենի բաղադրյալ ժամանակների հետ վարվում են քմահաճորեն, քանի որ «անհասկանալի է մնում, օրինակ, թե ինչ արտոնությամբ խոնարհման մեջ իբրև առանձին ժամանակներ մտել են՝ **կարդացել եմ, կարդացել էի**, և արհամարհված, դուրս են ձգված նման կազմության ձևերը՝ **կարդալու եմ, կարդալու էի**» (էջ 93)<sup>1</sup>: Հայերենի եղանակաժամանակային ձևերը համակարգելու համար, ըստ նրա, հարկավոր է ճիշտ որոշել մեր բայի եղանակներն ու ժամանակները, նախևառաջ այն, թե քանի՞ եղանակ կա մեր խոնարհման մեջ և հատկապես ո՞ր եղանակները (էջ 93):

Ուստի Մ. Աբեղյանը նախ բայի եղանակները բնորոշում է ընդհանուր իմացաբանական տեսանկյունից, իսկ այնուհետև փորձում պարզել, թե դրանք ինչ դրսևորում ունեն արդի արևելահայերենում: Ըստ այդմ՝ «բայի եղանակները բաժանվում են երկու խմբի, առաջին՝ եղանակներ, որոնցով կազմվում են դատողության խոսքեր, երկրորդ՝ եղանակներ, որոնցով կազմվում են ցանկության խոսքեր» (էջ 93): Նշենք նաև, որ Մ. Աբեղյանը հայերենի քերականական ձևերի ձևաբանական կարգավիճակը բնութագրելիս անհրաժեշտաբար հաշվի է առնում այլ լեզուների (հատկապես հնդեվրոպական լեզուների համեմատական քերականությունից հայտնի) համապատասխան լեզվական երևույթները և քերականական եզրույթները՝ դրանց համար կերտելով հայերեն համարժեքներ, ինչպես՝ optativus - ըղձական, potentialis – կարելիական, conjunctivus – շողկապական, deliberativus – խորհրդակցական, dubitativus – երկբայական ևն, որոնք, սակայն, ցավոք սրտի, բավարար չափով հաշվի չեն առնվում մեր հետագա քերականների կողմից:

Անդրադառնալով կը մասնիկով կազմություններին (*կը գնամ, կը գնայի* ևն)՝ Մ. Աբեղյանը քննադատում է Մ. Պալասանյանին, քանի որ վերջինս այս երկու նույն կազմությունը և «նույն եղանակավորությունն ունեցող ձևերից առաջինները՝ **կը գնամ, գնացած կլինեմ**՝ դրել է իբրև սահմանական, իսկ անցյալը **կը**

<sup>1</sup> Այստեղ և հետագա շարադրանքում արևելահայերենի բայի եղանակների վերաբերյալ Մ. Աբեղյանի տեսակետը ներկայացնելիս մեջբերումների և հղումների ժամանակ փակագծերում նշվում են նրա հետևյալ հոդվածի վերահրատարակված տարբերակի համապատասխան էջերը՝ Մ. Աբեղյան, Բայի եղանակներն արևելյան աշխարհաբարում, «Արարատ», 1912, № 2, էջ 170-181, № 3, էջ 261-271՝ արդի ուղղագրությամբ և մասնակի շտկումներով վերահրատարակված Ալ. Ս. Մարգարյանի կողմից «Բայի եղանակների արժեքավոր ուսումնասիրություն» վերնագրով //ԲԵՀ, Եր., 2000, №1 (100), էջ 92-103:

**գնայի, գնացած կլինեի** ֆրանս. քերակ. ազդեցության տակ դրել է իբրև պայմանական... Եթե **կը կարդայի** ձևն իբրև «պայմանական եղանակ» է դրվում... ինչո՞ւ **կը կարդամ** ձևը նույնպես չպիտի դրվի իբրև պայմանական, քանի որ դա ևս նույնչափ իբրև պայմանավորված խոսք է գործածվում, որչափ և «կը կարդայի» ձևը. ես գիրք կը կարդայի, եթե ժամանակ ունենայի. ես գիրք կը կարդամ, եթե ժամանակ ունենամ: Բացի այդ... դա ևս մենակ, առանց որևէ պայմանի, գործ է ածվում, ինչպես և **կը կարդամ** ձևը» (էջ 95-96): Այսպիսով՝ Մ. Աբեղյանը գտնում է, որ **կը գնամ** և **կը գնայի** ձևերը ո՛չ կազմությամբ, ո՛չ եղանակով միմյանցից չեն տարբերվում, և որ «որանց տարբերությունը միայն ժամանակով է, ինչպես և նույն կազմությունն ունեցող մյուս ձևերը՝ **գնամ, գնայի. գնում եմ, գնում էի. գնացել եմ, գնացել էի** – ոչ թե եղանակով են իրարուց տարբերվում, այլ միայն ժամանակով: Ուստի եթե **կը գնամ** ձևը սահմանական է դրվում, նույնպես պիտի դրվի և **կը գնայի** ձևը, և ընդհակառակն, եթե **կը գնայի** պայմանական է, նույնը պիտի լինի և **կը գնամ** ձևը:

Ես սակայն մեր այս **կը** մասնիկով կազմությունը ոչ սահմանական եմ համարում և ոչ պայմանական, այլ մի կարելիական կամ ենթադրական եղանակ, կամ լավ ևս՝ ըղձական եղանակ կարելիական նշանակությամբ» (էջ 96):

Նա համաձայն չէ Մ. Պալասանյանի հետ նաև մեր **գնամ, գնայի** ևն նման ձևերը իբրև ստորադասական եղանակ բնորոշելու հարցում՝ հետևյալ պատճառաբանմամբ: *Ստորադասական եղանակ անվանումն առհասարակ պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ եղանակային ձևը հիմնականում կազմում է ոչ թե գլխավոր կամ անկախ խոսք, այլ երկրորդական խոսք՝ իրենից առաջ սովորաբար ստանալով ստորադասական «որ» կամ մեկ այլ շաղկապ, ինչպես, օրինակ, ֆրանս. subjonctif «ստորադասական» եղանակը, որը գրեթե միշտ հանդես է գալիս que «որ, թե» շաղկապով: Այնինչ «հայերենի **գնամ, գնայի** ձևերը թե անկախ ու գլխավոր խոսքեր են կազմում և թե երկրորդական. գնա՛մ, տեսնեմ նրան. Աստված հոգին լուսավորե. գնացի, որ տեսնեմ նրան» (էջ 96): Մյուս կողմից, ըստ Մ. Աբեղյանի, «մեր այս եղանակն իր նշանակությամբ համապատասխան չէ նաև լատիներենի ու հունարենի conjunctivus շաղկապական եղանակին, որ թե դատողության և թե ցանկության խոսքեր են կազմում. մեր **գնամ, գնայի** ձևերը միշտ ցանկության խոսքեր են կազմում և երբեք դատողության խոսքեր» (էջ 96): Այստեղ կուզենայինք երկու կարևոր դիտարկում կատարել:*

Ինչ խոսք, բավարար հիմք կա ենթադրելու, որ ստորադասական եղանակի (subjunctive mood) սկզբնական և հիմնական իմաստագործառության տիրույթը ոչ հաստատական, ոչ իրագործված ստորադասական նախադասություններն (non-assertive/non-realized subordinate clauses) են, իսկ գլխավոր նախադասությ-

յուններում ստորադասական եղանակաձևի գործածությունը հետագա գործառության ընդլայնման արդյունք է<sup>2</sup>: Այդուհանդերձ ստորադասական եղանակաձևի նաև գլխավոր նախադասություններում հանդես գալը տիպաբանորեն բավական հաճախակի էրևում է: Հետևաբար տվյալ եղանակաձևի *ստորադասական* անվանումը, որը պայմանավորված է նրա սկզբնական իմաստագործառության տիրույթով, համաժամանակյա տեսանկյունից չի ընդգրկում այդ եղանակաձևի տիպաբանորեն հայտնի իմաստագործառության ողջ ծավալը: Այլ կերպ ասած՝ ի տարբերություն ֆրանսերենի՝ շատ լեզուներում (այդ թվում՝ հին հունարենում, լատիներենում, վեդայական հնդկերենում, հին հայերենում են) ստորադասական եղանակը տարբեր իմաստային գործառություններով հանդես է գալիս թե՛ գլխավոր (անկախ) և թե՛ երկրորդական նախադասություններում<sup>3</sup>: Ըստ այդմ՝ արդի արևելահայերենի ըղձական եղանակի կիրառությունը նաև գլխավոր (անկախ) նախադասություններում սկզբունքորեն չի կարող խանգարել նրա իբրև ստորադասական եղանակ բնորոշվելուն:

Մյուս կողմից՝ այն հանգամանքը, որ Մ. Աբեդյանը, ինչպես վերը տեսանք, լատ. subjunctivus (ֆրանս. subjunctif) եզրույթի համար գործածում է հայերեն *ստորադասական եղանակ* եզրույթը, իսկ լատ. conjunctivus եզրույթը հայերեն բառացի թարգմանում է իբրև *շաղկապական եղանակ*, կարող է այնպիսի թուր սպավորություն ստեղծել, թե տվյալ դեպքում գործ ունենք երկու առանձին եղանակների հետ: Այնինչ լատ. *modus conjunctivus* և *modus subjunctivus* եզրույթները (հմմտ. նաև ռուս. *согласительное наклонение – конъюнктив, субъюнктив* եզրույթային համարժեքությունը)<sup>4</sup> լեզվաբանության մեջ սովորաբար գործածվում են միևնույն իմաստով<sup>5</sup>, և այդ երկու անվանումների դեպքում էլ, ըստ էության, նկատի են առնված տվյալ եղանակաձևի՝ ստորադասական շաղկապ(ներ)ով գործածությունները բարդ ստորադասական նախադասություններում: Այդ առումով թե՛ subjunctivus (ստորադասական) և թե՛ conjunctivus (շաղկապական, կապակցական) եզրույթները զգալիորեն պայմանական են, քանի որ այդ անվանումները, ինչպես նշվեց, չեն արտացոլում տվյալ եղանակի տիպաբանորեն հայտնի իմաստագործառության ողջ ծավալը:

<sup>2</sup> Տե՛ս **M. Haspelmath**, The Semantic Development of Old Presents. New Futures and Subjunctives without Grammaticalization // *Diachronica*, 15:1, 1998, էջ 35, տողատակի ծան. 9:

<sup>3</sup> Հմմտ. **W. W. Goodwin**, Syntax of the Moods and Tenses of the Greek Verb, rewritten and enlarged, Ginn and Company, 1897, էջ 1-6, 76-296, **Ch. E. Bennett**, A Latin Grammar, Boston and Chicago, Reprinted by Global Language Press, 2006, էջ 176-212, **A. Macdonell**, A Vedic Grammar for Students, Oxford, 1916, էջ 352-360, **Ս. Ավետյան**, Աստվածաշնչում հին հայերենի ստորադասական եղանակի կիրառությունների քննություն հունարեն բնագրի համեմատությամբ // «ՎԷՄ» համահայկական հանդես, Եր., 2022, թիվ 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 139-172:

<sup>4</sup> Տե՛ս [https://ru.wikipedia.org/wiki/Согласительное\\_наклонение\\_\(մուտք\)](https://ru.wikipedia.org/wiki/Согласительное_наклонение_(մուտք)) 25.11.2023):

<sup>5</sup> Ընդհանուր առմամբ, գերմանալեզու լեզվաբանական գրականության մեջ ստորադասական եղանակի համար ընդունված է լատ. conjunctivus (գերմ. Konjunktiv) եզրույթը, իսկ, ասենք, անգլիական և ֆրանսիական լեզվաբանական ավանդույթը գործածում է լատ. subjunctivus (անգլ. subjunctive, ֆրանս. subjunctif) տարբերակը:

Նկատենք նաև, որ թեև Մ. Աբեղյանը պնդում է, որ արդի արևելահայերենի ըղձական եղանակի ձևերը (**զնամ, զնայի** են) «միշտ ցանկության խոսքեր են կազմում և երբեք դատողության խոսքեր» (էջ 96), այդուհանդերձ նա ստիպված է խոստովանել, որ ցանկության խոսքեր կազմող մեր ըղձական եղանակն «իր գործածությամբ մի տեսակ խառնուրդ է conj. և opt. (այն է՝ ստորադասական և ըղձական – Մ. Ա.) եղանակների, այսինքն՝ իր մեջ ունի մասամբ conj.-ի նշանակություն (առանձնապես իբրև conj. deliberativus գործածության մեջ), բայց մի անսովոր երևույթ չէ լեզուների մեջ, որ մի եղանակն երկու եղանակի խառնուրդից կազմված լինի» (էջ 97):

Իհարկե, ստորադասականի և ըղձականի գործառնությամբ միախառնումը մեկ եղանակաձևի մեջ անսովոր երևույթ չէ, և այն տեղի է ունեցել հնդեվրոպական նաև մի շարք այլ լեզուներում, այդ թվում՝ լատիներենում, որի conjunctivus եղանակն իր մեջ համատեղում է հնդեվրոպական ստորադասական (conjunctivus/subjunctivus) և ըղձական (optativus) եղանակների գործածությունները<sup>6</sup>: Բայց ամբողջ հարցն այն է, որ եթե ընդունում ենք, որ մեր ըղձականը ևս իր գործածությամբ մի տեսակ խառնուրդ է conjunctivus և optativus եղանակների, կարծում ենք՝ այդ դեպքում անընդունելի է Մ. Աբեղյանի այն պնդումը, որ իբր «մեր **զնամ, զնայի** ձևերը միշտ ցանկության խոսքեր են կազմում և երբեք դատողության խոսքեր» (էջ 96):

Մեր համոզմամբ՝ արդի արևելահայերենի ըղձականի **զնամ, զնայի** և նման ձևերի համար ավելի տեղին է գործածել Գ. Ջահուկյանի առաջարկած *ստորադասաըղձական* եզրույթը<sup>7</sup>, քանի որ մեր այժմյան ըղձականը համատեղում է ստորադասական և ըղձական եղանակների գործածությունների մեծ մասը: Սակայն այստեղ խնդիրը եզրույթը չէ, եթե հաշվի առնենք, որ նույնիսկ նախկին ստորադասականի և ըղձականի տարբերակումը պահած հնդեվրոպական լեզուներում (ասենք, հին հունարենում) այդ տարբերակումը որոշ չափով պայմանական է, քանի որ conjunctivus/ subjunctivus (ստորադասական) և optativus (ըղձական) եղանակները կարող են արտահայտել թե՛ ցանկության և թե՛ դատողության խոսքեր: Բացի այդ, հայտնի է, որ հնդեվրոպական ստորադասական և ըղձական եղանակները ևս որոշակի գործառնությամբ ընդհանրություններ են ունեցել, որն էլ նպաստել է հետագայում ցեղակից մի շարք լեզուներում նախկին ստորադասականի և ըղձականի գործառնությամբ միախառնմանը<sup>8</sup>, մի հանգամանք, որը, ի դեպ, նշում է նաև Մ. Աբեղյանը (տե՛ս էջ

<sup>6</sup> Հմմտ. **Ch. E. Bennett**, նշվ. աշխ., էջ 176-179:

<sup>7</sup> Տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան**, Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, «Համագրային», 2000, էջ 303:

<sup>8</sup> Հմմտ. **K. Brugmann**, Kurze vergleichende Grammatik der indogermanischen Sprachen, Strassburg, 1904, էջ 578-585, **M. Meier-Brügger**, Indo-European Linguistics, Berlin' New York: Walter de Gruyter, 2003, էջ 256-259, նաև՝ էջ 176-179, **J. Kuryłowicz**, The Inflectional Categories of Indo-European, Heidelberg, 1964, էջ 136-145, **J. Lyons**, Semantics, Vol. 2, Cambridge University Press, 1977, էջ 815-818:

97): Հետևաբար, անկախ այն բանից՝ արդյոք մենք **զնամ**, **զնայի** ձևերի համար պահպանում ենք Մ. Աբեղյանի առաջարկած ըղձական անվանումը, թե՞ գրաբարի քերականագիտական ավանդույթի հետևողությամբ վերագործածում ենք ստորադասական եզրույթը, թե՞ ընդունում ենք ստորադասաըղձական անվանումը, կարևոր է արձանագրել այն փաստը, որ ինչպես հին հայերենի ստորադասականը, այնպես էլ արդի արևելահայերենի ըղձականը համատեղում են ստորադասականի և ըղձականի գործառույթներ:

Կարծում ենք՝ պատմականորեն առարկություն է հարուցում նաև այն, որ Մ. Աբեղյանը արդի արևելահայերենի *կը*-ով ձևերի կազմությունը և ձևաբանական կարգավիճակը լուսաբանելիս զուգահեռ է անցկացնում հին հունարենի *an* մասնիկով ըղձական եղանակի (*optativus*)՝ կարելիական (*potentialis*) իմաստով գործածության և հայերենի *կը*-ով ձևերի նույն իմաստով գործածության միջև՝ գտնելով, որ երկու դեպքում էլ կարելիական եղանակի իմաստն արտահայտվում է ըղձական եղանակի վրա համապատասխան մասնիկի ավելացմամբ: Բանն այն է, որ հին հունարենում *an* մասնիկն ավելանում է հենց ըղձական եղանակաձևի վրա:

Մինչդեռ երբ հայերենի պատմական զարգացման ընթացքում *կը* մասնիկի նախատիպն ավելացել է այժմյան ըղձականաձև բայական մասի վրա, վերջինս բառիս բուն իմաստով ըղձական չէր, այլ համատեղում էր սահմանական ներկայի, ստորադասականի և ըղձականի գործածությունները: Եվ հենց այդ քերականական բազմիմաստությունից ազտվելու ձգտումն է եղել *կու* (*կը*)-ով սահմանական ներկայի նոր ձև ստեղծելու բուն դրդապատճառը: Այնպես որ արդեն միջին հայերենում *կու*-ով ձևը հիմնականում գործածվում է սահմանական եղանակի, իսկ *կու*-ից զուրկ ձևը՝ ստորադասականի կամ ստորադասաըղձականի իմաստով<sup>9</sup>: Բնարկե, *կու*-ով ձևը միջին հայերենում արտահայտում է ոչ միայն սահմանական ներկայի (և անցյալ անկատարի), այլև ապառնիի իմաստ<sup>10</sup>, սակայն հայտնի է, որ ապառնիի իմաստ արտահայտելը *կու*-ով ձևի առաջնային գործածությունը չի եղել<sup>11</sup>:

Ինչ վերաբերում է արդի արևելահայերենում *կ(ը)*-ով ձևերի ձևաբանական կարգավիճակին, վերջինս, ինչպես հայտնի է, Մ. Աբեղյանի հետևողությամբ ավանդաբար բնորոշվում է իբրև ենթադրական (կամ պայմանական) եղանակ: Բնարկե, մի շարք լեզվաբաններ, որոնք *կ(ը)*- *ապառնին* դիտում են որպես

<sup>9</sup> Տե՛ս **J. Karst**, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901, էջ 299-305: Հմմտ. նաև **Ա. Այտընեան**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, մաս (2-րդ)՝ Քերականություն արդի հայերեն լեզուի, էջ 75, **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 303:

<sup>10</sup> Տե՛ս **J. Karst**, նշվ. աշխ., էջ 305-306:

<sup>11</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 303-305: Հմմտ. նաև **Ս. Ավետյան**, **Կու** (**Կը**) մասնիկով կազմություններն արևելահայերենում (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն) // «Վեմ» համահայկական հանդես, 2021, թիվ 4 (76), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 136-149:

պայմանական կամ ենթադրական եղանակ, այդուհանդերձ նշում են, որ *կ(ը)-* *ապառնին* շատ հաճախ արտահայտում է ստույգ կատարելի գործողություն:

Այդ առումով հատկապես ուշագրավ է Ա. Ղարիբյանի հետևյալ բնորոշումը. «Պայմանական կամ ենթադրական եղանակին պատկանող բայաձևերը ցույց են տալիս ենթակայի կատարելիք մի գործողություն կամ եղելություն, որի կատարումը **հաճախ** ստույգ է, **երբեմն** պայմանական կամ ենթադրական է»<sup>12</sup> (ընդգծումը մերն է – Ս. Ա.): Ըստ այդմ՝ Ա. Ղարիբյանն ընդունում է, որ *կ(ը)-* *ապառնին* ավելի հաճախ ստույգ, քան պայմանական/ենթադրական գործողություն/եղելություն է արտահայտում, բայց, չնայած դրան, նա նախընտրում է պահպանել *պայմանական կամ ենթադրական եղանակ* եզրույթը: Նույնիսկ Գ. Ջահուկյանը, ընդունելով հանդերձ, որ որպես հավաստի արձանագրվող յուրաքանչյուր ապագա (ապառնի) եղելություն ենթադրական է, և որ հաստատ, որոշակի ենթադրություն արտահայտող *կ(ը)* մասնիկով օժտված *կ(ը) գնամ, կ(ը) գրեմ* տիպի բայաձևերը, ըստ էության, սահմանական եղանակի արժեք են ստանում, ավանդույթի ուժով դարձյալ պահպանում է *ենթադրական եղանակ* անվանումը<sup>13</sup>:

Մինչդեռ Ս. Պալասանյանը «Ընդհանուր տեսությամբ արեւելեան նոր գրաւոր լեզուի հայոց» աշխատության մեջ *կ(ը)-* *ապառնին* (կը գրեմ, կ'իմանամ) համարում է սահմանական եղանակի ժամանակաձև, իսկ *ու-* *ապառնին* (գրելու եմ, իմանալու եմ)՝ երկրորդական բաղադրյալ ժամանակաձև՝ *ապառնի ըղձական (ներկա)*<sup>14</sup>: Թեև *կ(ը)*-ով օժտված անցյալի ապառնին (կը գրէի, կ'իմանայի) ևս նա հիշյալ աշխատության մեջ ներառում է սահմանական եղանակի ժամանակաձևերի շարքում *երկրորդ կամ պայմանական ապառնի* անվանմամբ, բայց միևնույն ժամանակ նշում է, որ վերջինս «գրեթէ միշտ ֆրանս. պայմանական եղանակի ներկայ ժամանակի (Conditionnel présent) միտքն ունի»<sup>15</sup>: Իսկ սհա իր հաջորդ քերականական աշխատության մեջ Ս. Պալասանյանը *կ(ը)*-ով օժտված անցյալի ապառնին (կը գրէի, կ'իմանայի) արդեն առանձնացնում է որպես ինքնուրույն պայմանական եղանակ<sup>16</sup>: Մեր հետագա քերականները Ս. Աբեղյանի հետևողությամբ Ս. Պալասանյանին հաճախ քննադատել են քերականական ձևերի նկարագրության հարցում համաչափության սկզբունքը չպահպանելու համար. քննադատության հեղինակների կարծիքով՝ ինչպես *կ(ը)-* *ապառնին*, այնպես էլ դրա համապատասխան *անցյալի ապառնին* պետք է բնորոշվեն նույն

<sup>12</sup> Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի քերականության դասագիրք հինգերորդ և վեցերորդ դասարանների համար, Եր., 1950, էջ 231: Հմտ. նաև **Զ. Բարսեղյան**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն: Պատմական ակնարկ, Եր., 1953, էջ 235-245, **J. Dum-Tragut**, Armenian: Modern Eastern Armenian, Amsterdam/Philadelphia, 2009, էջ 251-258:

<sup>13</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 246:

<sup>14</sup> Տե՛ս **Ս. Պալասանեան**, Ընդհանուր տեսությամբ արեւելեան նոր գրաւոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 67-70, 73-74:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 70: Հմտ. նաև էջ 77 հջ. հարացույցային օրինակները:

<sup>16</sup> Տե՛ս **Ս. Պալասանեան**, Քերականություն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1874, էջ 141-156:



սկզբունքով և, ըստ այդմ, դիտվեն որպես միևնույն եղանակի ձևեր<sup>17</sup>:

Նկատենք, սակայն, որ լեզուներում քերականական ձևերի իմաստային զարգացումը ոչ միշտ է տեղի ունենում համաչափության սկզբունքով: Ըստ այդմ՝ սկզբնապես գործառության տեսանկյունից համաչափական հարաբերության մեջ գտնվող ներկայի և անցյալի բայաձևերի հետագա իմաստային զարգացումները կարող են և չհամընկնել, ինչպես եղել է, օրինակ, անգլ. *will + ինֆինիտիվ* ապառնի և *would + ինֆինիտիվ* անցյալի ապառնի ձևերի դեպքում: Հին անգլերենում *would*-ը *will* «կամենալ, ցանկանալ» բայի անցյալի ձևն էր, հետևաբար սկզբնապես երկու կառույցներն էլ համաչափական ձևաիմաստային փոխհարաբերության մեջ էին գտնվում: Մակայն այդ երկու կառույցների հետագա զարգացման ընթացքում սկզբնական իմաստագործառության զուգահեռականությունը զգալիորեն խախտվել է, այնպես որ *would*-ով կառույցը այժմ հանդես է գալիս նաև որպես անցյալի սովորության (habitual) կերպի ձև, մինչդեռ *will*-ով կառույցին բնորոշ չէ սովորության (habitual) կերպի իմաստ<sup>18</sup>: Նմանապես սկզբնական համաչափական փոխհարաբերությունը խախտվել է Լոռու խոսվածքում հին հայերենի սահմանական ներկայի և անցյալ անկատարի հետագա իմաստագործառության զարգացման ընթացքում. ըղձական անցյալը խոսվածքում պահպանել է իր սկզբնական՝ անցյալ անկատարի իմաստով գործածությունը այժմյան ըղձականի կիրառություններին զուգահեռ, մինչդեռ ըղձական ներկան չի պահպանել իր սկզբնական՝ սահմանական ներկայի գործածությունը, այլ հանդես է գալիս միայն արդի գրական արևելահայերենի ըղձականի իմաստային գործառությոններով<sup>19</sup>:

Հետևաբար բնավ էլ պարտադիր չէ, որ արդի գրական արևելահայերենի *կ(ը)- ապառնին* և *կ(ը)*-ով օժտված անցյալի ձևերը (անցյալի ապառնին) միևնույն եղանակային կարգավիճակն ունենան. դրանք սկզբունքորեն կարող են բնորոշվել միմյանցից անկախ՝ արդի արևելահայերենի լեզվական կորպուսում իրենց հիմնական և առավել հաճախադեպ իմաստային գործառյթ(ներ)ի հիման վրա:

Մենք մեր հոդվածներից մեկում փորձել ենք ցույց տալ, որ արդի արևելահայերենի թե՛ *ու- ապառնին* և թե՛ *կ(ը)- ապառնին* ընդհանուր լեզվաբանական և տիպաբանական տեսանկյունից պետք է դիտել որպես սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևեր՝ դրանցից առաջինը բնորոշելով որպես *սպասելի կամ նախորոշված ապառնի*, իսկ երկրորդը՝ *պարզ ապառնի*<sup>20</sup>: Բանն այն է, որ արդի արևելահայերենի *կ(ը)- ապառնին* իմաստագործառության

<sup>17</sup> Տե՛ս, օրինակ, **Հ. Բարսեղյան**, նշվ., աշխ., էջ 52-53:

<sup>18</sup> Տե՛ս **J. Bybee, R. Perkins, W. Pagliuca**, *The Evolution of Grammar. Tense, Aspect, and Modality in the Languages of the World*, Chicago-London, 1994, էջ 156-157:

<sup>19</sup> Հմմտ. **Մ. Ասատրյան**, Լոռու խոսվածքը, Եր., 1968, էջ 124, նաև՝ էջ 24-25:

<sup>20</sup> Տե՛ս **Ս. Ավետյան**, Արդի արևելահայերենի *կը- ապառնի* և *ու- ապառնի* իմաստագործառության փոխհարաբերության հարցի շուրջ // «ԲԵՀ. Բանասիրություն», Եր., 2022, № 2 (38), էջ 22-35:

տեսանկյունից էապես չի տարբերվում այլ լեզուների սահմանական ապառնիից, եթե հաշվի առնենք, որ յուրաքանչյուր ապագա (ապառնի) եղելություն/գործողություն երբեք մաքուր ժամանակային իմաստ չունի, այլ անհրաժեշտաբար ներառում է նաև կանխատեսման (ենթադրականության) կամ նման որևէ եղանակային իմաստ<sup>21</sup>: Ըստ այդմ՝ մեր *կ(ը)- ապառնիի* իմաստային դաշտը ևս ներառում է «հավաստիություն» և «ենթադրականություն, հավանականություն» իմաստային բաղադրիչները: Ընդ որում՝ վերջիններիս հարաբերակցության աստիճանը *կ(ը)- ապառնիի* իմաստային տիրույթում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, բայիմաստով, բայական դեմքով և խոսքային համատեքստով պայմանավորված, կարող է տարբեր լինել՝ մեկի կամ մյուսի գերակշռությամբ:

Ինչ վերաբերում է *կ(ը)*-ով օժտված անցյալի ձևերին (անցյալի ապառնիին), դրանց եղանակային կարգավիճակի մասին վերջնական խոսք ասելու համար հարկավոր է ձեռքի տակ ունենալ այդ բայաձևերի գործառնություններից յուրաքանչյուրի հաճախագործածության վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ արդի արևելահայերենի կորպուսային ուսումնասիրության հիման վրա, որը, սակայն, դեռևս արված չէ: Այդուհանդերձ, լեզվական ներքին զգացողությունն անգամ, կարծում ենք, վկայում է Ս. Պալասանյանի վերը նշված տեսակետի օգտին, այսինքն՝ որ *կ(ը)*-ով օժտված անցյալի ձևերը հիմնականում գործառնում են պայմանական եղանակի (*conditionalis*)<sup>22</sup> իմաստով:

Այսպիսով՝ թեև անուրանալի է Ս. Աբեղյանի վիթխարի դերը արդի արևելահայերենի քերականական համակարգի գիտական խորը նկարագրության հարցում, այդուհանդերձ ըղձականի և ենթադրականի եղանակային կարգավիճակի և իմաստագործառնության առանձնահատկությունների արեղյանական մեկնաբանությունն առարկություն է հարուցում ընդհանուր լեզվաբանության և լեզվաբանական տիպաբանության տեսանկյունից:

Մասնավորապես՝ արդի արևելահայերենի ըղձականը բառիս բուն իմաստով ըղձական (*optativus*) չէ, քանի որ այն համատեղում է տիպաբանորեն հայտնի ստորադասականի և ըղձականի գործածությունների մեծ մասը: Հետևաբար ավելի տեղին կլիներ այս դեպքում գործածել ստորադասաըղձական անվանումը: Մինչդեռ արդի արևելահայերենի *կ(ը)- ապառնիին*, որը Ս. Աբեղյանի հետևողությամբ ավանդաբար բնորոշվում է որպես ենթադրական (կամ պայմանական) եղանակ, իմաստագործառնության տեսանկյունից էապես չի տարբերվում այլ լեզուների սահմանական ապառնիից: Տվյալ դեպքում պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր ապագա (ապառնի) եղելություն/գործողություն երբեք մաքուր ժամանակային իմաստ չունի, այլ անհրաժեշտաբար

<sup>21</sup> Հմմտ. J. Lyons, նշվ. աշխ., էջ 677-678, 815-817, նաև՝ F. R. Palmer, *Mood and Modality*, 2<sup>nd</sup> ed., Cambridge University Press, 2001, էջ 104-106, Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսություն. ..., էջ 246:

<sup>22</sup> Պայմանական եղանակի ընդհանուր լեզվաբանական և տիպաբանական բնորոշման համար հմմտ. Ս. Ավետյան, Արդի արևելահայերենի *կը- ապառնիի* և *ու- ապառնիի*..., էջ 31-33:

ներառում է նաև կանխատեսման, ենթադրականության կամ նման որևէ եղանակային իմաստ: Ընդ որում՝ ապառնի ժամանակաձևում հավաստիության և ենթադրականության իմաստային տարրերի հարաբերակցությունը յուրաքանչյուր դեպքում, կոնկրետ համատեքստից և տվյալ բայաձևի դեմքից կախված, կարող է տարբեր լինել՝ մեկի կամ մյուսի գերակշռությամբ: Ինչ վերաբերում է *լ(ը)*-ով օժտված անցյալի ձևերին (անցյալի ապառնիին), կարծում ենք՝ ճշմարտությանն ավելի մոտ է այն տեսակետը, ըստ որի՝ *լ(ը)*-ով օժտված անցյալի ձևերը հիմնականում գործառում են պայմանական եղանակի (conditionalis) իմաստով:

**SARGIS AVETYAN – *Трактовка Абегином наклонений глагола в восточноармянском языке, рассмотренная с точки зрения современной лингвистики.*** – Аргументируется, что традиционная интерпретация (предложенная М. Абегином) так называемого желательного наклонения (ըղձական եղանակ) и гипотетического/условного наклонения (ենթադրական/պայմանական եղանակ) в современном восточноармянском языке вызывает возражения с точки зрения общей лингвистики и лингвистической типологии. Дело в том, что желательное наклонение современного восточноармянского языка совмещает в себе большинство семантических функций типологически известных сослагательного и желательного наклонений. Следовательно, оно не является желательным наклонением в собственном смысле данного слова. Было бы более уместно охарактеризовать его как сослагательно-желательное (ստորադասարղձական). Что же касается *լ(ը)*- *будущего* (традиционно ошибочно истолкованного как гипотетическое/условное наклонение), то оно фактически не отличается от будущего времени изъявительного наклонения в других языках с семантическо-функциональной точки зрения. Как было указано рядом ученых, будущее время никогда не является чисто временной категорией; будущность обязательно включает элемент предсказания или какое-то связанное модальное понятие. Соответственно, *լ(ը)*- *будущее* в современном восточноармянском языке также включает как временные, так и модальные семантические компоненты, соотношение которых может варьироваться в зависимости от конкретного контекста и лица формы глагола. Однако соответствующие прошедшие формы *լ(ը)*- *будущего* в основном функционируют как условное наклонение в современном восточноармянском языке.

**Ключевые слова:** *современный восточноармянский язык, желательное наклонение, гипотетическое/условное наклонение, сослагательно-желательное, л(ը)- будущее, будущее время изъявительного наклонения, будущность, модальное понятие*

**SARGIS AVETYAN – *Abeghyan's Interpretation of Verb Moods in Eastern Armenian, Considered from the Viewpoint of Modern Linguistics.*** – It is argued that the traditional interpretation (proposed by M. Abeghyan) of the so-called Optative mood (ըղձական եղանակ) and Hypothetical/Conditional mood (ենթադրական/պայմանական եղանակ) in Modern Eastern Armenian, is objectionable from the standpoint of General Linguistics and Linguistic Typology. The point is that the Optative of Modern Eastern Armenian combines most of the semantic functions of the typologically known Subjunctive and Optative. Therefore, it is not an Optative in the proper sense of the word. It would be more appropriate to characterize it as Subjunctive-Optative (ստորադասարղձական).

As to the *լ(ր)-future* (traditionally misinterpreted as Hypothetical/Conditional mood), it is actually no different from the Future Indicative in other languages from the semantic-functional point of view. As pointed out by a number of scholars, the future tense is never a purely temporal category; futurity necessarily includes an element of prediction or some related modal notion. Accordingly, the *լ(ր)-future* in Modern Eastern Armenian also includes both temporal and modal semantic components, the proportion of which may vary depending on the specific context and the person of the verb form. However, the corresponding past forms of the *լ(ր)-future* mainly function as Conditional in Modern Eastern Armenian.

**Key Words:** *Modern Eastern Armenian, the Optative mood, the Hypothetical/Conditional mood, Subjunctive-Optative, լ(ր)-future, futurity, Future Indicative, a modal notion*

## ԳՐԱԲԱՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

### Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ

#### *Քերականության բայականություն դասականության առավելությունները*

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ\* 

*Երևանի պետական համալսարան*

Մանուկ Աբեղյանը հայ լեզվաբանության պատմության մեջ հայտնի է առավելապես արդի հայերենի՝ աշխարհաբարի քերականության ուսումնասիրության և դասավանդման նոր սկզբունքների կիրառությամբ գրված տեսական մենագրություններով ու դասագրքերով, սակայն այս հոդվածում բացահայտում ենք, որ մեծ գիտնականի՝ դասական հայերենին վերաբերող աշխատությունները, ուսումնական ձեռնարկները նույնքան արժեքավոր են, ամենակարևորը՝ նորարարական, որքան նրա ողջ բանասիրական ժառանգությունը: Մանուկ Աբեղյանը, հմուտ լեզվաբան, հետազոտող լինելու հետ մեկտեղ, մանկավարժական տաղանդով օժտված գիտնական էր, որի համար չափազանց կարևոր էր երեխաներին և երիտասարդ սերնդին մայրենի հին ու նոր գրական լեզուների, նրա բարբառների ուսուցանումը, հին հայերենով գրված և պահպանված հարուստ գրականության, ձեռագիր մատյանների արդի հայերեն փոխադրությունների ստեղծումը, դրանց տարածումը:

Գրաբարին վերաբերող Մ. Աբեղյանի դասագրքերում բայի, գոյականների, ածականների, թվականների ուսուցումը կատարվել է նոր սկզբունքների ներդրման միջոցով: Նա առաջինն էր, որ հին հայերենի ուսուցումը սկսեց բայի խոնարհման ձևերին վերաբերող դասերով՝ ընդգծելով այն հանգամանքը, որ խոսք կազմելու ընթացքում բայը հիմնական գործառույթ ունի, էթե սովորողը կարողանում է բայը խոնարհել, գիտե նրա եղանակները, ժամանակները, սեռերը, ապա նա կարող է ճիշտ խոսք կազմել և գրագետ թարգմանել:

**Բանալի բառեր** - *մեթոդական նորամուծություններ, հին հայերեն, արդի հայերեն, ընդհանուր օրինակափոխություններ և տարբերություններ, հին արտասանություն, ավանդական արտասանություն, բայի ուսուցում, հոլովման համակարգի ուսուցում*

\* Նարինե Դիլբարյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ

Нарине Дилбарян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания, ЕГУ

Narine Dilbaryan – PhD, Associate Professor at the Chair of the Armenian Language History and General Linguistics, YSU

Էլ. փոստ՝ narine.dilbaryan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0003-1212-0029>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 09.01.2024

Գրախոսվել է՝ 06.02.2024

Հաստատվել է՝ 08.02.2024

© The Author(s) 2024

Մանուկ Աբեղյանի «Գրաբարի քերականությունը» սկզբնապես տպագրվել է 1907 թ. միջնակարգ դպրոցների ավագ դասարանների աշակերտների համար, այսինքն՝ դպրոցական դասագիրք էր, որի նպատակն էր հնարավորինս արագ և արդյունավետ ուսուցանել մեր հին գրական հայոց լեզուն: 1936 թ. «Գրաբարի քերականությունը» վերահրատարակվում է բավական ընդլայնված և վերամշակված՝ արդեն որպես բարձրագույն դպրոցների ուսանողների դասագիրք, բայց, ինչպես գրքի նախաբանում վկայում է հեղինակը՝ Մ. Աբեղյանը, բուհական այս դասագիրքը կարող է ծառայել բոլոր նրանց, ովքեր ցանկանում են ուսումնասիրել ոսկեդենիկ հին լեզուն<sup>1</sup>, այսինքն՝ դասագիրքը վերամշակված էր այնպես, որ միաժամանակ կարող էր նաև ինքնուսույց լինել:

Մեր ուսումնասիրության նպատակն է քննել գրաբարի ուսուցման և դասավանդման մեթոդական այն նորարարությունները, որոնք կատարել է Մ. Աբեղյանը, հակադրվելով մեր հին լեզվի ուսուցման ընդունված, ավանդական քերականական կադապրին: Անդրադարձել ենք այդ նորամուծությունների արդյունավետությանը և այլ գրաբարագետների կողմից ընդունված լինելու հանգամանքին, այսինքն՝ պարզել ենք, թե որքանով ուղենշային եղան այդ նոր մոտեցումները գրաբարի դասավանդման հետագա ընթացքում՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ անգամ այժմ՝ 21-րդ դարում, կան հայաստանյան կենտրոններ, որոնք գրաբարը՝ որպես հաղորդակցության միջոց, վերակենդանացնելու ջանքեր են գործադրում:

Մ. Աբեղյանի դասագրքի *Ներածություն* բաժինն իսկ հետաքրքիր կառուցվածք ու խորագիր ունի՝ «Գրաբար և աշխարհաբար»: Զուգադրահամեմատության սկզբունքով՝ 5 կետով Աբեղյանը համեմատում է գրաբարը և արևելահայ աշխարհաբարը, նորընծա ուսուցանվողի համար նախ առանձնացնելով մեր երկու գրական լեզուների ընդհանրությունները, ապա տարբերությունները: Բառագիտական, բառակազմական, ձևաբանական, շարահյուսական բնութագրերի այս զուգադրականությունը թույլ է տալիս հաղթահարել հին դասական լեզուներ ուսումնասիրելու ճանապարհին ծագող բարդությունները, որովհետև կանխավ վեր է հանում հին և նոր լեզուների համակարգային ժառանգորդական կապը:

Ի սկզբանե Մ. Աբեղյանը նշում է, որ գրաբարի բառակազմությունը և ընդհանուր բառապաշարը աշխարհաբարում մեծ մասամբ պահպանվել են, և այս մակարդակներում տարբերություններ գրեթե չկան: Դասագրքի հեղինակը բացատրում է, որ հիմնական տարբերակիչ յուրահատկությունները երևան են գալիս ձևաբանության և շարահյուսության մակարդակներում, բայց անմիջապես էլ առանձնացնում է թե՛ խոնարհման, թե՛ հոլովման ենթահամակարգերում քերականական այն պահպանված ձևերը, որոնք գրաբարից առ աշխարհաբար լիովին նույնն են՝ **զնացի, զնա՛, քաղաքի, գործով**: Այնուհետև բերվում

<sup>1</sup> Հմմտ. Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. 2, Գրաբարի քերականություն, Եր., 1974, էջ 710:

են այնպիսի ընդհանուր կառույցները, որոնք պահել են հին ձևը, բայց իմաստափոխվել՝ *զնամ, զնաս, զնայ*, որոնք առաջնային կիրառությամբ գրաբարում սահմանական անկատար ներկա ժամանակի իմաստ են արտահայտում, և միայն երկրորդային կիրառմամբ՝ ըղձական կամ ենթադրական ժամանակների նշանակություն: Շատ ձևեր էլ կան, որոնք որոշ հնչյունափոխությամբ են գրաբարից աշխարհաբարին անցել՝ *փախեայ*-ն դարձել է *փախա, փախեար*-ը → *փախար, փախեսա*-ի → *փախավ* ն<sup>2</sup>: Այսինքն՝ հմուտ ուսուցիչը հին լեզուն սովորողներին նախ ծանոթացնում է աշխարհաբարի հետ ունեցած բազմաթիվ ընդհանրություններին, որպեսզի արագ հաղթահարվի դասական լեզուների բարդ և խրթին լինելու կարծրատիպը:

Դասագիրքը ավանդական ճանաչված սկզբունքով սկսվում է հնչյունաբանության հիմունքների շարադրմամբ, սակայն այստեղ ևս Մ. Աբեղյանը նոր մոտեցում է ցուցաբերում. գրաբարի ձայնավորների, բաղաձայնների, երկբարբառների, եռաբարբառների ներկայացումը կատարվում է հետևյալ բաժանմամբ՝ «*Հին արտասանությունը*» և «*Ավանդական արտասանությունը*»: Սովորողի համար անմիջապես պարզ է դառնում, որ գրաբարյան տեքստերի ներկայիս արտասանությունը հետագա դարերի փոփոխությունների արդյունք է: Եվրոպացի հայագետները, Մ. Աբեղյանի հավաստմամբ, պահում են հին արտասանությունը, զորօրինակ՝ *մարդոյ*, պետք է արտասանել բառավերջի *յ*-ով եւ ձայնեղ *դ*-ով (*mardoy*), այնինչ մենք արտասանում ենք՝ *մարթոն*<sup>3</sup>: Համոզված ենք, որ ժամանակն է հնարավորինս վերադառնալ մերոպյան արտասանությանը, ոչ թե անընդմեջ պահել միջնադարյան փոփոխված սկզբունքները, հատկապես որ մաշտոցյան արտասանությամբ դրանք առավել հեշտ են և ընկալելի սովորողների համար:

Գրաբարի դասագրքի մեթոդական սկզբունքային նորույթը վերաբերում է երկրորդ մասին. ձևաբանության բաժինը Մանուկ Աբեղյանը սկսում է բայ խոսքի մասի ուսուցմամբ: Բայակենտրոն խոսքի կողմնակից Մ. Աբեղյանը խախտում է ավանդական քերականությունների կաղապարը, որը ցայսօր էլ պահպանողական հայ լեզվաբանների կողմից կիրառվում է իբրև «սրբություն սրբոց»: Առաջ անցնելով՝ փաստենք, որ գրաբարի ներկայումս հայտնի և շրջանառվող քերականության դասագրքերում և ձեռնարկներում ձևաբանությունը սկսվում է անուն խոսքի մասերի քննությամբ՝ գոյական, ածական, թվական, ապա՝ դերանունների, այնուհետև միայն՝ բայի եղանակաժամանակային և դերբայական ձևերին վերաբերող դասերը, իսկ ձևաբանության բաժինը եզրափակվում է չթեքվող խոսքի մասերի ներկայացմամբ<sup>4</sup>: Աբեղյանական բայակենտրոն սկզբունքի կիրառմամբ աչքի է ընկնում միայն Ռ. Ղազարյանի և Հ.

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 712:

<sup>3</sup> Հմմտ. նույն տեղը, էջ 715:

<sup>4</sup> Տե՛ս **Լ. Մ. Խաչատրյան, Գ. Բ. Թոսունյան**, Գրաբարի դասագիրք, Եր., 2004, **Վարազ Առաքելյան**, Գրաբարի քերականություն, Եր., 2010, **Է. Ս. Մկրտչյան**, Գրաբարի դասընթաց, Եր., 2008:

Ավետիսյանի «Գրաբարի ձեռնարկը»<sup>5</sup>:

Բայ խոսքի մասի դասավանդումը Մ. Աբեղյանը սկսում է անորոշ դերբայի մասին հակիրճ տեղեկություններից, ապա գրաբարում ներկայի և կատարյալի հիմքերի նկարագրությունից, *հիմք* եզրույթի փոխարեն Աբեղյանն օգտագործում է *բուն*-ը: Կատարյալի հիմքին վերաբերող հատվածում արդեն երևան է գալիս կատարյալի հիմքի *ի* թույլ բաղադրիչին չանդրադառնալու հեղինակի հստակ դիրքորոշումը<sup>6</sup>: Ըստ էության՝ Մ. Աբեղյանը որոշում է, որ կատարյալի հիմքը գրաբարից աշխարհաբար չի տարբերվում, այն կազմվում է կա՛մ *ց* ածանց ունեցող բաղադրիչներով՝ *աց, էաց, ոյց*, կա՛մ արմատական է, *ի* թույլ բաղադրիչ ունեցող հիմքեր չեն առանձնացվում, դրանք միավորվում են արմատական հիմք կամ բուն ունեցող բայերի հետ: Մեր համոզմամբ՝ Աբեղյանի այս սկզբունքը արդարացված է գրաբարը ոչ բանասիրական ուղղությունների մասնագետներին դասավանդելու տեսանկյունից, այսինքն՝ պատմաբանների, արվեստաբանների, իրավաբանների կամ փիլիսոփաների համար: Խառն խոնարհման ներմուծումը դուրսացնում է կատարյալի հիմքից կազմվող բայական ժամանակների ճանաչումը, ուսուցումը, այսինքն՝ դրանց թարգմանությունը, բայց այս մեթոդը, մեր համոզմամբ, հարկ չկա բացարձակացնելու և տարածելու գրաբարի ուսուցման բոլոր մակարդակներում:

Գրաբարի խորքային մասնագիտական ուսուցումը պարտադիր կարիք ունի կատարյալի հիմքում թույլ բաղադրիչների առանձնացման և խոնարհումների երկանդամ բնութագրման՝ ներգործաձև և կրավորաձև հակադրությամբ: Այս տեսանկյունից բանասիրական ուղղվածության ֆակուլտետներում բայ խոսքի մասի ուսուցման ավանդական մեթոդական հիմքերը Ա. Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկում» առավել ընդունելի են լեզվաբանական վերականգնման տեսանկյունից<sup>7</sup>: Լեզվի պատմության դասավանդման ընթացքում հատկապես նկատելի են աբեղյանական սկզբունքով բայը սովորած ուսանողների դժվարությունները գրաբարում կատարյալի հիմքը և կրավորականի կազմությունը իրապես ընկալելու և, ամենակարևորը, դրանց տարժամանակյա զարգացումը պատկերացնելու առումով:

Բայական հիմքերի բնութագրից հետո Մ. Աբեղյանը հակիրճ շարադրում է ապառնի, անցյալ և ենթակայական դերբայների կազմության սկզբունքները և կիրառությունները: Բայական խոնարհման համակարգի ուսուցանումը նա առաջին մակարդակում կատարում է ավանդական եղանակով. պարզ ժամանակները բաժանվում են երկու մեծ խմբի՝ ներկայի բնի կամ լծորդի ժամանակներ՝ *ներկա, անցյալ անկատար, ստորադասական եղանակի ապառնի Ա, արգելական հրամայական, ներկա հրամայական*, այնուհետև՝ կատարյալի բնի

<sup>5</sup> Հմմտ. **Ն. Մ. Ավետիսյան, Ռ. Մ. Ղազարյան**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2006, էջ 10-47:

<sup>6</sup> Տե՛ս **Մ. Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 719:

<sup>7</sup> Տե՛ս **Ա. Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 131-157:



ժամանակներ՝ *անցյալ կատարյալ, ստորադասական ապառնի Բ, հրամայական ներկա, ապառնի Բ*: Հիշյալ ավանդական բաժանումից հետո, սակայն, գիտնականն առաջնորդվում է նոր մոտեցմամբ. կատարյալի բնից կազմվող ժամանակների համար կատարում է ոչ թե սպասվելիք երկու խոնարհումների առանձնացում՝ *ներգործածն* և *կրավորածն*, որոնք պայմանավորված են սեռային երկանդամ հակադրությամբ՝ ներգործական և կրավորական, այլ ներմուծում է երրորդ խոնարհման ձևն իր վերջավորություններով՝ դրանք կոչելով *խառն*: Իրականում խառն խոնարհման վերջավորությունները *ի* թույլ բաղադրիչով բայերի կրավորակերպ խոնարհման վերջավորություններն են, որոնք առաջացել են կատարյալի հիմքի *ի* ձայնավորի և բայական վերջավորությունների *ա* ձայնավորի փոխադեցական հնչյունափոխությամբ: Աբեղյանի կողմից կիրառության մեջ դրված խառն խոնարհման հարացույցում ունենք *ի + ա = եա* հնչյունափոխության հետևանքով առաջացած վերջավորություններ: Չորորինակ՝ *փախ-չիմ* բայի համար անցյալ կատարյալում կունենանք՝ *-եայ, -եար, -եաւ, -եաք, -եայք/երուք, -եան* վերջավորությունները՝ *փախեայ, փախեար, փախեաւ, փախեաք, փախեայք/երուք, փախեան*: Ստորադասական ապառնի Բ-ի համար, որպես խառն խոնարհման ցուցիչ, ստանում ենք՝ *-եայց, -իցես, -իցէ, -իցուք, -իջիք, -իցեն* ձևույթները՝ *փախեայց, փախիցես, փախիցէ, փախիցուք, փախիջիք, փախիցեն*: Հրամայական ներկայում, որը կոչվում է նաև բուն հրամայական, առանձնացվում են *-ի ը, -եա յք, -երո իք* վերջավորությունները՝ *փախի ը, փախեա յք/փախերո իք*, իսկ հրամայական ապառնի Բ խոնարհման դեպքում՝ *-իջի ը, -իջի ք՝ փախիջի ը, փախիջի ք*:

Հատուկ նպատակադրմամբ, կատարյալի բնից կազմվող ժամանակների վերջում պարտադիր նշվում է նաև այդ բայի անցյալ դերբայաձևը, քանի որ անցյալ դերբայը, ինչպես հայտնի է, հին հայերենում ստորոգումային կիրառության բազմաթիվ դեպքեր ունի՝ վկայված թե՛ ինքնուրույն, թե՛ թարգմանական գրականության մեջ: Հետևաբար, անցյալ դերբայի կազմության սկզբունքների իմացությունը և ճանաչումը վճռորոշ նշանակություն ունեն դասական հայերենի հնարավորինս արագ և ամբողջական տիրապետելու գործընթացում:

Բայական հարացույցների նկարագրությունը, ինչպես նշեցինք, նախ՝ ըստ բների է. հինգ ժամանակաձև ներկայի բնից՝ *ներկա, անցյալ անկատար, ստորադասական ապառնի Ա, արգելական հրամայական, հրամայական ապառնի Ա*, չորս ժամանակաձև էլ՝ կատարյալի բնից՝ *անցյալ կատարյալ, ստորադասական ապառնի Բ, հրամայական ներկա և հրամայական ապառնի Բ*: Վերջում տրվում է հիշյալ ինը ժամանակաձևերի հարացույցը՝ ըստ եղանակների, ոչ թե բների: Այսպիսով, Աբեղյանի դիտարկմամբ բայն ունի ինը ժամանակ, որոնք բաշխվում են երեք եղանակների միջև: Մահմանական եղանակ՝ *ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ*, ստորադասական եղանակ՝ *ապառնի Ա և Բ*, հրամայական եղանակ՝ *արգելական ներկա, ներկա, ապառնի Ա, ա-*

*պատնի Բ*: Այստեղ երևան է գալիս Մ. Աբեղյանի բերած ևս մեկ կարևոր նորություն. ի տարբերություն շրջանառության մեջ ցայսօր գտնվող գրաբարի քերականների մոտեցման, համաձայն որի՝ գրաբարի պարզ ժամանակաձևերը ութն են՝ չորսը ներկայի հիմքից կազմվող, չորսը՝ կատարյալի, Աբեղյանն առանձնացնում է հրամայական եղանակի ևս մեկ ներկա ժամանակաձև, որն ունի – **այջի՛ ը, -այջի՛ ք, -իջի՛ ը, -իջի՛ ք** վերջավորությունները, ինչպես օրինակ՝ *աղայջի՛ ը, աղայջի՛ ք, խօսիջի՛ ը, խօսիջի՛ ք*: Այս հրամայականը կազմվում է ներկայի հիմքից: Նշենք, որ *ու* լծորդության բայերի համար Աբեղյանը չի բերում հրամայական ներկայի ձևեր՝ *հեղուլ* բայի հարացույցում ներկա հրամայականի առջև գիծ է դրված, այսինքն՝ *ու* լծորդության բայերի ներկա հրամայականի ձևերը չեն պահպանվել: Հեղինակի բերած այս ժամանակաձևերին մենք հանդիպել ենք Աստվածաշնչի Հին Կտակարանի տարբեր գրքերի հայերեն թարգմանության մեջ, ինչպես նաև թարգմանչաց շարժման Ա շրջանի դավանաբանական, մեկնողական մի շարք այլ երկերում: Ինքնուրույն մատենագիտության մեջ այսպիսի ձևեր գրեթե չեն հանդիպում, և նրանց կազմությունն ըստ ամենայնի կարող ենք համարել հունարենի ազդեցության վաղ դրսևորումներից մեկը: Փաստորեն ստեղծվում էր *անկատար հրամայական ներկա*, որին հակադրվում էր *կատարյալ հրամայական ներկա* ժամանակաձևը, ինչպես օրինակ՝ *աղայջի ը, աղայջի ք* - անկատար կերպ, *աղասջի՛ ը, աղասջի՛ ք* - կատարյալ կերպ: Այսպիսի երկանդամ հակադրություն վերականգնվում էր ստորադասական եղանակի բայաձևերում. ապառնի Ա-ն կազմվում էր ներկայի բնից, ապառնի Բ-ն՝ կատարյալի, ինչպես՝ *աղայցեն, աղայցես, աղայցե, աղայցենք, աղայցեք, աղայցեն* - անկատար, *աղացից, աղացես, աղացե, աղացուք, աղացիք, աղացեն* - կատարյալ կերպ:

Մ. Աբեղյանին հաջորդող գրաբարագետներն իրենց քերականությունների մեջ չեն անդրադառնում այս եզակի, դիպվածային ներկա անկատար հրամայականի կառույցներին՝ էլնելով, թերևս, դրանց օտարամուտ և ոչ համակարգային բնույթից: Սակայն մենք համոզված ենք, որ եզակի քերականական իրողություններն անտեսելու նման մոտեցումը ճիշտ չէ: Աբեղյանի սկզբունքով անկատար հրամայական ներկայի միանշանակ առանձնացումը գուցե այնքան էլ համոզիչ չէ՝ այդ կառույցների հույժ սակավության պատճառով, սակայն նույնքան էլ արդարացված չէ դրանց իսպառ անտեսումը: Այսինքն՝ մեր կարծիքով, ներկայի հիմքից կամ բնից կազմվող ժամանակների նկարագրության մեջ ծանոթագրությամբ կամ հատուկ ենթաբաժնով պետք է անդրադառնալ *աղայջի՛ ը, աղայջի՛ ք, խօսիջի՛ ը, խօսիջի՛ ք* ձևերին՝ բացատրելով դրանց իմաստը և ցույց տալով թարգմանական գրականության մեջ դրանց օրինակները, արտահայտած նրբիմաստները: Գրավոր մատենագրության մեջ վկայված ձևերի անտեսումը բնավ ճիշտ սկզբունք չէ դասական լեզուների քերականության արդյունավետ ուսուցման տեսանկյունից: Մ. Աբեղյանի մոտեցումն առավել հասկանալի է, թեև նման կառույցները բայական հիմնական հարացույցի

մեջ ընդգրկելը որոշ շփոթության տեղիք կարող է տալ:

Ընդհանրապես բայ խոսքի մասի նկարագրության արեղյանական մոտեցումը «Գրաբարի քերականության» մեջ հիմնավոր է, բայը քննվում է համալիր՝ պարզից բարդը հանրահայտ սկզբունքով: Կանոնավոր բայերին հետևում են անկանոնները, բաղադրյալ ժամանակաձևերը, պակասավորները, միադիմի բայական կառույցները, ապա՝ դրանց բացատրությունները: Այս մոտեցումը հետագայում արդեն լայն կիրառություն գտավ, գրաբարի դասագիրք-ձեռնարկների մեծ մասում բայի ուսուցումը չի ընդմիջվում այլ թեմաներով, թեև բայակենտրոն քերականության կողմնակից Ռ. Ղազարյանը և Հ. Ավետիսյանն այս հարցում չեն հետևել իրենց ուսուցչին. անկանոն, պակասավոր և եղանակիչ բայերին վերաբերող դասերը նրանք առանձնացրել են բայ խոսքի մասին վերաբերող ընդհանուր բաժնից, դրանք շարադրված են անուն, դերանուն խոսքի մասերին վերաբերող թեմաներից հետո: Հեղինակներն իրենց այս մոտեցումը բացատրում էին անկանոն և պակասավոր բայերի ուսուցման բարդ լինելու հանգամանքով՝ կարծելով, թե գրաբարի մեջ դեռ խորամուխ չեղած ուսանողները դժվարությամբ կարող են յուրացնել անկանոն ձևերը, ուստի հետաձգել են դրանց ուսուցանումը:

Գրաբարի դասավանդման երկարատև փորձը ցույց է տալիս, որ նման առանձնացումը մեթոդապես արդարացված չէ, քանի որ ընթերցման և թարգմանության համար նախատեսված բնագրային հատվածներում անկանոն, պակասավոր և եղանակիչ բայերը չափազանց հաճախադեպ են, դրանք հիմնական բառաֆոնդի հասկացություններ են արտահայտում: Հետևաբար ճիշտ է արեղյանական մոտեցումը՝ դրանք սովորեցնել միասնաբար բայական թեմաների շրջանակում: Բայ խոսքի մասին վերաբերող դասերի վերջում Մ. Աբեղյանը, որպես սկզբունք, մանրամասն անդրադառնում է բայական ժամանակների գործածության գրաբարյան օրինաչափություններին, ընդհանուր և մասնավոր նրբիմաստներին՝ համապատասխան բնագրային օրինակներով: Տեսական նյութի ամրակայումը բնագրային հարուստ օրինակների միջոցով շատ ավելի արդյունավետ է դարձնում ոչ խոսակցական, հին լեզվի ուսուցումը<sup>8</sup>:

Անվանական հոլովման համակարգի նկարագրության ընթացքում Մ. Աբեղյանը «Կանոնավոր հոլովումներ» գլխում դարձյալ նոր սկզբունքներ է որդեգրում՝ ավանդական **ա** ներքին հոլովման փոխարեն առանձնացնելով **ան** հոլովումը՝ *դուռն-դրան, շարժումն-շարժման, տուն-տան, անուն-անուան, սրբութիւն-սրբութեան, արիւն-արեան* տարբերակներով, ինչպես նաև դրա **եան** տարատեսակը՝ *հանգիստ-հանգստեան, սնունդ-սննդեան, թաքուստ-թաքստեան* և այլ օրինակներով: Ուսանողների համար այս կերպ ավելի հասկանալի է դառնում **ա** ձայնավոր պարունակող տարբեր բաղադրյալ հոլովիչների կիրառությունը գրաբարում, **ա** ներդրական հոլովիչից բացի՝ **ան** և **եան**

<sup>8</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 745-755:

վերջադրական հոլովիչների գոյությունը<sup>9</sup>:

Եզրափակելով նշենք, որ գրաբարի դասավանդման ընթացքում ձևաբանության ուսուցումը բայից սկսելու Մանուկ Աբեղյանի մեթոդաբանությունը միանշանակ արդարացված է թե՛ լեզվաբանական, թե՛ տրամաբանական միացյալ տեսանկյունից: Այս կերպ դասական գրավոր լեզուն յուրացնող ուսանողները շատ ավելի արագ և դյուրին են թարգմանում, ամենակարևորը՝ հասկանում գրաբարյան բնագրերը: Կարողանում են գրաբարը նաև բանավոր խոսքային հաղորդակցման միջոց դարձնել, այսինքն՝ արդի արևելահայերեն մտքերն արտահայտել ոսկեդենիկ գրաբարով: Հավելենք նաև, որ օտար լեզուների ուսուցման արտերկրի մեթոդաբանության մեջ այս սկզբունքը չափազանց կիրառելի է և՛ դասական լեզուների՝ հին հունարենի կամ լատիներենի պարագայում<sup>10</sup>, և՛ արդի լեզուների, հատկապես արդի շրջանում լայն տարածում գտած անգլերենի ուսումնական ձեռնարկներում:

**НАРИНЕ ДИЛБАРЯН – Методические основы преподавания древнеармянского языка в учебниках М. Абегиана: преимущества обучения грамматике, ориентированной на глагол.** – В истории армянского языкознания Манук Абегиан известен прежде всего своими теоретическими новаторскими монографиями и учебниками, посвященными изучению и преподаванию грамматики современного армянского языка, но в этой статье мы доказываем, что его труды и учебники древнеармянского языка столь же ценны, а главное, столь же новаторские, как и все его филологическое наследие. Манук Абегиан, помимо того, что был талантливым лингвистом и исследователем, был ученым с педагогическим даром, для которого было чрезвычайно важно обучать детей и молодое поколение армянскому литературному языку во всех его формах – древнеармянскому, современному армянскому и его диалектам, чтобы новое поколение могло читать и понимать древние рукописи, переводить их. В учебниках древнеармянского языка М. Абегиана всегда был сторонником новых принципов обучения. Он первым начал преподавание древнеармянского языка с уроков по спряжению глаголов, подчеркивая тот факт, что глагол имеет основную функцию в процессе формирования речи, если обучающийся умеет спрягать глагол, знает его наклонения, времена, виды, то он сможет формировать правильную речь и грамотно переводить различные тексты.

**Ключевые слова:** методические нововведения, древнеармянский язык, современный армянский язык, общности и различия, древнее произношение, традиционное произношение, обучение глаголов, обучение системы склонения

**NARINE DILBARYAN – Methodical Principles of Teaching Ancient Armenian Language in Textbooks of M. Abeghyan: Benefits of Teaching Verb-Focused Grammar.** – In the history of Armenian linguistics, Manuk Abeghyan is known primarily for his theoretical innovative monographs and textbooks devoted to the study and teaching of the grammar of the modern Armenian language, but in this article we prove that his works and textbooks of the Ancient Armenian language are just as valuable, and most importantly, as innovative, like all his philological heritage. Manuk Abeghyan was a talented linguist and researcher and at the same

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 767-769:

<sup>10</sup> Հմմտ. **С. И. Соболевский**, Учебник древнегреческого языка, М., 2003, նաև՝ **Мирошенкова В. И., Федоров Н. А.** Учебник латинского языка, М., 1985:

time he was a great educator, teacher, for whom it was extremely important to teach children and the younger generation the Armenian literary language in all its forms - ancient Armenian, modern Armenian and its dialects, so that the new generation could read and understand ancient manuscripts, translate them. In textbooks of the ancient Armenian language, M. Abeghyan has always been a supporter of new principles of teaching. He was the first to begin teaching the ancient Armenian language with lessons on conjugating verbs, emphasizing the fact that the verb has a main function in the process of speech formation; if the student knows how to conjugate a verb, knows its moods, tenses, aspects, then he will be able to form correct speech and correctly translate different texts.

**Key words:** *methodological innovations, Ancient Armenian language, modern Armenian language, common features and differences, ancient pronunciation, traditional pronunciation, teaching verbs, teaching the declension system*

## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՎ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԳՐԱՌԱԾ ԽԱՂԻԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՎԱԾ ԲՈՒՄԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ-ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ \* 

ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտ

Հայկական լեռնաշխարհը հարուստ է փարթամ բուսականությամբ, և յուրաքանչյուր բուսատեսակ ունի մեկից ավելի գրական և բարբառային անվանումներ: Բուսանունների քննությունը կարևոր է հայերենի ընդհանուր բառապաշարի ուսումնասիրության, նաև աշխարհագրական տվյալ վայրի բուսապատկերը, տարածքի բնակչության լեզվամտածողությունը, դարձվածքներն ու բանահյուսական բանաձևումները, կենսադավարության որոշ իրողություններ ճանաչելու համար: Բուսական աշխարհի մասին տեղեկությունները մեծապես օգնում են տեղանունների ստուգաբանությանը:

Այս բառաշերտի յուրօրինակ շտեմարան են Կոմիտաս Վարդապետի և Մ. Աբեղյանի գրի առած մոտ քսանհինգ հազար ժողովրդական խաղիկները: Կոմիտաս Վարդապետի և Մ. Աբեղյանի գրած բանահյուսական նյութերից կազմված «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգերի ժողովածուն բաղկացած է երկու մասից, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկված է հիսուն չափածո տեքստ:

Ժողովրդական երգերի բուսաբառերը հիմնականում գործածված են ուղիղ կամ փոխաբերական իմաստներով, անձնավորվում են, ունեն տարբեր խորհրդաբանություն, հաճախ էլ դառնում են բանաստեղծական տողը հանգավորելու միջոց: Երգերում հաճախակի են գործածվում հանրությանը լայնորեն հայտնի բուսանունները, ինչպիսիք են՝ *ծառ*, *ծաղիկ*, *վարդ*, *մեխակ*, *ծիրան*, *խնձոր*, *շինարի* և այլն:

**Բանալի բառեր** – *խաղիկ*, *ժողովրդական երգ*, *բուսանուն*, *բարբառ*, *բանահյուսություն*, *ծառ*, *ծաղիկ*, *ծիրանի*, *խնձոր*, *վարդ*

\* **Հայկանուշ Մեսրոպյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ԼԻ առաջատար գիտաշխատող, Վ. Բյուսուլի անվան պետական համալսարանի հայագիտության ամբիոնի ղեկավար

**Айкануш Месропян** – доктор филологических наук, ведущий научный сотрудник института языка имени Р. Ачаряна НАН РА, доцент кафедры арменоведения ГУ имени В. Брюсова

**Haykanush Mesropyan** – Sc.D in Philology, Leading researcher of the Language Institute named after R. Acharyan of the NAS RA, Associate Professor of the Chair of Armenian Language of the Brusov State University

Էլ. փոստ՝ mesropyanhaykanush@gmail.com ORCID: <https://orcid.org/0009-0008-8038-0168>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 06.02.2024

Գրախոսվել է՝ 12.02.2024

Հաստատվել է՝ 15.02.2024

© The Author(s) 2024

Հայկական լեռնաշխարհի բուսանուններին նվիրված բազմաթիվ աշխատություններ են գրվել<sup>1</sup>: Ինչպես հայտնի է, ամերիկացի լեզվաբան Կարլ Բաքի «Հնդեվրոպական հիմնական լեզուների ընտիր հումանիշների բառարանում» առանձնացվող 22 բառիմաստային խմբերից ութերորդը «երկրագործություն, բուսականություն» բառափունջն է<sup>2</sup>: Այս բառաշերտի յուրօրինակ շտեմարան են Կոմիտաս Վարդապետի և Մ. Աբեղյանի գրի առած մոտ քսանհինգ հազար ժողովրդական խաղիկները:

Կոմիտաս Վարդապետի և Մ. Աբեղյանի գրառած բանահյուսական նյութերից կազմված «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգերի ժողովածուն բաղկացած է երկու մասից, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկված է հիսուն չափածո տեքստ՝ երկտող, քառատող, վեցնյակ, ութնյակ և այլն<sup>3</sup>: Կոմիտասն իր կատարած բանահավաքչական աշխատանքի դժվարության առիթով Մ. Աբեղյանին գանգատվում է, որ ժողովրդական երգերի քառատողերը՝ քառյակները, հաճախ խառն ու անմիտ են իբրև բանաստեղծություն, բայց և շարունակում է հարմար բանասաց գտնելու որոնումները: Ցանկալի արդյունքը տրվում է Կոմիտասի ու Մ. Աբեղյանի համատեղ աշխատանքով: Ազգանվեր այդ աշխատանքի մասին Մ. Աբեղյանն իր հուշերում գրում է. «Ես էլ, Կոմիտասն էլ ունեինք բավական թվով քառյակներ ժողոված, ձեռք բերինք բազմաթիվ խաղեր նաև մեր ընկերներից և աշակերտներից: Բայց այդ ամենը բավական չհամարելով՝ ամառն իրենց ծնողների մոտ և առհասարակ գյուղերը գնացող աշակերտներին պատվիրեցինք ժողովել ժողովրդական երգեր: Դրա համար Կոմիտասը պատրաստեց հազարավոր թերթիկներ և ամեն մի աշակերտի, առանձնապես իր խմբի երգիչներին բաժանեց, որպեսզի միակերպ թերթիկների վրա գրած բերեն իրենց գրի առած երգերը: Այս միևնույնը կատարեցին և հաջորդ

<sup>1</sup> Տե՛ս **Հայր Առնոյ Ալիշան**, Հայբուսակ կամ Հայկական բուսաբանություն, Մուրբ Ղազար, Վենետիկ, 1895: **Կարապետ Գաբրիելյան**, Հայ բուսաշխարհի պատկերալ Իզմիրլեանց գրական մրցանակաւ յամին 1912 տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղիմ, 1968: **Ռուբեն Ղազարյան**, Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան, ԵՊՀ հրատ., Եր., 1981: **Պապին Դանդիյան**, Բուսաբանական բառարան: Համառոտ բուսակարգաբանություն, Եր., «Հայաստան», 1975: **Корюн Оганян**, Полный словарь фитонимов: растения с армянскими наименованиями, Армянский музей Москвы и культуры наций, М., 2022:

<sup>2</sup> Տե՛ս **Buck C.**, A Dictionary of Selected Synonyms in the Principal Indo-European Languages: A Contribution to the History of Ideas, Chicago, The University of Chicago Press, 1949:

<sup>3</sup> Տե՛ս **Կոմիտաս Վարդապետ և Մանուկ Աբեղյան**, Հազար ու մի խաղ: Ժողովրդական երգարան, առաջին յիսնեակ, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1904: Նաև՝ **Կոմիտաս Վարդապետ և Մանուկ Աբեղյան**, Հազար ու մի խաղ, Ժողովրդական երգարան, երկրորդ յիսնեակ, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1905: Նաև՝ **Կոմիտաս, Մ. Աբեղյան**, Հազար ու մի խաղ, Ժողովրդական երգերի ժողովածու, վերակազմեց Արթուր Շահնազարյանը, «Կուլտուրալ ռենեսանս» հիմնադրամ, Եր., 2015: Նաև՝ **Մանուկ Աբեղյան**, Հիշողություններ Կոմիտասի մասին, Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Եր., 1960, էջ 62-74: **Թ. Աջամեան**, Կոմիտաս Վարդապետ, իր կեանքն ու գործունեությունը, հատոր Ա, «Կիլիկիացիներ», Կ. Ն. Սագասճեան, Կ. Պոլիս, 1931, էջ 64:

տարիները, այնպես որ տասնյակ հազարավոր այսպիսի գրած թերթիկներ հավաքվեցին մեզ մոտ»<sup>4</sup>:

Մեծանուն երաժշտագետն ու անվանի գրականագետը մշակում են առկա երկու ընտրանի հիսնյակները, նաև իրենց ընկերների հավաքածները<sup>5</sup>, տարբեր ժողովածուներում տպագրված երգերը<sup>6</sup>: Կոմիտասի առաջարկությամբ երգարանն անվանում են «Հազար ու մի խաղ»:

Երգերի առաջին հիսնյակը հրատարակվում է 1904 թ., երկրորդը՝ 1905-ին: Առաջին, ինչպես նաև երկրորդ հիսնյակի ծանոթագրությունները տեղեկացնում են, որ «Հազար ու մի խաղի» մասերը կազմված են «ամբողջապես ժողովրդական երգերից, որոնք բոլորն ունին իրենց յատուկ եղանակները և որոշուած են երգելու և ոչ թե կարդալու համար: Ձեռի տակ ունեցած լինելով մօտ քսանհինգ հազար քառատողերի ժողովածու, ինչպես և ուրիշ երգերի վարիանտներ», Կոմիտաս Վարդապետն ու Մ. Աբեղյանը բաղդատում են երգերի տարբերակները և ընտրում լավագույնները, որոնց մասին Տիգրան Մանսուրյանը գրում է. «Ժողովրդական երաժշտական ժառանգութեան մէջ լոյսից ծնուած, լոյսով ներշնչուած գործերի թիւը մեծ է այնքան, որ երբեմն մտածում ես՝ մի՞ թե մեր ժողովուրդն այդքան լոյսի երգեր ունէր իր շուրթերին»<sup>7</sup>:

Երգարանը նոտագրված չէր. հաջողվել էր հրատարակել միայն երգերի տեքստերը: Դրանք նոտագրությամբ տպագրելու հույսով Կոմիտասը դիմում է Արշակ Չոպանյանին, որը գնահատում էր ժողովրդական երգերն ու այսպես էր զգում դրանք. «Ի՛նչ խոր շեշտ հաւատքի, ի՛նչ հզօր թռիչ կրօնական զգացման, ի՛նչ բարձր վերացում աստուածային խոկմանց, ի՛նչ ճոխութիւն վեհ

<sup>4</sup> Մ. Աբեղյան, Հիշողություններ Կոմիտասի մասին, Երկեր, հատոր Է, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Եր., 1975, էջ 435:

<sup>5</sup> 1902 թ. բանահավաք Հայկ Տեր-Աստվածատրյանը բավականին թվով ձեռագիր քառյակներ է տալիս Մ. Աբեղյանին՝ տեղյակ պահելով, որ օգտվել է Արշակ Բրուտյանի «Ռամկական մրմունջներ», Միքայել Միանսարյանցի «Քնար Հայկական», Գարեգին Մրվանձտյանցի «Գրոց և բրոց» ժողովածուներից:

<sup>6</sup> Բազմաթիվ երգեր՝ բարբառային տարբերակներով, ներառվում են «Ազգագրական հանդեսի» բոլոր համարներից, Սարգիս Հայկունու «Էմինեան ազգագրական ժողովածուից», Արամ Երեմյանի «Չարմահալի հայ ժողովրդական բանահիւսութիւնից», Գևորգ Շերենցի «Վանայ սագ» և Հովսեփ Ծանիկյանի «Հնութիւնք Ակնայ» գրքերից, «Բիւրական» լրագրից (մասնավորաբար՝ «Պարերգ մշեցոց գաւառաբարբառով», «Պանդուխտին երգը Խարբերդի բարբառով», «Հարս տանելու երգ Ակնայ բարբառով», «Ժողովրդական պարերգ շատախցոց բարբառով», «Մրմունջ մը ռամկական, Եր.այ բարբառով», «Վանեցոց պարերգ», «Սիրերգ Վանայ և Եր.ի բարբառներով», Դիարբեքիրի, Պարտիզակի, Մարաշի, Տարենտեի լեզվով, «Խոյթեցոց մէջ երգուած հարսանեկան պարերգ, սիրերգ», «Ակնայ անտունիներ», «Մասնոյ պարերգ», «Կիւրինի կեանքէն», տե՛ս «**Բիւրական**», Կ. Պոլիս, 1900, 634 էջ), «Բանասեր» պարբերականից, որում «Ջան գիւլում» խորագրի ներքո զետեղված է Հայկ Տեր-Աստվածատրյանի գրառած 600 քառյակը: Տե՛ս նաև Մ. Աբեղեան, Լմուշներ, Շուշի, Տպարան Հայոց հոգեւոր տեսչութեան, 1888:

<sup>7</sup> Տ. Մանսուրեան, Կենսանորոգ ոգի, Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ և յօդուածներ, Գիլք Ա, աշխատասիրութեամբ Գուրգէն Գասպարեանի և Մարինէ Մուշեղեանի, «Մարգիս Խաչենց» հրատ., Եր., 2005, էջ 7:



մտածմանց, պերճ պատկերներու և վսեմ բացատրութեանց, և ի՛նչ լեզուի անբաղդատելի ներդաշնակութիւն՝ այդ երգերուն մէջ որ դեռ ա՛յնչափ երիտասարդ են դարաւոր կեանքէ մը յետոյ»<sup>8</sup>:

Ա. Չոպանյանն առաջարկում է առաջին հիսնյակում որոշ փոփոխություններ կատարել, նաև բարբառային խրթին բառերը փոխարինել գրական կամ խոսակցական տարբերակներով: Կոմիտասը պատասխան նամակում գրում է. «Շատ կը խնդրեմ՝ ուղարկէք անմիջապէս ցանկը այն երգերի, որոնց տեղ կը կամենայիք Ակնայ, Վանայ կամ Մշոյ երգեր գետեղել. եթէ իրօք անմիտ են, և եղանակներն էլ ոչ կարևոր, դոցա փոխարէն ուրիշները կը դնենք», ապա պարզաբանում է, որ երգարանը ժողովրդական հենք ունի, գիտական չէ<sup>9</sup>:

Երկու հիսնյակները հիմք են դառնում «Ժողովրդական խաղիկներ: Գյուղական փոքր երգեր իրենց փոփոխակներով» երգարանի ստեղծման համար, որը լույս է տեսնում 1940 թ.՝ աշխատասիրությամբ Մ. Աբեղյանի<sup>10</sup>: Մեծանուն բանասերը գրում է. «Այս ժողովածուի մէջ տպագրված հազարավոր փոքրիկ երգերը գերազանցորեն գյուղական բանաստեղծություններ են, սիրու երգեր, մեր գյուղացիության արտադրությունը մինչև 1914 թվականը»<sup>11</sup>: Հարյուր տասը տարի անց՝ 2015 թվականին, Արթուր Շահնազարյանին հաջողվում է «Հայկական ազգային երաժշտական գանձարան» մշակութային նախագծի շնորհիվ առաջին անգամ հրատարակել «Հազար ու մի խաղ» ժողովածուն՝ նոտագրված Կոմիտասի կողմից: Երաժշտագետ հրատարակիչը Կոմիտասի երկերի տասնչորս հատորներից առանձնացրել է երկու հիսնյակի համապատասխան տեքստերը՝ մեղեդիներով և բարբառային տարբերակներով:

Բանահավաքչական աշխատանքի ընթացքում ի մի բերված խաղիկներն ու ժողովրդական երգերը՝ մի քանի փոփոխակներով, ներկայացնում են Հայաստան աշխարհի գրեթե բոլոր բարբառատարածքները<sup>12</sup>՝ համապատասխան բառապաշարով ու բառիմաստային խմբերով՝ Սուրմալու (26 քառյակ, 16 երկյակ, 28 երգ՝ Կողբից)<sup>13</sup>, Ջավախք (186 խաղ, հավաքել է Հ. Ազնավուրյանը), Միսիան (110 քառյակ), Ջանգեզուր, Շիրակ, Ալաշկերտ, Բուլանուխ կամ Հարք,

<sup>8</sup> Ա. Չոպանյան, Դեմքեր, Կոմիտաս Վարդապետ, Գեղարուեստական տպարան, Փարիզ, 1924, էջ 135:

<sup>9</sup> Տե՛ս Կոմիտաս, Նամականի, ԳԱԹ հրատ., Եր., 2000, էջ 126-127:

<sup>10</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղիկներ: Գյուղական փոքր յերգեր իրենց փոփոխակներով, մասնակի աշխատակցությամբ Կոմիտասի, Հայպետհրատ, Եր., 1940:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 123-582: Այս գրքի 111-116 էջերում տրված է ժողովրդական երգեր պարունակող գրականություն, որից Մ. Աբեղյանը խաղիկներ է ընտրել:

<sup>13</sup> Տե՛ս Սուրմալու, Ժողովրդական երգեր, «Ազգագրական հանդէս», երրորդ տարի, Բ գիրք, 1897, Թիֆլիս, էջ 332-347, էջ 341-342: Ջավախք, Երուանդ Լալայեանի բանաւոր գրականութիւնը, վիճակի երգեր, «Ազգագրական հանդէս», երրորդ տարի, Գ գիրք, 1898, № 1, Թիֆլիս, էջ 91-104: Միսիան, Ժողովրդական երգեր, «Ազգագրական հանդէս», երրորդ տարի, Գ գիրք, 1898, № 1, Թիֆլիս, էջ 105-270: Ջանգեզուր, Ժողովրդական երգեր, «Ազգագրական հանդէս», երրորդ տարի, Դ գիրք, № 2, Մ. Դ. Ռօտինեանցի և Կ. Մարտիրոսեանցի տպարան, Թիֆլիս, 1898, էջ 113-116: Շիրակի ժողովրդական երգեր, հաւաքեց Մ. Բահակեան, «Ազգագրական հանդէս», երրորդ տարի, Դ գիրք, №2, Մ. Դ. Ռօտինեանցի

Գանձակ, Բասեն, Բորչալու, Վարանդա, Վան, Ղափան և այլն:

Արժևորելով նշված տարածքների լեզվական անհատնում գանձերը՝ Կոմիտաս Վարդապետը փաստում է. «Ժողովրդական եղանակները սերտ առնչություն է բնական կապ ունին տեղական պայմանների հետ, որնոք ծնում են միջավայրին յատուկ ոճեր. ուստի մի երաժշտական միտք այլ է այլ տեղերում ստանում է տեսակ-տեսակ բնորոշ արտայայտություն.... Տեղական եղանակներից ծագում են երաժշտական գաւառական բարբառներ, որոնք այնքան որոշ են, որ գիւղացին ջոկում է մէկը միւսից աշխարհագրական անուններով»<sup>14</sup>:

Խաղիկներն արտացոլում են հայ ժողովրդի ավանդություններն ու կենսակերպը, ծեսերն ու տոները, աշխատանքի ու սիրո փառաբանությունը, ազատատենչ ոգին, հոգեմտավոր կարողություններն ու հավատքը, ինչպես նաև Հայաստան երկրի բուսական աշխարհը:

Սիրո, հարսանեկան, վիճակի, աշխատանքային, երկրագործական, վիպական, ծիսական, գինու, աշուղական, տոնի և ուխտի, քնարական երգերում, պարերգերում, կատակերգերում հանդիպող բազմաթիվ բուսանունները հետաքրքրություն են ներկայացնում հայերենի բառապաշարի իմաստային խմբերի ուսումնասիրության առումով: Այդ խաղիկների միջոցով են սերնդից սերունդ փոխանցվում հայերենի բարբառային բառապաշարի հետաքրքիր շերտերը, իսկ նոտագրված լինելու միջոցով՝ բարբառային արտասանությունը և տվյալ տարածքին բնորոշ հնչյունական նրբությունները<sup>15</sup>: Կոմիտասը ժողովրդական երգերի մշակութային

---

և Կ.. Մարտիրոսեանցի տպարան, Թիֆլիս, 1898, էջ 161-176: Ալաշկերտի բանատր գրականություն, Գրիգոր քահանայ Նժդեհեանց, «Ազգագրական հանդէս», չորրորդ տարի, Ե գիրք, № 1, Կ. Մարտիրոսեանցի տպարան, Թիֆլիս, 1899, էջ 185-212: Ալաշկերտ, Գրիգոր քահանայ Նժդեհեանցի Բանատր գրականություն, «Ազգագրական հանդէս», վեցերորդ տարի, VII և VIII գրքեր, Կ. Մարտիրոսեանցի տպարան, Թիֆլիս, 1901, էջ 437-505: Բուլանըլի, ժողովրդական երգեր, «Ազգագրական հանդէս», հինգերորդ տարի, Զ գիրք, Կ. Մարտիրոսեանցի տպարան, Թիֆլիս, 1900, էջ 69-73: Գանձակի գաւառ, Բանատր գրականություն, Երգեր, «Ազգագրական հանդէս», հինգերորդ տարի, Զ գիրք, Կ. Մարտիրոսեանցի տպարան, Թիֆլիս, 1900, էջ 383-390: Բասեն, ժողովրդական երգեր, «Ազգագրական հանդէս», հինգերորդ տարի, Զ գիրք, Կ. Մարտիրոսեանցի տպարան, Թիֆլիս, 1900, էջ 372-382: Բորչալուի գաւառ, Ե. Լալայեան, Բանատր գրականություն, «Ազգագրական հանդէս», իններորդ տարի, XI գիրք, Մ. Մարտիրոսեանցի արագատիպ, Թիֆլիս, 1904, էջ 34-95: Վարանդայի բանատր գրականությունից, Ե. Լալայեան, «Ազգագրական հանդէս», տասնմեկերորդ տարի, XVII գիրք, օրիորդ Ն. Աղանեանի տպարան, Թիֆլիս, 1908, № 1, էջ 42-95: Վանայ բանահիւսությունից, Ե. Լալայեան, «Ազգագրական հանդէս», տասներկուերորդ տարի, XIX գիրք, օրիորդ Ն. Աղանեանի տպարան, Թիֆլիս, 1910, № 1, էջ 100-111: Ղափանի բանատր գրականությունից, Ե. Լալայեան, «Ազգագրական հանդէս», տասներկուերորդ տարի, XIX գիրք, օրիորդ Ն. Աղանեանի տպարան, Թիֆլիս, 1910, № 1, էջ 112-115:

<sup>14</sup> **Կոմիտաս Վարդապետ**, Հայ գեղջուկ երաժշտություն, Ուսումնասիրություններ և յօդուածներ, Գիրք Ա, աշխատասիրութեամբ Գուրգեն Գասպարեանի և Մարինէ Մուշեղեանի, «Մարգիս Խաչենց» հրատ., Եր., 2005, էջ 372: Հմմտ. **Կոմիտաս**, Հոդվածներ և ուսումնասիրություններ, հավաքեց Ռ. Թերլեմեզյան, Պետհրատ, Եր., 1941, էջ 26:

<sup>15</sup> Օրինակ, Վանի բարբառի ձայնավորական նրբություններից՝ ոմի քմայինի արտահայտման հանդիպում ենք «թուփ // թոմփ» բառում. «Ելէք, տեսէք, ո՞րն է կերել մեր թոմփ, ելան, տեսան՝ ուլն է կերել մեր թոմփ» կրկներգում *թոմփ* բուսաբառը քանիցս կրկնվում է:

ժառանգության փոխանցման կարևորության մասին Կարապետ Կոստանյանին ուղղված նամակում գրում է. «Քանի խորունկն եմ մտնում երաժշտական ծիծաղածին ծովի մեջ, նոյնքան պնդում է համոզմունքս, թե մեր ե՛ւ ժողովրդական, ե՛ւ եկեղեցական աննման ու վեհ եղանակները, որոնք քոյր-եղբայր են շատ վաղուց, ապագայում նոյնպես օտարների համար ուսումնասիրության աղբիւր պետք է դառնայ, որովհետեւ արմատը շատ խորնհնութիւն է տանում հասցնում, մինչեւ Հայի ծագումը, այնտեղ, նորանից անբաժան, ծլում եւ նորա՛ հետ է մեզ հասնում»<sup>16</sup>:

Մի շարք բույսերի նկարագրությանը, նրանց ժողովրդական ընկալմանն ու խորհրդաբանությանը, նաև բուսաբառերի փոխաբերական իմաստներին անդրադառնում է Մ. Աբեղյանը «Ջրերի և բույսերի պաշտամունք» խորագրի «Բնությունը խաղերի մեջ» ենթավերնագրի ներքո<sup>17</sup>: Նա գրում է. «Բնության նկարագրի մեջ մտնում են նաև երկրի բուսականությունն ու կենդանիները: . . .մեր սիրու երգերի մեջ բնորոշ կողմն այն է, որ դրանց մեջ գտնում ենք մի ամբողջ կանաչագեղ ու ծաղկազարդ այգի ու պարտեզ՝ *արմավենի, նարնջենի, նոճի* (սելվի), *նշենի, նոնենի, ուռի, որթ* (խաղողի որթ), *մուրտ, սերկկլի, շաքարեղեգն, խնձորի, շամաս, վարդ, աղբրանց արյուն* և այլն»<sup>18</sup>:

Նշվածներից (բացառյալ **վարդ** ծաղկանունը) ամենից շատ երգվում է խնձորը: Օրինակ՝ *«Խնձոր ունիմ՝ կրծած ա, Չորսրդորն արծաթած ա, Ափներում մեխակած ա, Մէջը ոսկով լրցած ա»*<sup>19</sup>: Այս քառատողում ուշագրավ է *մեխակ* ծաղկանունից կերտված *մեխակել* բայը, որն ընդգրկված չէ Մտ. Մալխասյանցի, Էդ. Աղայանի, «Ժամանակակից հայոց լեզվի» և բացատրական այլ բառարաններում:

*«Ես աղջիկ եմ նոր մագա, Աշխարքն ինձ փիանդագ ա, Անմահական խնձորը Կանեմ յարիս թավագա»* (Գ, N 60): *«Բարձ վերուցեմ, հոտ կուգա, Կարմիր խնձոր տո՛ւր(ս) կուգա»* (Գ, N 26): *«Տեղ եմ քրցել, փոնթ կրգա, Յարը յարի մոտ կրգա, Կարմիր խրնձոր բարձի տակ, Միջեն անուշ հոտ կրգա»* (Գ, N 9): *«Աղունորն ալ ներսէն ի դուրս, Ծոցը լիքը խրնձորով»* (Բ, N 14գ): *«Խրնձորը գրորել են»* (Բ, N 23, համբարձման երգ): Ինչպես նկատում ենք, բերված օրինակներում *խնձոր* մրգանունը բառակապակցված է *անմահական* և *կարմիր* ածականների հետ և, թերևս, ձեռք է բերել կայուն բառակապակցական միավորի արժեք:

**Խնձոր** պտղանվան հաճախադեպությունը կարելի է բացատրել Հայկական լեռնաշխարհին բնորոշ հատկանիշով, ծիսական բովանդակությամբ և հանրությանը լայնորեն ծանոթ, օգտագործելի լինելու հանգամանքով:

<sup>16</sup> Կոմիտաս Վարդապետ, Նամականի, «Մարգիս Խաչենց-Փրինթինֆո», Եր., 2009, էջ 39:

<sup>17</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Ջրերի և բույսերի պաշտամունք, Երկեր, հատոր Է, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1975, էջ 46-50: Ծան. սույն հոդվածում խաղիկներից ի մի բերած բուսանունները ներկայացրել ենք ըստ Մ. Աբեղյանի թվարկած բառափնջերի՝ հընթացս բուսատեսականիշ կամ լեզվական դասակարգման ենթարկելով դրանք:

<sup>18</sup> Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղիկներ..., էջ 48:

<sup>19</sup> Կոմիտաս Վարդապետ եւ Մ. Աբեղյան, Հագար ու մի խաղ: Ժողովրդական երգարան, երկրորդ յիսնեակ, № 18 (այսուհետև երգարաններից բերված օրինակները կնշենք Ա՛ առաջին հիսնյակ, Բ՛ երկրորդ հիսնյակ, Գ՛ ժողովրդական խաղիկներ, այնուհետև՝ ժողովածուի էջը կամ երգի համարը):

**Օիրան:** Ինչպես և ենթադրելի էր, *ծիրան* պտղանունը, որի լատիներեն գիտաբանը հայտնի է **Prunus Armeniaca** («հայկական սալոր») բառակապակցությամբ, հանդես է գալիս բարձր հաճախականությամբ: «*Օիրանն ի խասե, խաղողն ալաջաւ<sup>20</sup>, Երկու յար ունիս, մեկ խին, մեյ թագաւ*» (Գ, N 56, 57)<sup>21</sup>: «*Մի ծառ ունիս ծիրանի, Քամին տերն կը տանի*» (Բ, N 13գ): «*Օիրանի ծառ, բար մի տա, Ճրղներըդ իրար մի տա, Ամեն մեջդ ման գալիս, Ցաւերըս իրար մի տա*» (Բ, N 1ա): «*Օիրանի ծառ ծաղկել ա, Թուխ մագերըս թաղքել ա*» (Գ, N 130): Բերված օրինակներում *ծիրան* մրգանունը և *ծիրանի* ծառանունը ուղեկցվում են *խաղող, բար, ծառ, ճյուղ, տերն, ծաղկել* բուսաբաներով:

**Նուռ:** «Խնձորից հետո կարևոր տեղ են բռնում **նուռն** ու **նոնենին**», - փաստում է Մ. Աբեղյանը<sup>22</sup>: Չնայած մեր հայրենի բնությանը հարազատ են նուռն ու նոնենին, սակայն դրանք հատկանշող պտղանունն ու ծառանունը խաղիկներում հաճախադեպ չեն: «*Տանըս տակը կայ նըռնի, ես բարձ բերեմ՝ դու կըռնի, Ես, դու մի բաղում պիտենք, Դու՝ չինարի, ես՝ նըռնի*» (Բ, N 19): Տվյալ օրինակում ակնհայտ է *նըռնի-կըռնի* հանգավորումը:

**Շամամ** բուսանունն ունի գաղտնի սիրո խոստովանության, լրաբերի - խորհրդաբանություն: «*Բոստան եմ դրբե Վերն էն դարին... Շամամ մի չեղաւ, Ուղարկեմ եարին*» (Բ, N 21):

Մ. Աբեղյանը հավելում է, որ «մեր խաղերի մեջ հիշվում են ուրիշ ծառեր և այլ բույսեր, ինչպես են *շլորի (սալորի), պոպոք, պնդուկ, թթենի, բալի, ծիրանի, չինար, բարտի, ուռի, մոշի (մի խաղի մեջ՝ թուրինջ): «Ընկուզի ծառ պըտուղ կապեր, Պըսողէք դուք էլ էնոր նըման*» (Բ, N 46, ԺԳ): «*Չինար ես, կեռանալ մի*»: «*Չինար բոյիս ինչ կայ խըսուր*» (Բ, N 31): «*Ալուչի ծառ ծաղկեր էր, Մայրամը տակ պառկեր էր, Ալուչի ծառ կոճկեր էր, Մայրամու փոր տճկեր էր*» (Գ, N 131, 1-ին տարբերակ): Այս բանաստղում *կոճկել* բայն ունի «հասունանալ, կլորանալ» իմաստը, որով բնորոշվում է արձենու պտուղը, և ակնարկում է Մարիամի հղի լինելու հանգամանքը:

Հաճախ կոնկրետ ծառանվանը փոխարինում է *ծառ* ընդհանուր բուսաբանը, որին ուղեկցում են *ծաղիկ* կամ *ծաղկել* ձևաիմաստային միավորները: «*Գացիր, նըստար ծառի հով, Դեղիր գաչերդ ընքուերով*» (Բ, N 32): «*Թագաւոր թագն ի գըլուխ, Մառ ծուռ ու մուռ էր*» (Բ, N 42, Թ): «*Երկնից, գետնից սուրբ գորութիւնով Այն ծառըն ծաղիկ էր, Մառ ծաղկեցաւ, Մառ բազմեցաւ, Կանաչ ու կարմիր*» (Բ, N 48 ԺԵ):

«Էջմիածնայ սուրբ գորութիւնով» և «Լուսաւորչի սուրբ գորութիւնով» սկսվող այս կրկներգում ուշագրավ է *ծառըն ծաղիկ էր* արտահայտությունը. *ծաղիկ ծառ*, այսինքն՝ «ծաղկած ծառ»:

Ինչպես հավաստում է Մ. Աբեղյանը, խաղերում բավականին շատ են նաև

<sup>20</sup> Ալաջա՝ «գոյնգոյն»:

<sup>21</sup> Առկա բոլոր բարբառային տարբերակներում այս երկու տողերը կրկնվում են:

<sup>22</sup> Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղիկներ..., էջ 48-49:

ծաղիկների, խոտաբույսերի և բանջարեղենի անվանումները՝ *ծնեբեկ, սիրեխ, գոխ, դըրլան, խավարծիլ, մանդակ, մանդկու ծիլ, դանձիլ, քեղ, բոխի, կանգառ, շաղգամ, սոկոն, ուեհան, գագնոց, սարի խոտ, արոտ, փալախոտ, սեգ, եղեգն (դամիշ), սինձ, թրթնջուկ* և այլն<sup>23</sup>: «Եօթն օր, եօթ գիշեր, **Շաղկամն** ի գօտիս թոռմըշեր... Եարսի խոտվաւ, **Շաղկամ** թոռումաւ» (Բ, N 21): «Էսօր քեզ ապով էնքան են զարկած, Զիւմ արիւն գրգած **բաւթկով են** բրոնսած... Ինչ իմ աչք ընկաւ քու կարմիր երեսաց, Էնպէս ինչ **վարդ, ուեհան** վեր ձի չեն շարժած» (Բ, N 22): «Անուշ **ուեհան**, որ կը հոտեր, Անուշ բուրեր քո թագուհին»: «Կոտ ու կէս **կորեկ // գարի // ցորեն** ունիւմ ցանելու համար» (Բ, N 5): «**Յոնջեքը** կանաչել ա, Յարբս ինձ ճանանչել ա» (Գ, N 140 ա բ): «**Յոնջեն** նոր ա կանանչել, Աղջիկ տըղեն ճանաչել» (Գ, N 140 բ):

Այս երգաշարում հանդիպում են վարուցանքին նվիրված գործիքների անուններ՝ *մանգաղ, գերանդի, արոր, գութան, ցանել, հնձել* և այլն, որոնք միջնորդավորված առնչություն ունեն բուսական աշխարհի հետ: «Սարի **թրթրնջուկ** թագա, Մեղր ու շաքար քեզ մագա» (Գ, N 58), մյուս տարբերակներում առաջին տողը կրկնվում է հնչատարբերակներով՝ «Սարի թարթանջուկ» (Գ, N 58): «Սարի **թրթուր** մի թոզ ա, Ինձ պես նագանի յարը Քեզ պեսին ո՞նց սագա» (Գ, N 1), երկրորդ տողը այլ տարբերակով է՝ «**Ջավուզ մեխակ** քեզ մագա» // «**Ջավզ ու մեխակ** քեզ մագա»:

«**Բաւթակ են ցանե(լ) դոգա, Մի յար են սիրե(լ) թագա**»<sup>24</sup> (Գ, N 69): «Սարի ջուրը սառել ա, **Ղամեն** ձեռքս տարել ա, **Բաղի** միջի շեկ աղջիկ, Ուշքըս, միտքըս տարել ա» (Գ, N 152): «**Էն ծառին** ի նչ կըսագա, **Ճըղներին** զինձ կըսագա» (Բ, N 61):

Ըստ Մ. Աբեղյանի՝ շատ սիրված են վայրի ու մշակովի ծաղիկները՝ *անթառամ ծաղիկ, սուսան, աղբրանց արյուն, շուշան, ձնծաղիկ, կակաչ, պուտ, լալա, հորոտ-մորոտ, տուխտ, նարգիզ, նունուֆար, հիլ ու մեխակ* և այլն: Օրինակ՝ «Գնաց աշուն, եկաւ գարուն, Կաթեր ջրիկ աղբիրներուն, Երթար, լցվեր բարակ առուն, **Աղբրանց-արիւն** մէջ քարերուն, **Դեղին սուսուն** վեր սարերուն, Փունջ **մանուշակ** մէջ ձորերուն, Կանաչ կարմիր գոյն գոյն **ծաղկունք, Դաշտերն** ամեն էրունք, թրռչունք» (Բ, N 8): «**Անթառամ ծաղիկ, որ կը ծաղկի, Ծաղկեր քո արևուդ նըման**» (Բ, N 44, ԺԱ): «**Բալասան ծաղիկ, որ կը ծաղկի, Ծաղկեր քո արևուդ նըման**» (Բ, N 44, ԺԱ): «**Համասպիւռ ծաղիկ, որ կը ծաղկի, Ծաղկեր քո արևուդ նըման**» (Բ, N 44, ԺԱ), ապա և հաջորդ տողերում՝ **զիներբուկ ծաղիկ, սիրուն մանուշակ, գարնան վարդենիս, շուշան ծաղիկ, նարգիզ ծաղիկ, դեղին կակաչ, սարի սուսուն, աղբրանց-արիւն, ոսկեծաղիկ** (Բ, N 45 ԺԲ): «Բոյդ ի յասամի, երեսդ ի լալա» (Գ, N 106,107):

Ինչպես նկատում ենք, վերոբերյալ տողերում հաճախադեպ են ընդհանուր ծաղկատեսակ նշող «ծաղիկ» գոյականը և սրանով կազմված բարդությունները, ապա և՝ «ծաղկել» > **ծաղկալ** (Գ, N 131) բայը: «**Ծաղիկ ես ծաղկանց միջին, Մի հաստ ես աղջկանց միջին**» (Բ, N 27): «Թագու թ, ինչ բերեն քեզ նըման, Քո կանաչ արև

<sup>23</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղիկներ..., էջ 48-49:

<sup>24</sup> Մյուս տարբերակների հանգավորումը՝ *խոզան-թագան, խոզա-թագա*:

քեզ նրման, Էն արեգակն, որ կը ծաղկեր, Ծաղկեր քո արևուղ նրման» (Բ, N 43): «Քամին անուշ շրնկշրնկաց, Թուփն ու ծաղիկ տրնկտրնկաց» (Բ, N 39): «Արև նոր ա ծաղկեր ա, Յարբա ծաղիկ դրրկեր ա» (Գ, N 133): Այս հատվածում **ծաղիկ դրրկեր ա** արտահայտությունն ունի սիրո խոստովանության իմաստ, որով էլ հիմնավորվում է **ծաղիկ** բուսաբանի գործածության հաճախականությունը:

**Ծաղիկ** արմատով են կերտված **Ծաղկաձոր**, **Ծաղկեվանք** // **Ծաղկավանք** տեղանունները և **Ծաղկավոր** // **Ծաղկամոր տուն** // **Ծաղկի մեր** տոնանունը: «**Ծաղկաձորեն ձեն կիգա, Ծաղկամերը քներ ա**» (Գ, N 13): «**Ծաղկաձորը ձուն կրգա, Ծաղկավորը տուն կրգա**» (Գ, N 16): «**Ծաղկեվանքում ձուն կրգա, Ծաղիկները տուն կրգա**» (Գ, N 16-12, N 128): «**Ծաղկեվանք ձուն է եկել, Ծաղկի մեր տուն է եկել**» (Գ, N 16-2): «**Ծաղկավանքը ծաղկեր ա, Ծամեր գլխիս թաղքել ա**» (Գ, N 128): «**Սարեն ձորեն ձուն կրգար, Ծաղկավորը տուն կրգար**» (Գ, N 16-124):

**Ծաղկամոր տունը**, այսինքն՝ Համբարձման տունը, նշանավորվում է բախտախաղով կամ վիճակով, որի կարևոր բաղադրիչը **հորոտ-մորոտ** ծաղկի տեսակներն են: Դրանց խորհրդարանության մասին Մ. Աբեղյանը գրում է. «Այս ծաղիկների անունները կարելի է համեմատել Ameshā-Cpentas Haurvatat Ameretat անունների հետ, որոնցից յուրաքանչյուրին նույնպես մի ծաղիկ էր ձևված: Ameretat-ը միաժամանակ առողջության և լիության, հարստության աստվածն է, հավանորեն հայկական հորոտ-հարոտը և մորոտ-մարոտը սկզբնապես եղել են ջրերի և խոտերի ոգիներ, որոնք այժմ հանդես են գալիս որպես ծաղիկներ»<sup>25</sup>:

Վարդը նույնպես երգվում է վիճակի խաղերի մեջ իբրև կրկնակ<sup>26</sup>: Միրային երգերի բովանդակությամբ, վարդի ու բլբուլի սիրով պայմանավորված՝ **վարդ** ծաղկանունը և այդ արմատով բաղադրված **վարդահոտ**, **վարդենի** բառերը գործածված են մոտ 25 անգամ: «**Վարդ եմ քաղել մաղերով//շաղերով**» (Բ, N 19): «**Թագւոր բարով, հազար բարով, Դու վարդ ես կանաչ տերևով**» (Բ, N 41, Ը): Վերջին օրինակը կրկնեթղ է, որում **վարդ** ծաղկանունը հանդիպում է չորս անգամ (Բ, N 52, 134, 141): «**Ջուրն իր ճամբով կերթա, ցողածը վարդի թերթ ա**» (Գ, N 88): «**Քրներ ա, քրտորներ ա, Վարդն երեսին փովեր ա**» (Գ, N 141): «**Տեղ եմ քրցել, փոթ կը գա, Բարձիս տկից հոտ կգա, Մեռնեմ բոլոր քաքուլին, Միջեն վարդահոտ կգա**» (Գ, N 8):

**Վարդ** ծաղկանունը **կարմիր**, **քաֆուր** ածականների հետ կազմում է որոշիչ-որոշյալ բառակապակցություն «**Յարոջ դրոնով անցա ես, անձրև եկավ, թացվա ես, Արև զարկավ, թրփռա ես, Քանց կարմիր վարդ բացվա ես**» (Գ, N 128, 138): «**Առաւօտ լոր մտաւ արտ... Կու նրմանէր քաֆուր վարդ**»<sup>27</sup> (Բ N 27, 141): «**Վաղ ես կերթամ իմ հերանց բաղչէն...Իմ հերանց իգին Վարդ հազար թաւուր, Մէջ էն վարդերուն Իմ վարդն է քաֆուր Շահ բլբուլն իջաւ Վեր իմ վարդին հիւր**» (Բ, N

<sup>25</sup> Մ. Աբեղյան, Ջրերի և բույսերի պաշտամունք, էջ 55:

<sup>26</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղիկներ..., էջ 49:

<sup>27</sup> Կոմիտաս Վարդապետ եւ Մ. Աբեղեան, Հազար ու մի խաղ: Ժողովրդական երգարան, երկրորդ լիսնեակ, № 20:

22): «Իմ աղջիկը կրճնել ա, **Վարդը** ձեռին բրճնել ա» (Գ, N 128, 138): «Արև գարկե, չորցել ա, Քան **քաֆուր վարդ** բացվել ա» (Գ, N 27, 52, 134, 141): «Ջուրն իր ճամբով կերթա, Յողածը **վարդի** թերթ ա» (Գ, N 88): «Քրներ ա, քրտըներ ա, **Վարդն** երեսին փովեր ա» (Գ, N 141, 142):

**Ճաղիկ** ընդհանուր բուսանունը երգատողերում հաճախ հանդես է գալիս **ծառ** ընդհանուր տեսակ նշող բուսաբանի կամ կոնկրետ ծառանվան և այլ բուսանունների հետ: «Թագաւորին **ճաղիկ** պիտէր **ճաղկունաց**, **Ճաղիկն** էլ **ինչենի** պիտէր **ճաղկունաց**, Քաղենք, բերենք մեր թագաւորին, Որ փայթըթէր **ճուղն** ու **տերն** հետ իրրաց: ...**Ճաղիկն** էլ **խընկենի** պիտէր **ճաղկունաց**, Որ փայթըթէր **ճառնու ճաղիկ** հետ իրրաց: ...**Ճաղիկն** էլ **նրոնենի** պիտէր **ճաղկունաց**, Քաղենք, բերենք մեր թագաւորին, Որ փայթըթէր **թուփն** ու **տերն** հետ իրրաց: ...**Ճաղիկն** էլ **նրջենի** պիտէր **ճաղկունաց**, ...Որ փայթըթէր **ճութն** ու **տերն** հետ իրրաց» (Բ, N 47 ԺԴ):

Հարսանեկան այս երգում, որպես ծառանուն, համաբանությամբ կերտվել է **ինչենի** հարանունը:

Նույն երգաչաբում ճաղիկները թվարկելուն հաջորդում են ծառանունները՝ «**Միրանի ծառ**, որ կը ծաղկէր, **Մաղկէք դուք էլ էնոր նրման: Խրնձորի ծառ... Դամնի ծառ...**», ապա անցնում է գավակ ունենալու խորհրդաբանությանը՝ «**Թա գւոր, ինչ բերեմ, Խաղորդի ուռ կոճակ կապէր, Պըտկէք դուք էլ էնոր նրման... Պընտուկի ծառ պըտուկ կապէր...**» (Բ, N 45 ԺԲ):

Նշված երգատողերում **կոճակ կապել // պտուկ կապել** հարադիր բայերն ստացել են «պտկել, հասունանալ» բայիմաստը:

«Բավական հաճախ երգվում է մանուշակը, պակաս չափով և մեխակը (այլև **խարանֆիլ** անունով): Պակաս չի գովվում նաև «ծաղիկը» անանուն ճաղիկն ամեն տեսակի՝ **ճաղկի փունջ, ճաղիկ ցանել, ճաղիկ քաղել, սարի ալվան ճաղիկը, ճաղկունքը**, թե իրական ճաղիկները և թե նմանությամբ ասված»<sup>28</sup>: «Մեր թագվորին **ճաղիկ** պիտէր»: «**Տեսքով ես, համով, հոտով, Քան ըզճաղիկ խորտոխկ**» (Բ, N 15):

Բազմաթիվ բուսանուններ թվարկելուց հետո Մ. Աբեղյանը հիշատակում է ժողովրդական ընկալումներում ու պատկերացումներում դրանց վերագրվող հատկանիշների մասին: Այսպես՝ ըստ բանահյուսության՝ «Բույսերի թագավորը համարվում է լոշտակը՝ «Bryonia Alba», որը ոչ միայն շնչավոր, այլև մարդանման էակ է: Լոշտակի պտուղներն ու արմատները համարվում են կախարդական գավազան, որը մարդկանց ու գազաններին իմաստություն և զորություն է տալիս»<sup>29</sup>: Խաղիկներում չարից պաշտպանվելու խորհուրդ ունեն **մասրենին, փշենին, բոին // փոշնին** (Celtis Australis), ինչպես նաև **բոնչի** թուփը (Viburnum Opulus)<sup>30</sup>: Ինչպես նկատում ենք, Մ. Աբեղյանը վկայաբերում է նաև բույսերի լատիներեն գիտաբառերը:

<sup>28</sup> Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղիկներ..., էջ 49:

<sup>29</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հատոր Է, էջ 54:

<sup>30</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Ջրերի և բույսերի պաշտամունք, էջ 54:

Հարսանեկան երգերի մեջ բավականին հաճախադեպ են *ծառ* և *ծաղիկ* բուսաբան գույգերը: Ծառը խորհրդանշում է թագավոր փեսային, ծաղիկը՝ հարսին:

Ահավասիկ յոթտողանոց երգում՝ «*Գնացեք ասեք Թագուորամեր... Ծառը գոված է, Մէլ մի սեղան, Խոյ մի խորվու Ծառ գովողինն է*»: Կրկներգ՝ «*Գնացեք ասեք Թագուորահեր... Ծառը գոված է...*»: Այսպիսով՝ «...Եգ մի խորվու, Տիկ մի գինի Ծառ գովողինն է»: «*Գնացեք ասեք Թագուորաքոյր... Ուլ մի խորվու, Գառ մի գրնի (ճիշտ է), Ծառ գովողինն է*»: Կրկներգ՝ «*Գնացեք ասեք... Թագուորահարս... Չորս ջուխտ գուլբայ, Մի թաշկինակ Ծառ գովողինն է*»: «*Գնացեք, ասեք Թագուոր աղբեր... երկու ճրնճուղ Մէկ գարեհաց Ծառ գովողինն է...*» (Բ, N 49, ԺԶ): «*Մեռայ բարդում բանելէն, Մի կողմէն ջուր անելէն, Ծառերին թուփ չը սընաց, Դարդիս դարման տանելէն*» (Բ, N 6բ): «*Յար, յար, յարս քրներ ա, Հով ծաղի տակ քրտորներ ա, Հով, հով, հովը քրներ ա, Հունձ ա անում, բեգրեր ա*» (Գ, N 137):

Բազմաթիվ խաղերում մի շարք բուսանուններ ժողովրդի կողմից ընտրված են որպես խաղերգի բանաստեղծական տողը հանգավորելու միջոց: Հանգը «դաշնակավոր տարր լինելով հանդերձ՝ նաև ռիթմական նշանակություն ունի, այն է՝ նույն հանգերը կանոնավորապես և համակերպ կրկնվելով տողերի վերջում՝ ոտանավորի ռիթմական անդամատության հետ միասին ավելի զգալի և ցայտուն են դարձնում տողերի ամբողջությունը»<sup>31</sup>, - կարևորում է Մ. Աբեղյանը: Ժողովրդական երգերի անանուն հեղինակները արդեն իսկ Գողթան գուսանների ազատ տաղաչափությունը փոխարինել են հանգավոր տաղաչափությամբ: Օրինակ՝ կրկնակի կրկնությունն է առկա՝ «*Բաղես չորքկիւսը լոխ վարդ ա, Իմ յարը մի մագար մարդ ա*» (Գ, N 51): «*Վարենք, արտ անենք, Չարին դարդ անենք*» (Բ, N 4): «*Չորերս ի վեր հանդեր ա, Չուրը տունըս քանդեր ա*» (Բ, N 9գ): «*Ամպել ա բութա-բութա, Քո կերած կարմիր թուփ ա*» (Գ, N 93, N 96): «*Ամպը քրցել ա բութա, Կերածը կարմիր թուփ ա*» (Գ, N 97): «*Կերածըս կարմիր թուփ ա, Ինձ տվել են քեզ բութա*» (Գ, N 98): «*Կերածըս կարմիր թուփ ա, Յարիս աչքը կապուտ ա*»: «*Ամպել ա, երկինք մուր ա, կերածը կանաչ թուփ ա*» (Գ, N 99): «*Վարագա սար բացվե լալա, Եղունիկ բերի ջուխտըմ բալա*» (Գ, N 105, N 106): «*Աչքեր ունիս փիալա, Թըշերըդ կարմիր լալա*» (Գ, N 104): «*Լուսաւորչի ծառները Մատաղ անեմ գառները*» (Բ, N 2 բ): «*Ամեն ծառին մի փրջատ, Իմ աղջկա ումբը շատ*» (Գ, N 128, 138): «*Մաչքըդ պերակ շրմալ ա, Կոժըդ ծանդըր ճըմալ ա*» (Գ, N 111): «*Մարերը բարակ սեգ ա, Քաղել ես կակուղ բեգա*» (Գ, N 65. հանգերը՝ *թեգ ա*): «*Միբեղը գոխ է դառել, Իմ յարը դոխ է դառել*» (Գ, N 40):

Բուսաբանները հանգավորում ապահովելուց բացի, հաճախ դառնում են բանաստեղծական տողի տրամաբանական շեշտակիքներ: Այս հանգամանքը կարևորելով՝ Կոմիտասը գրում է. «Երաժշտութեան եւ լեզուի շեշտադրութեան օրէնքները սերտ կապ ունին իրարու հետ, երկուքին շեշտերն ալ, իրարմէ անբաժան ընթանալով, անքակտելի ներդաշնակութիւն պետք է ներկայացնեն»<sup>32</sup>:

<sup>31</sup> Մ. Աբեղյան, Երկեր, Ե, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971, էջ 345:

<sup>32</sup> Կոմիտաս Վարդապետ, Մի համեստ բանագոյ, Ուսումնասիրութիւններ և յօդուածներ, Գիրք Ա,



Ապա հավելում է, որ ըստ այսմ՝ «Նախ պետք է երգի խօսքերը լեզուական չափի վերածել, ապա հատուածների բաժանել, որպես զի լեզուի եւ եղանակի շեշտերն իրար համբուրեն»<sup>33</sup>: Օրինակ՝ «*Գարնան բացուեց նոր լալա, Խումար բերեց ջուխտ բալա*» (Բ, N 27): «*Գագերի սուր փրշերը, Հերիք պատռեն իմ փեշերը*» (Բ, N 26):

Հետաքրքիր են շուտասելուկի նման ասվող հետևյալ շեշտակի կրկնատողերը՝ «*Ուլն էր թրփուն, Թուփն էր իգուն, Իգ Վարագայ, Տակն ա գուգայ // Տակն ա կու գայ, Վրբես կու գայ*» (Բ, N 33): Բանաստղում ռիթմն ապահովվում է **թուփ** և **այգի** բուսաբառերի արագ կրկնությամբ: Այս երգ-շուտասելուկում քանիցս կրկնվում է նաև *հող* բառը. «*Օձն էր հողուն, Հողն էր մարդուն*»:

«Բույս» հասկացությանը հարակից բառաշերտ են նշում՝ *բար, այգի >իկի, իգի //բաղ, փունջ,արտ, հերկ, կայ, հունձ, պարտեգ, հաց, դաշտ, հող, ակոս, ծիր տալ* («ակոս անել»), *ծրել* («վարել») և այլն: «*Առել եմ ձեռքս փունջը, Թագ եմ կացել էս քունջը*» (Բ, N 25): «*Իրար հետ բաղը գրնանք*» (Բ, N 27): «*Մեր կալի տեղը փոս ա, Քար կրթալեմ կրտասա*» (Գ, N 72): «*Հաջոնց կայր բոլորպար*» (Բ, N 27): «*Մեր կալատեղը դուզ ա, Ձեր կալատեղը դուզ ա, Վո թր կանա ինձի ուզա, Իմ գին հազար մանեթ դուզ ա*» (Գ, N 71): «*Գացեք, տեսեք՝ ով է կերել այգին*» (Բ, N 158): «*Արտ եմ արել, հասել ա, Ղարդու միջին բուսելա*» (Բ, N 159): «*Գիշեր փոր է դուս ելա, Թուխ ամպ անուշ կրցուր, Ցոլա՛, ցոլալուդ դուլ եմ, Մարերու դաստազուլ եմ*» (Գ, N 159): «*Նստած տեղիս քար չունիմ, Էրուած սրբտիս ճար չունիմ, Ա՛յ անօրեն, փուջ աշխարհ, - Բաղ ունիմ ու բար չունիմ*» (Բ, N 1դ):

Ծիր տալ, ծրել բայերը «Հորովելի»<sup>34</sup> տարբերակներում հանդես են գալիս որպես աշխատանքի գովերգության խորհրդանշաններ: «*Ծիր տուր, հա՛ ծրենք, Գարմիր խրնձոր տուն, Հացն եկա ուտենք: Հողը սևանայ, Ծիրա՛ն ջան, Ուսրդ հովանայ: Արտը շատ քար է, Սև հերկին աշէք*» (Բ, N 4): «Հորովելում» Ծաղիկ եզ հատկանունը, ինչպես նաև *ակոս* բառը հանդիպում են մի քանի անգամ: Ինչպես նկատում ենք, աշխատանքի խորհրդանիշ ընտանի կենդանուն ժողովուրդը տվյալ դեպքում անվանադրել է իր սիրած բուսատեսակ նշող *ծաղիկ* բառով:

Կարոս խաչին նվիրված ընդարձակ երգում հանդիպում են հետևյալ բուսանունները և *բույս* հասկացությանն առնչակից բուսաբառերը՝ *դաշտ* (6 անգամ), *խնձոր, գարի, թզենի, թուփ* («տերև»), *ճյուղ*, և դրանցով կազմված բառակապակցությունները՝ «*Բողէ ուրձէն խաչ շինեցին, Թզենի թփով փաթաթեցին, Խնձորներ ոսկի դարձուցին*», «*Քառսուն ճիւղ կտիր ոչխար ունիմ*»:

աշխատասիրութեամբ Գուրգէն Գասպարեանի և Մարինէ Մուշեղեանի, «Մարգիս Խաչենց» հրատ., Եր., 2005, էջ 268-269: Հմտ.՝ Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, հավաքեց Ռուբեն Թերլեմեզյան, Պետիրատ, Եր., 1941, էջ 192:

<sup>33</sup> Կոմիտաս Կարդապետ, Մի համեստ բանագող, էջ 269: Հմտ.՝ Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, էջ 193:

<sup>34</sup> Կոմիտաս Կարդապետ եւ Մ. Աբեղեան, Հազար ու մի խաղ, Ժողովրդական երգարան, երկրորդ լիսնեակ, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1903, № 4:

Այսպիսով, ուսումնասիրությամբ պարզեցինք, որ Կոմիտաս Վարդապետի և Մանուկ Աբեղյանի արդյունավետ համագործակցությամբ իրականացված ազգանվեր աշխատանքի շնորհիվ ի մի են բերված հայ գյուղաշխարհի պարզ երգերն իրենց տարբերակներով: «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարանում ամփարված է ոչ միայն բարբառային հայերենն իր լեզվական ճոխությամբ, այլև փարթավ բուսաշխարհի հատկանշող բազմանուն բուսաբաներով: Բուսանուններն ունեն գործածության տարբեր հաճախականություն: *Խնձոր* և *ծիրան* մրգանունները, *վարդ* ծաղկանունը, *ծառ* և *ծաղիկ* ընդհանուր հասկացությունն ընդ բառերը աչքի են ընկնում բարձր հաճախականությամբ:

**АЙКАНУШ МЕСРОПЯН – Функционально-семантическая характеристика названий растений, используемых в народном песеннике Комитаса Вардапета и Манука Абегыана.**

– Исследование названий растений важно для общего изучения словарного запаса армянского языка, а также для распознавания растительности данной местности, языкового мышления населения, ареального диалектного языка, словосочетаний и фольклорных формулировок, некоторых реалий жизни и т. д. Сведения о флоре очень полезны для этимологии топонимов.

В результате исследования мы выяснили, что благодаря плодотворному сотрудничеству Комитаса Вардапета и Манука Абегыана простые сельские песни армянского народа объединены с их вариантами.

В народном песеннике «Тысяча и одна песня» нашли место диалектный словарный запас армянского языка и множество названий растений, характеризующих богатую флору Армении.

Названия растений имеют разную частоту употребления. С большой частотой выделяются названия плодов «яблоко» и «абрикос», название цветка «роза», слова, обозначающие общее понятие «дерево» и «цветок».

**Ключевые слова:** народная песня, название растения, диалект, фольклор, дерево, цветок, абрикос, яблоко, роза


**HAYKANUSH MESROPYAN – Functional-Semantic Characteristics of Plant Names Used in the Folk Songbook of Komitas Vardapet and Manuk Abeghyan.**

– The study of plant names is important for the general study of the vocabulary of the Armenian language, as well as to recognize the vegetation of a given area, the linguistic thinking of the population, the areal dialect language, phrases and folklore formulas, some realities of life, etc. Information about the flora is very useful for the etymology of place names.

As a result of the research, we found out that thanks to the productive collaboration of Komitas Vardapet and Manuk Abeghyan, simple rural songs of the Armenian people are combined with their variants. The folk songbook “A Thousand and One Songs” contains the dialect vocabulary of the Armenian language and many plant names that characterize the lush flora of Armenia. Plant names have different frequency of use. The names of apple and apricot fruits, the name of a rose flower, and words denoting the general concepts of “tree” and “flower” are highlighted with great frequency.

**Key words:** folk song, plant name, dialect, folklore, tree, flower, apricot, apple, rose

## ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԸ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԲԱՆ

ԲԱԳՐԱՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ\*   
*Երևանի պետական համալսարան*

Հոդվածում արծարծվում են գրական արևելահայերենի քերականության այն հիմնահարցերը, որոնց վերաբերյալ մոտ հարյուր տարի առաջ մեծանուն գիտնական Մանուկ Աբեղյանն իր հիմնավոր տեսակետներն է հայտնել և դա արել է իմաստաբանական, տրամաբանական լեզվաբանության սկզբունքներով: Խոսքը վերաբերում է հատկապես այսպես կոչված «անկախ դերբայները» ինքնուրույն բառեր համարելուն, բայի սեռը հակադրության երկու եզրով սահմանելուն, բայածանցներով ինքնուրույն բառեր ստեղծելուն, հարացույցում հինգ, շարակարգում ութ հոլով ընդունելուն և այլն: Մրանք անկյունաքարային նշանակություն ունեն ինչպես բառագիտության, այնպես էլ քերականության համար:

Հարաբերակցային տեսության հիմնադիրներ Է. Ադայանն ու Գ. Ջահուկյանը, կառուցվածքային լեզվաբանության նվաճումների վրա հիմնվելով, զարգացրել են նրա տեսության դրույթները հատկապես բայանունների, խոնարհման համակարգի, կերպի քերականական կարգի, հոլովների քանակի շուրջ: Ցավալի է, որ հայերենագիտության այս նվաճումները գրական արևելահայերենի նորմատիվ քերականության մեջ տեղ չեն գտել:

**Բանալի բառեր** – բառերի տեսակներ, գործառական ածանցներ, բայանուններ, անցողականություն-անանցողականություն, բայածանցներ, սեռի կարգ, կերպի քերականական կարգ, հարացույց, շարակարգ, հոլովների թիվը

Բազմավաստակ գիտնական Մ. Աբեղյանի գրիչն այնքան բեղուն է, որ նրա գիտական ժառանգության վերաբերյալ գոյություն ունեցող հետազոտությունների թվարկումը նույնիսկ կարող է լիարժեք չլինել: Մեծանուն գիտնականի ստեղծած տեսությունը տասնամյակներ շարունակ հայերենագետների ու-

\* Բագրատ Ներսիսյան – ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

Bagrat Nersisyan – доцент кафедры армянского языка ЕГУ

Bagrat Nersisyan – Associate Professor of the Armenian Language Department at YSU

Էլ. փոստ՝ nersisyanbagrat@ysu.am ORCID: <https://orcid.org/0009-0001-7102-3563>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 06.02.2024

Գրախոսվել է՝ 13.02.2024

Հաստատվել է՝ 14.02.2024

© The Author(s) 2024

սումնասիրության կենտրոնում է եղել, նաև՝ նրանց հետազոտությունների առանցքը: Թերևս, այլ կերպ չէր կարող լինել, քանի որ Մ. Աբեղյան տեսաբանը հիմնավորապես անդրադարձել է մեր լեզվի բոլոր մակարդակներին և փիլիսոփայի միայն իրեն հատուկ խորաթափանցությամբ իր մնայուն խոսքն է ասել հայերենագիտության մեջ: Մեծ ցավով է պետք նշել, որ վիթխարի վաստակի տեր գիտնականը չարաբաստիկ հանգամանքների պատճառով հետևորդների բանակ չի ունեցել, մինչդեռ պիտի ունենար: Կուռ տրամաբանությամբ ստեղծված նրա տեսությունը, որի հիման վրա են այլ տեսություններ առաջացել, նույնիսկ ոչ լեզվաբանական տերմինով «ֆորմալիստական» են հորջորջվել: Իմացաբանական դպրոցի ներկայացուցիչները պարզապես մեկուսացրել են ու ասպարեզից հանել մեծ գիտնականի ստեղծած գիտական քերականությունը: Դրա հետևանքն այն է, որ մինչև օրս քսանմեկերորդ դարի առաջին քառորդը, դպրոցներում և բուհերում դասավանդում են անցյալ դարի երեսնական թվականների իմացաբանական քերականություն:

Տպավորությունն այնպիսին է, թե նույնիսկ հարաբերակցային տեսություն գոյություն չի ունեցել մեզանում: Ճիշտ է, ցավոք, մեծ գիտնականներ է. Աղայանն ու Գ. Ջահուկյանը դպրոցական ու բուհական դասագրքեր չեն գրել իրենց տեսության հիման վրա, բայց նրանց մենագրություններն ինչպե՞ս կարելի է անտեսել. ի վերջո, հարաբերակցային տեսության հիմքը Մ. Աբեղյանի տեսությունն է:

Ջարմանալին ու անհասկանալին նաև այն է, որ երեսնական թվականների երկրորդ կեսից հետո մեր մեծ գիտնականների տեսության հետևորդները հիմնականում հողվածներով են անդրադարձել նրանց կարևորագույն դրույթներին՝ բացառյալ որոշ աշխատություններ: Դպրոցական և բուհական դասագրքերից կարելի է ստանալ տպավորություն, թե, իբր, երեսնական թվականներից հետո հայերենագիտությունն ընդհանրապես չի զարգացել:

Իրականում այդպես չէ, և ժամանակն է, որ իրենց դարը վաղուց ապրած և տրամաբանական քերականություն ու լեզու չուսուցանող դպրոցական ու բուհական դասագրքերը դուրս գան ասպարեզից և տեղը զիջեն նոր դասագրքերին, որոնք ժամանակակից լեզվաբանության չափանիշներին համապատասխանող դասագրքեր կլինեն: Ուրիշ լեզուների համար դա արդեն վաղուց են արել ու անում են: Պատահական չէ, որ մեզանում, ի տարբերություն ուրիշների, տիպաբանական, զուգադրական ուսումնասիրությունները թափ չեն առնում. դրա պատճառը եղած քերականությունն է, որը հնարավորություն չի տալիս զուգադրելու համարժեք լեզվական միավորներ և անելու ճշմարիտ գիտական եզրակացություններ:

Մ. Աբեղյանի տեսությունը, ինչպես նաև է. Աղայանի և Գ. Ջահուկյանի հարաբերակցային տեսությունը զարգացնելու դեպքում հնարավոր է հայերենագիտությունը՝ կոնկրետ արևելահայերենի քերականությունը, հասցնել ժամանակակից պահանջները բավարարելու աստիճանի: Կառուցվածքային լեզվա-

բանության մեր կարկառուն ներկայացուցիչները՝ Է. Աղայանն ու Գ. Ջահուկյանը, անցյալ դարի վաթսուներկան թվականներից մինչև դարավերջը հարաբերակցական տեսության նվաճումների շնորհիվ հայերենագիտությունը պահել են ժամանակի ամենաուսումնասիրված լեզուների մակարդակին, մեքենայական թարգմանության ասպարեզում իրենց անուրանալի ծառայությունն են մատուցել: Այսօր, արհեստական բանականության խնդիրներով պայմանավորված, աշխարհում թափ է առնում բովանդակային՝ տրամաբանական, իմաստաբանական լեզվաբանությունը (когнитивная лингвистика), իսկ մենք կարծես այլ մոլորակում ենք ապրում, մինչդեռ Մ. Աբեղյանի, Է. Աղայանի, Գ. Ջահուկյանի տեսությունների հիման վրա մենք այսօր կարող ենք ունենալ տրամաբանական, իմաստաբանական լեզվաբանության չափանիշներին համապատասխանող քերականություն:

Գուցե տարօրինակ թվա, որ մենք քսանմեկերորդ դարի լեզվաբանական ուղղությունը կապում ենք Մ. Աբեղյանի տեսության հետ, որը նա ստեղծել է մոտ մեկ դար առաջ: Իրականում մեծավաստակ գիտնականը հենց հարյուր տարի առաջ է ստեղծել տրամաբանական, իմաստաբանական քերականություն: Փորձենք համոզվել դրանում:

Սկսենք այսպես կոչված խոսքի մասերի դասակարգումից: Ջարմանալի է, բայց՝ փաստ: Տասնամյակներ շարունակ պնդում են, թե, իբր, Մ. Աբեղյանի դասակարգումը շարահյուսական է, թե, իբր, նրա տեսության համաձայն՝ խոսքի մասն ու նախադասության անդամը նույնն են: Հնարավոր է նման ծանր մեղադրանք հնչեցնել փիլիսոփայական գիտությունների դոկտորի հասցեին այն դեպքում, երբ նա բառագիտության իմաստաբանության մասում սահմանում է բառը որպես անուն, հասկացություն՝ որպես լեզվական ինքնուրույն, անկախ միավոր խոսքից դուրս: Խնդրեմ. «Բառն է նշանակություն ունեցող մեկ հնչյունը կամ մի քանի հնչյունների կապակցությունը»<sup>1</sup>: «Բառերն իրենց նշանակությամբ (ըստ իմաստի – Բ. Ն.) բաժանվում են երկու խմբի. 1) գաղափար նշանակող բառեր, որոնցով մենք խոսում ենք. 2) զգացմունք ու կամք ցույց տվող բառեր, որոնք խոսքի մեջ ոչ մի պաշտոն չկատարելով՝ խոսքից դուրս են մնում:

Գաղափար կամ պատկերացում ցույց տվող բառերն իրենց նշանակությամբ բաժանվում են երկու խմբի. 1) բառեր, որոնք ունին նյութական նշանակություն, մեծ մասամբ նաև ձևական նշանակություն. դրանցից կազմվում է խոսքը, ուստի և կոչվում են խոսքի մասեր (բայ, գոյական, ածական, մակբայ), 2) բառեր, որոնք ունին միայն ձևական նշանակություն և խոսքի մեջ ինքնուրույն մաս չեն կազմում, ուստի և կոչվում են խոսքի մասնիկներ (կապ, շաղկապ):

Խոսքի մասերն իրենց նշանակության համեմատ, ինչպես տեսել ենք (մատնանշում է 13-րդ կետը. «Նյութական կամ իրական նշանակություն ունեցող բառերի երեք մեծ խմբեր - գոյական, ածական և բայ» - Բ. Ն.), լինում են՝

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 5:

1) Բառեր, որոնք ցույց են տալիս հատկանիշ և դեմք, միաժամանակ և ստորոգում, այսինքն վերագրումը դեմքին: Այս բառերը մենակ կազմում են մի խոսք և կոչվում են բայ:

2) Բառեր, որոնք ցույց են տալիս ինքնակա գոյություն ունեցող կամ իբրև այդպիսին մտածված առարկաներ և կոչվում են գոյական, ինչպես՝ մարդ, ձի, ծառ:

3) Բառեր, որոնք ցույց են տալիս ոչ-ինքնակա հատկանիշներ, որ մտածվում են՝

ա) իբրև առարկայից անբաժան, առարկայի բնության մեջ մշտապես կամ ժամանակավորապես գտնված մի որպիսություն, գործողություն, դրություն և այլն և կոչվում են ածական, օրինակ՝ բարի (մարդ), վազող (ձի), ծաղկած (ծառ).

բ) իբրև առարկայի հատկանիշից անբաժան մի հատկանիշ կամ իբրև հատկանիշի հատկանիշ (պարագա) և կոչվում են մակբայ, օրինակ՝ խիստ բարի (մարդ), արագ վազող (ձի), ձին արագ վազեց:

Գոյականները, ածականներն ու մակբայները իրենց կողմից ըստ իրենց նշանակության բաժանվում են երկու երկրորդական տեսակների՝ անուն և դերանուն: Անուններն ունին անփոփոխ, հաստատուն նշանակություն, իսկ դերանունները հաստատուն նշանակություն չունին, այլ ամեն անգամ նայելով թե ինչ անվան տեղ են դրված կամ ինչ անվան են ակնարկում՝ նրա նշանակությունն էլ ստանում են: Անուններն էլ իրենց կողմից լինում են՝ անուն նեղ մտքով՝ թվական և դերբայ: Թվականն ունի թվի և համարքի գաղափար, դերբայը ցույց է տալիս բայիմաստ առանց դեմքի, իսկ անուն նեղ մտքով այն բաներն են, որոնք ոչ թիվ և ոչ էլ բայիմաստի գաղափար են ցույց տալիս: Արդ, բառերն (գոյական, ածական և մակբայ), ուրեմն, լինում են չորս տեսակ՝ անուն (նեղ մտքով), թվական, դերբայ և դերանուն: Այսպես՝

Ա. Գոյականները լինում են՝ 1. Անուն գոյական կամ գոյական անուն, հաճախ լոկ՝ անուն (տուն, փայտ, լավություն), 2. Թվական գոյական կամ գոյական թվական (տասնյակ, հիսնյակ, հարյուրյակ), 3. Դերբայ գոյական կամ գոյական դերբայ, կամ բայանուն, սովորաբար՝ անորոշ դերբայ (գնալ, ասել, գրել), 4. Դերանուն գոյական կամ գոյական դերանուն (ես, դու, նա, ինքք, սա, դա):

Բ. Ածականները լինում են՝ 1. Անուն ածական կամ ածական անուն (լավ, վատ, սև), 2. Թվական ածական կամ ածական թվական (մի, երկու, երեք, առաջին, երկրորդ, երրորդ), 3. Դերբայ ածական կամ ածական դերբայ կամ բայաձական (գրած, գրելու, գրող), 4. Դերանուն ածական կամ ածական դերանուն (այս, այդ, այն, սույն, դույն, նույն, իմ, քո, իր, մեր, ձեր):

Գ. Մակբայները լինում են՝ 1. Անվանական մակբայ (ազատորեն, քաջաբար), 2. Թվական մակբայ (երկիցս, երիցս), 3. Դերբայական մակբայ կամ բայական մակբայ (գալիս, գրելիս), 4. Դերանվանական մակբայ (աստ, անդ, ուր):

Խոսքի մասնիկներ՝ Ա. Կապակցական բառեր՝ 1. Կապեր, 2. Ստորադասական շաղկապներ, 3. Համադասական շաղկապներ, Բ. Եղանակական բառեր կամ մասնիկներ, Գ. Բացասական մասնիկներ՝ «ոչ», «չը», որոնցով կազմվում

են բացասական խոսքեր, Դ. Պատասխանական բառերը՝ «այո՛, ո՛չ»<sup>2</sup>:

Իր ընդդիմախոսներին պատասխանելու համար Մ. Աբեղյանը գրում է. «Ես իմ քերականությունների մեջ չեմ հիշատակել և չեմ առել «մասն բանի» և «մասունք -բանի» տերմինը, այլ գործածել եմ «բառերի տեսակներ»:

Ես իմ բազմամյա փորձից գիտեմ, որ միջնակարգ դպրոցն ավարտողներն անգամ հաճախ չեն հասկանում «մասունք -բանի» կամ «խոսքի մասեր» տերմինի նշանակությունը: Ինչո՞ւ այդպես: -Որովհետև «մաս» պիտի ասեն և «տեսակ» պիտի հասկանան: ... Ժամանակն է, որ խորհրդային իշխանության օրով դեն ձգվի այդ հնավանդ տերմինը ... և ասվի բառերի տեսակներ, ինչպես որ վաղուց գործածում են ֆրանսիական և գերմանական քերականությունների մեջ»<sup>3</sup>:

Կարծում ենք՝ պարզ երևաց, որ Մ. Աբեղյան փիլիսոփայական լեզվական իմաստակիր միավորը սահմանելիս չէր կարող դատողությունից հասկացություն գնալ. դա տրամաբանության օրենքներին կհակասեր: Ուրեմն միանգամայն օրինաչափ է, որ նա բառը սահմանում է բառագիտության իմաստաբանության բաժնում և հետո միայն առանձնացնում բառերի տեսակները: Սա նշանակում է, որ նրա որդեգրած սկզբունքը իմաստաբանական է և ոչ թե շարահյուսական, որ այսպես կոչված խոսքի մասերի դասակարգումը կամ, ավելի ստույգ, բառերի տեսակները տարրորոշելը բառագիտության խնդիրն է և ոչ ձևաբանության կամ, առավել ևս, շարահյուսության, որի դեպքում գործ կունենայինք նախադասության անդամները դասակարգելու հետ:

Այնուամենայնիվ, փորձենք հասկանալ, թե ինչն է պատճառը, որ մեծագույն տեսաբանի վերոհիշյալ դրույթները մեզանում քննադատության են ենթարկվել:

Համոզվեցինք, որ Մ. Աբեղյանը բառ է համարում գաղափար կամ պատկերացում, նյութական նշանակություն ունեցող լեզվական միավորները կամ, այլ կերպ ասած, հասկացությունները, որոնք առարկաների կամ հատկանիշների անուններ են: Դրանցից կազմվում է խոսքը՝ մտածությունը, ուստի և դրանք խոսքի մասեր են: Այստեղից է գալիս Մ. Աբեղյանի հանրահայտ արտահայտությունը՝ Մենք խոսում ենք բառերով, այսինքն՝ մտածում, միտք, խոսք ենք կազմում հասկացություններով և հետո միայն կարողանում խոսել, հաղորդակցվել: Առանց հասկացությունների, միայն խոսքի մասնիկներով մենք չենք կարող մտածել, խոսել, հաղորդակցվել, քանի որ, ըստ Մ. Աբեղյանի, դրանք զգացմունք ու կամք ցույց տվող բառեր են, որոնք, խոսքի մեջ ոչ մի պաշտոն չկատարելով, խոսքից դուրս են մնում, կան «...կապակցական բառեր, որոնք ծառայում են խոսքի մասերն ու խոսքերը միմյանց հետ կապելու զանազան հարաբերություններով... 1. կապեր, ... 2. ստորադասական շաղկապներ, ... 3. համադասական շաղկապներ ...»<sup>4</sup>:

Պարզ երևում է, որ խոսք, մտածություն, միտք, նախադասություն կազմում

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 127-131:

<sup>3</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ը, Եր., 1985, էջ 532:

<sup>4</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., էջ 130-131:

ենք բառերով, հասկացություններով, ուստի դրանք է խոսքի մասեր համարում Մ. Աբեղյանը, մինչդեռ դրանք կապակցող կապերն ու շաղկապները, ինչպես նաև եղանակական բառերը խոսքի մասնիկներ են, քանի որ միայն դրանցով մտածել, խոսել չենք կարող, մանավանդ եղանակական բառերով, որոնք ընդհանրապես խոսքից դուրս են: Հասկանալի է՝ վերջիններս խոսքի մեջ դիտարկելու տեսանկյունից է, որ դրանք խոսքի մասնիկներ է համարում՝ ընդգծելու համար էական տարբերությունը: Այստեղ խոցելին միայն այն է, որ դրանք էլ է բառ համարում: Մինչդեռ «խոսքի մասնիկ» բառակապակցությունը չի վեր հանում դրանց էությունը, այլ մատնանշում է խոսքի կազմում լինելու հանգամանքը:

Բառ է անվանում, ցավոք, նաև դերանունները, որոնք իրականում հասկացություններ չեն: Մակայն հետո դրանք բաշխում է համապատասխան բառերի միջև՝ հիմնավորելով, որ «անուններն ունին անփոփոխ, հաստատական նշանակություն, իսկ դերանունները հաստատուն նշանակություն չունին, այլ ամեն անգամ նայելով, թե ինչ անվան տեղ են դրված կամ ինչ անվան են ակնարկում՝ նրա նշանակությունն էլ ստանում են»<sup>5</sup>:

Հասկացական իմաստ ունեցող բառերի աբեղյանական իմաստաբանական դասակարգումը մեծ գիտնականի խոշոր ներդրումն է: Գիտական այս մեծագույն նվաճումը հիմք է դարձել, որ նրա հետևորդ Ա. Խաչատրյանը զարգացնի ընդունելի դրույթները և կատարելության հասցնի այս կնճռոտ խնդրի լուծումը: Իր «Խոսքի մասերի հարցումային դասակարգումը»<sup>6</sup> հողվածով հեղինակը, հենվելով Մ. Աբեղյանի իմաստաբանական դասակարգման վրա, համապատասխան հարցեր տալու եղանակով դասակարգել է հայոց լեզվի ողջ բառապաշարը: Մենք մեր հողվածով՝ փորձել ենք հայերենագիտության մեջ գոյություն ունեցող տեսակետների խորքի վրա ներկայացնել Ա. Խաչատրյանի մեթոդը, ուստի այստեղ չենք անդրադառնա դրան, բայց մի պերճախոս հատված Ա. Խաչատրյանի հողվածից կներկայացնենք:

Ա. Խաչատրյանի առաջարկած մեթոդի արդյունքները հիմնականում արդարացվում են ակադ. Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ և կադապարային դասակարգումներով: Ինչո՞ւ է այդպես: Ա. Խաչատրյանը դա բացատրում է այսպես. «... տարբեր սկզբունքներով կատարվող դասակարգումները չեն բացառում միմյանց: Յուրաքանչյուր դասակարգում, եթե նրանում հետևողականորեն կիրառված են դասակարգմանը ներկայացվող հիմնական պահանջները (դասակարգման հիմունքի միասնականություն, դասակարգվող միավորների փոխբացատրելիություն և այլն), այս կամ այն չափով գիտական հետաքրքրություն է ներկայացնում (կարելի է այն չընդունել, բայց հերքել հնարավոր չէ)»<sup>8</sup>:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 130:

<sup>6</sup> Ա. Խաչատրյան, Խոսքի մասերի հարցումային դասակարգումը, ԲԵՀ, 1986, հ. 3, էջ 56-65:

<sup>7</sup> Տե՛ս Բ. Ներսիսյան, Հարցերով բառերի տեսակներն առանձնացնելու մեթոդը, ԲԵՀ, 2017, հ. 2 (23), էջ 52-65:

<sup>8</sup> Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 63:



Խոսքի մասերի դասակարգումը կամ, ավելի ստույգ, բառերի տեսակներն առանձնացնելն անկյունաքարային նշանակություն ունի լեզվի՝ որպես գիտության համար, քանի որ և՛ ձևաբանության, և՛ շարահյուսության մեջ կարևոր է, թե բառերն ինչ բառաձևեր կարող են ունենալ և նախադասության կազմում ինչ պաշտոններ կարող են կատարել: Այս առումով, թերևս, ամենակարևոր հարցերից մեկը կարելի է համարել այսպես կոչված անկախ դերբայների բառային արժեքը պարզաբանելու խնդիրը:

Հայտնի է, որ Մ. Աբեղյանը բայանունը համարում է գոյական, ենթակայականը՝ ածական, հարակատարը՝ բայածական, համակատարը՝ մակբայ: Ընդունված է ասել, որ այս դասակարգումը գործառական բնույթ ունի, և որ սրանք դերբայներ են, այսինքն՝ անդեմ բայեր:

Մ. Աբեղյանն այս առիթով ասում է. «Իրարուց որոշ կերպով պետք է տարբերել բայ=դիմավոր բայ (verbum finitum) և դերբայ (verbum infinitum): Առաջինները ցույց են տալիս դեմք, թիվ, ժամանակ և եղանակ, իսկ երկրորդները դեմք, թիվ, ժամանակ ու եղանակ չեն ցույց տալիս: Սրանք բայերի բներից ածանցված գոյականներ և ածականներ կամ մակբայներ են: ...մի թե «դերբայական ձևերը» գործածությամբ են»<sup>9</sup>: Այսինքն՝ ուզում է ասել, որ սրանք առանձին, ինքնուրույն բառային միավորներ են և ոչ թե զուտ գործառական տարբերակներ:

Նախ ասենք այն մասին, որ դերբայ ընդունողների կողմանն այն է, որ դրանք բայ են, քանի որ ունեն բայիմաստ, սեռ ու խնդրառություն: Գ. Ջահուկյանը հակադարձում է. «Սակայն եթե նկատի առնենք, որ՝ ա) բայիմաստը Գ. Սևակի ըմբռնմամբ բայարմատային իմաստն է և կարող է հանդես գալ նաև բայանունների մեջ, բ) սեռը բուն արժեքով (ներգործական և կրավորական իմաստների հակադրությամբ) հատուկ է միայն անցողական բայերին, իսկ գ) խնդրառությունը ոչ միշտ է բացահայտ արտահայտություն ստանում (թույլ խնդրառության դեպքում), ապա կստացվի, որ այդ հատկանիշներն անբավարար են և որոշ կարգի բայերից ածանցված դերբայների ու բայանունների տարբերակման համար որոշակի հիմքեր չեն տալիս»<sup>10</sup>:

Գ. Ջահուկյանը այս դեպքում, այնուամենայնիվ հակված լինելով ընդունելու դերբայական համակարգ, առաջ է քաշում հարցերի մի ամբողջ փունջ և ասում, որ դրանք լուծելու դեպքում միայն կարելի է գործառական մոտեցումն արդարացնել, այսինքն՝ Մ. Աբեղյանի սկզբունքն ընդունելի համարել:

Առաջարկում է հետևյալ դրույթները: Նախ «...հարկ կլինի իրարից անջատել լոկ որպես վերլուծական բայահիմք հանդես եկող «անկատար» (-ում), «վաղակատար» (-ել/-ացել) և «ժխտական» («ժխտման») (ի/-ա) «դերբայները հիմնականում գոյականի, ածականի (որոշչի) և մակբայի (մակորոշչի և պարագայի) գործառություն կատարող անորոշ (-ել/-ալ), «ենթակայական» (-ող/-

<sup>9</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ը, էջ 588-591:

<sup>10</sup> Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի անդեմ բայաձևերը («դերբայները»), Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Բեյրութ, 2000, էջ 58:

ացող), «հարակատար» (-ած/-ացած), «ապառնի» (առաջին՝ -ելու/-ալու), երկրորդ (-ելիք/-ալիք) և «ընթացակցական» («անկատար երկրորդ») (-ելիս/-ալիս) «դերբայներից»<sup>11</sup>:

Չարմանալին այն է, որ հետագա շարադրանքում հենց ինքը Գ. Ջահուկյանն է լուծում իր առաջադրած խնդիրը: Ո՞րն է դա. իրարից անջատել վերլուծական բայահիմքերը անկախ, ինքնուրույն գործածվող լիմաստ բառերից՝ հասկացություններից. «Վերստին անդրադառնալով «դերբայների» գործառական բաշխման հարցին՝ մենք այժմ պետք է նշենք, որ այս տարբերակման ժամանակ նկատի է առնվում հիմնական գործառությունը, այլապես մի շարք դերբայներ զուգորդում են ոչ միայն բայական և ոչ բայական գործառությունները, այլև վերջին դեպքում էլ կարող են ենթարկվել խոսքիմասային փոխանցումների: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ ժամանակակից լեզվաբանության մեջ լայն հիմքեր նետած փոխակերպման գաղափարը հնարավորություն է տալիս բացատրելու դերբայական ձևերի ոչ բայական գործածությունները որպես գործառական փոխակերպումներ: ...Այսպիսով, կարելի է տարբերել ա) միայն բայահիմքային (-ում, -ել / -ացել, -ի/-ա), բ) հիմնականում գոյականական (-ել/-ալ), գ) հիմնականում ածականական (որոշային) (-ող/-ացող, -ած/-ացած, -ելու/-ալու, -ելիք/-ալիք) և դ) հիմնականում մակբայական (պարագայական) (-ելիս/-ալիս) գործածություն ունեցող «դերբայներ»: Մրանցից առաջինները հանդես են գալիս որպես վերլուծական բայահիմքեր, և մենք ..., որոշ չափով հաշվի առնելով ավանդությունը, դրանք մտցնում ենք անդեմ բայաձևերի ընդհանուր համակարգի մեջ: -ելիք/-ալիք ածանցով կազմվող «դերբայը» գրեթե հավասարապես գործածվում է որպես գոյական, ընդ որում առանց ի-ի ձևերը (-ելի/-ալի) ժամանակակից հայերենում զուրկ են «դերբայական» արժեքից»<sup>12</sup>:

Կարծում ենք՝ իր վերլուծությունները շարունակելով՝ Գ. Ջահուկյանն ավելի հստակ է ցույց տալիս իր վերաբերմունքն այսպես կոչված «անկախ դերբայների» կազմությանը. «Ասածից պարզ է դառնում, որ «դերբայական» ձևերի կազմիչների համար ճիշտ չէ գործածել «վերջավորություն» տերմինը: Դրանք գործառական ածանցներ են, այսինքն՝ ածանցներ, որոնք կատարում են միայն գործառական փոխակերպում, բայց ոչ նոր իմաստի հավելում»<sup>13</sup>:

Շարադրանքից երևում է, որ Գ. Ջահուկյանը, այնուամենայնիվ, այս դեպքում որպես ելակետ է դիտարկում այն, որ այս բառերը բայական հիմքով են կազմվում: Դա է պատճառը, որ փոխակերպման արդյունք է համարում առաջացած ոչ բայ բառերը, որոնք, իբր, գործառական նպատակով են ստեղծվել: Այստեղից է գալիս փոխակերպական, գործառական ածանց անվանումը:

Այստեղ, կարծում ենք, տեղին է Մ. Աբեղյանի հռետորական հարցը. «Մի՞ թե

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 67:

<sup>12</sup> Նույն տեղում էջ 69:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 71-72:

դրանք գործածությամբ են բնորոշվում»: Բացի այդ, ի վերջո, եթե դրանք անձանցներ ենք համարում, ինչպես որ անում է Մ. Աբեղյանը, ուրեմն պետք է ընդունենք, որ դրանք երկրորդական բառակազմական ձևայիններ են, և անկախ նրանից՝ դրանք իմաստահավելական նշանակություն ունեն, թե ոչ, նոր բառեր են կազմում:

Հետաքրքիրն այն է, որ հետագայում Գ. Ջահուկյանն իր «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» մեծարժեք աշխատության մեջ<sup>14</sup> նպատակ է հետապնդում գրական արևելահայերենի բառակազմությունն ուսումնասիրել իմաստաբանական մեթոդով: Այստեղ նա բայահիմքով կազմված բայանունների ու բայածականների և դերբայական գործառական ածանցների միջև հավասարության նշան է դնում, ավելին՝ համարում է, որ հենց վերջիններիս հիման վրա են դրանք առաջացել:

Գ. Ջահուկյանը գրում է. «Անցնելով ...դերբայական ածանցներից բուն ածանցներին՝ դժվար չէ նկատել, որ դրանք մասամբ կազմավորված են հենց դերբայական մասնիկների հին և նոր գործածությունների բազայի վրա՝ ունենալով որոշ հավելական տարրեր:

Ամենից առաջ առանձնացնենք այն ածանցները, որոնք գործառապես գրեթե հավասարաբաժեք են դերբայական ածանցներին և բայահիմքերից կերտում են գոյականներ, ածականներ և մակբայներ»<sup>15</sup>:

Սրան հաջորդում է այն, որ հեղինակը թվարկում է և՛ -ել, -ալ-ով կազմված -ելի, -ալի, -ելիք, -ալիք, նաև՝ -ած-ով կազմված -ածո, -ածու, -ածք, և՛ զուգահեռ է անցկացնում -ող-ի և -իչ-ի միջև, և՛ վկայակոչում է -անք, -այք, -ոց, -մունք, -իք, -ոց, -ություն, -ում, -ուստ, -ույք, -ք-ով կառույցները:

Սրանք նույն հարթության վրա քննարկելը նշանակում է, որ բոլորն էլ բայանուններ են: Համոզվելու համար համապատասխան հարցեր տանք. գրել, կարդալ - ի՞նչ անել=բայանուն, քանի որ կա, օր.՝ գրելուց, կարդալուց - ինչի՞ց, գալներդ - ձեր ի՞նչը, ածանցական կազմություն՝ կարմիր-կարմրել, երկրորդ-երկրորդել, -ող-ով կազմությունների դեպքում՝ ծնող՝ որպես հայր, մայր - ի՞նչ, ծնող՝ որպես նա, ով կամ ինչը, որ կատարում է, կատարել է կամ կկատարի տվյալ գործողությունը, հարցը՝ ի՞նչ, բայանուն: Սակայն այս բայանվան և նախորդի միջև տարբերությունն այն է, որ գրել, կարդալ գործողության անուն է, իսկ գրող, կարդացող բառերը՝ գործողություն կատարողի անուն (օր.՝ զիրք կարդացող): **Քնած** ավարտված գործողություն, հետևանք, վիճակ է, ուստի հարցն է ինչպիսի՞, այսինքն՝ բայածական: Խոսելիս բառի հարցն է ե՞րբ, այսինքն՝ գործողությունը կատարելու ժամանակահատվածը և ոչ թե գործողությունը, այլ կերպ՝ ի՞նչ անելու ժամանակ, ուրեմն՝ ե՞րբ կամ՝ այլ բնորոշումով՝ ժամանականիշ բառ, հասկացություն, ժամանակ ցույց տվող անուն:

<sup>14</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 47:

Կարծում ենք՝ ներքոհիշյալ եզրակացությունը բխում է վերոհիշյալ դատողություններից: Այն է՝ -ել, -ալ, -ող, -ացող, -ած, -ացած, -ելիս, -ալիս վերջնաձանցներով կազմվում են բայանուններ: Այն, ինչ ասում էր Մ. Աբեղյանը դեռևս մեկ դար առաջ:

Այժմ՝ այսպես կոչված «կախյալ դերբայների» մասին: Մ. Աբեղյանը սրանք դերբայ է համարում թերևս այն պատճառով, որ նկատի ունի ծագումը, այն, թե ինչից են առաջացել. անկատարը երգելում, կարդալումից, վաղակատարը՝ -եալ-ի հնչյունափոխության հետևանքով, ապառնին՝ բայանվան հոլովածնից, այսինքն՝ առանձին, ինքնուրույն բառից ու բառաձևերից: Թերևս, սա է պատճառը, որ սրանցով ու էական բայով կառույցները համարում է դերբայ+օժանդակ բայ: Սակայն այս մոտեցումը խոցելի է նրանով, որ Մ. Աբեղյանը սրանց հետ է կապում կերպի քերականական կարգը, որը, ինչպես Գ. Ջահուկյանն է նկատում, լեզվաբանության մեջ ընդունված կերպի քերականական կարգին չի համընկնում: Այս առիթով նշենք, որ նման կառույցների հիմք+վերլուծական վերջավորություն մոտեցումն է ավելի համոզիչ, ինչպես անում է Գ. Ջահուկյանը, քանի որ վերոհիշյալները բառ դարձնողը էական բայն է: Այս մանրահամակարգում վիճելին Գ. Ջահուկյանը համարում է -ելու/-ալու-ով կազմվածները, որոնք դիտարկում է որպես որոշչային տարբերակներ և հանում սահմանականի համակարգից: Ինչ վերաբերում է այսպես կոչված «ժխտական» դերբային, ապա Մ. Աբեղյանը համոզիչ վերլուծությունների հիման վրա կտրականապես հերքում է նրա գոյությունը և անվանում պարզապես «կուրյոզ»: Նա բերում է փաստարկներ, թե ինչպես են առաջացել **գրի**, **կարդա** բայաձևերը, այն է՝ չեմ ի գրիլ, չեմ ի կարդալ, և աներկբայորեն համոզում, որ դրանք **ի** նախդրի անկման և հետագա հնչյունափոխության հետևանք են, ուստի և ոչ մի նոր դերբայ էլ չի առաջացել:

Հասկանալի է, որ Մ. Աբեղյանը չէր կարող շրջանցել նաև լեզվի համակարգում կարևորագույն երևույթներից մեկը՝ բայի սեռի հարցը:

Կարծում ենք՝ պատահական չէ, որ բայի սեռը Մ. Աբեղյանը ներկայացնում է շարահյուսության բաժնում՝ **խնդիր** վերնագրի տակ: Մա թերևս նշանակում է, որ մեծ գիտնականը բայի սեռը դիտարկում է որպես գործողության և օբյեկտի խնդրի փոխհարաբերություն, ըստ այդմ էլ առանձնացնում է անցողական և անանցողական բայեր, ավելին՝ առարկայական և ենթակայական, այլ կերպ՝ ներգործական և չեզոք սեռի բայեր: Իսկ սա ենթադրում է, որ **-վ** և **-ցն** ածանցներով կազմվում են անանցողական և անցողական բայեր, որոնք նոր բառեր են. **-վ**-ով կազմվում են 1) բուն կրավորական (օր.՝ Արյունն արյունով չի լվացվիլ), 2) անդրադարձ (օր.՝ Նա լվացվեցավ, սրբվեցավ) 3) փոխադարձ (օր.՝ Նրանք համբուրվեցան), 4) չեզոք (օր.՝ Քամին շարժվում է մեղմիկ), իսկ **-ցն**-ով կազմվում են պատճառական բայեր (օր.՝ Վարժապետն աշակերտին ուրիշ տեղ նստեցրեց):

Պարզ երևում է, որ բայի սեռը Մ. Աբեղյանը ներկայացնում է որպես շարահյուսական և բառակազմական հատկանիշներով բնութագրվող լեզվական երևույթ: Այստեղ հնարավոր չէ, իհարկե, անդրադառնալ հետազայում բայի սեռին առնչվող բազմաթիվ ուսումնասիրություններին, սակայն չենք կարող չնշել, որ պարզապես անհասկանալիորեն հետազայում այն համարվել է ձևաբանական կարգ, երբ ոչ մի երկրորդական բառահարաբերական ձևույթ չկա նշված բայերի կազմության մեջ:

Հասկանալի է, որ Մ. Աբեղյանի գիտական ժառանգության մասին խոսելիս անհնար է չանդրադառնալ հոլովների քանակին: Մեր կարծիքով, և՛ Մ. Աբեղյանի ու նրա կողմնակիցների, և՛ վեց, յոթ հոլով ընդունողների տարաձայնությունների հիմնական պատճառը նրանց ելակետային դրույթն է՝ հարացույցի ու շարակարգի հակադրությունը: Կարծում ենք, որ դրանք չհակադրելու, այլ համադրելու դեպքում բոլորովին ուրիշ արդյունքի կարելի է հասնել, ինչպես որ մենք փորձել ենք դա անել<sup>16</sup>: Բնականաբար անհնար է անդրադառնալ բոլոր տեսակետներին, բայց Մ. Աբեղյանի մոտեցումը գնահատելիս պետք է նշենք, որ նա հինգ հոլով է առանձնացնում հենց հարացույցում՝ համարելով, որ այստեղ կա հինգ բառաձև, սակայն շարակարգում ստիպված է լինում բառերի՝ նախադասության անդամների քերականական հարաբերությունները ճշգրիտ ներկայացնելու համար դիմել այն հոլովներին, որոնք նրա հարացույցում չկան: Ուրեմն ի՞նչ է ստացվում. հարացույցում ունենք հինգ անդամ, շարակարգում՝ յոթ, նույնիսկ՝ ութ: Մի լեզվում կարո՞ղ է լինել հոլովման երկու համակարգ: Իհարկե, ոչ:

Նույնը կարելի է ասել նաև վեց և յոթ հոլովի կողմնակիցների ելակետի մասին:

Այսպիսով, մենք փորձեցինք անդրադառնալ մեծանուն լեզվաբան Մ. Աբեղյանի տեսության այն հարցերին, որոնք գրական արևելահայերենի քերականության հիմնահարցերը կարելի է համարել: Նրա և՛ համախոհները, և՛ հակառակորդները իրենց տեսություններում ու աշխատություններում նշված առանցքային խնդիրներին անդրադառնալիս միշտ որպես ելակետ են ունեցել Մ. Աբեղյանի տեսությունը, որը, ցավոք, մինչև օրս հանիրավի գիտական օբյեկտիվ ամբողջական գնահատականի չի արժանացել: Կան հաջողված վերլուծություններ, սակայն դրանց մեծ մասը, դժբախտաբար, որպես կանոն միակողմանի է, թերի ու կանխակալ: Պիտի սփոփվենք նրանով, որ հարաբերակցային տեսության մեր մեծ երախտավորները՝ Է. Ադայանն ու Գ. Ջահուկյանը, Մ. Աբեղյան տեսաբանի անուրանալի նվաճումները հասցրել են նոր՝ բարձր մակարդակի, սակայն նրանց նվաճումները ևս մնացել են որպես մենագրությունների սեփականություն, դպրոցական ու բուհական դասագրքերում պատշաճ տեղ չեն գտել: Ցավալի է:

<sup>16</sup> Տե՛ս Բ. Ներսիսյան, Յոթ հոլովի տեսությունը հիմնավորելու նոր մեթոդ, ՎԷՄ համահայկական հանդես, 2017, № 3 (59), էջ 106-117:

**БАГРАТ НЕРСЕСЯН – Манук Абебян - теоретик грамматики восточноармянского литературного языка.** – В статье затрагиваются фундаментальные проблемы грамматики литературного восточноармянского языка. Выдающийся ученый Манук Абебян почти сто лет назад создал научно обоснованное учение, основываясь на логические и семасиологические принципы лингвистики. Речь идет, в частности, об определении слова. В данном случае ученый учитывает его семантику. Причастия и деепричастия считает отдельными словами, то есть отглагольными именами и отглагольными прилагательными. Залог глагола определяет противопоставлением переходности и непереходности глагола. С помощью глагольных инфиксов создаются новые слова и соответственно меняется залог глагола. В парадигматическом ряду выделяет пять падежей, а в синтагматическом – восемь. Вышеизложенное имеет огромное значение, как в лексикологии, так и в грамматике восточноармянского литературного языка. Известные ученые Э. Агаян и Г. Джаукян, основываясь на теорию структурной лингвистики, развили теорию М. Абебяна о проблематичных вопросах касающихся отглагольных имён, глагольных инфиксов, глагольных наклонений, категорий залога и вида, проблем количества падежей и т.д. К сожалению, научные достижения выдающихся ученых не нашли должного места в нормативной грамматике литературного восточноармянского языка.

**Ключевые слова:** классификация слов, функциональные суффиксы, отглагольные имена, переходность – непереходность, категория залога, категория вида, глагольные инфиксы, синтагма, парадигма, количество падежей

**BAGRAT NERSISYAN – Manuk Abeghyan, a Theorist of the Grammar of the Eastern Armenian Literary Language.** – The article addresses fundamental issues in the grammar of this language. Manuk Abeghyan, nearly a century ago, developed a scientifically grounded doctrine based on the logical and semasiological principles of linguistics, particularly focusing on the definition of a word and considering its semantics. In this regard, he treats participles and gerunds as separate words, that is, as verbal nouns and verbal adjectives.

The voice of a verb is determined by contrasting transitivity and intransitivity. With the help of verbal infixes, new words are created and the voice of the verb changes, accordingly. In the paradigmatic series, he identifies five cases, and in the syntagmatic series, eight. This work is of great importance both in lexicology and in the grammar of the Eastern Armenian literary language. Renowned scholars E. Aghayan and G. Jahukyan, based on the theory of structural linguistics, developed M. Abeghyan's theory in problematic areas concerning verbal nouns, verbal infixes, verbal moods, categories of voice and aspect, and the issues of the number of cases, etc. Unfortunately, the scientific achievements of these outstanding scholars have not found their rightful place in the normative grammar of the Eastern Armenian literary language.

**Key words:** word classification, functional suffixes, verbal nouns, transitivity-intransitivity, category of voice, category of aspect, verbal infixes, syntagma, paradigm, number of cases



[ YEREVAN STATE  
UNIVERSITY ]  
PUBLISHING HOUSE